



Քաղաք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՈՒԿՐԱՏԻԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՐԹԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Լ. ՏՆՄԻ 1969 ԱՊՐԻԼ ԲԻՆ 4

**پاكين**  
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية  
 مدير المسؤول  
 السيد ارتين كارنيك قزائجياث

**PAKINE**  
 REVUE MENSUELLE  
 LITTÉRAIRE & ARTISTIQUE  
 Propriétaire  
 Dr. A. KAZANDJIAN

**Բ Ա Գ Ի Ն**  
 ԱՄՍԱԳԻՐ  
 ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
 ԵՒ ԱՐՈՒԵՍՅԻ

ՀԱՐՁ ԽՍՐԱԳԻՐ  
 Կ. ՄԱՍՈՒՆԻ  
 ԽՍՐԱԳԻՐ  
 Գ. ՍՆԱԳԵԱՆ

ԽՍՐԱԳՐՈՒԹԵԱՆ  
 ԱՆՂԱՄՆԵՐ  
 Յ. ԳԵՂԱՐԿԻ  
 Տ. ՈՍԿՈՒՆԻ  
 Բ. ՓԱՓԱԶԵԱՆ  
 Ն. ՊԱՐԹՅՈՒՆԱՆ  
 Փ. ԱԹՔԱՐԵԱՆ

ՀԻՄՆԱԳԻՐ ԱՆՂԱՄՆԵՐԵՆ  
 † ԵՒ ՊՅԱՅՄԱՆ

**ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ**

- Ա. ՀԱՅՎԱԶ
- Յ. ԳԵՂԱՐԿԻ
- Ն. ԶԱՐԵՈՒՏԵԱՆ
- Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ
- Ա. ԵԱՂՈՒՊԵԱՆ
- Ռ. ԳԱՌՕՆԷ
- Ա. ԱՐԾՐՈՒՆԻ
- ՇԱՀՊԱՆ
- Ն. ՊԱՐԹԵՒԵԱՆ
- Լ. ՄԿՐՏԶԵԱՆ
- Ա. ՕՐԱԳԵԱՆ
- Ն. ՊԷՇԻԿՈՒՆԵԱՆ
- .....
- ՆՇՄԱՐՆԵՐ
- ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Խմբագրութեան հասցէ  
**G. SASSOUNI**  
 Rue Sélim Boustani,  
 Beyrouth-Liban  
 Հեռաձայնի թիւ 296898

# Բազմը

## ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Ը. ՅԱՐԻ, ԲԻԻ 4

Ա. Գ. Բ. Լ. 1969

ԳԵՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՄ ՀԱՅԿԱՋ

### ԹՈՒՆՈՒՆԻՍ

Տղա, հարս, թոռ Մարզն ու թուսուհու Գարգենը մեզմէ 60-65 մղոն հեռու տեղ մը կ'ապրին, այնպէս որ չեմ կրնար ամէն օր դանտեք տեսնելու երթալ: Կ'ենթադրեմ՝ այդ է պատճառը որ անոնց շատ կը կարօտանամ: Մանուսնդ Գարգենը, որ աչքիս յոյսն է ու երջանկութեանս աղբիւրը: Ձեմ ամչնար խոստովանելու, թէ չորսին մէջ ամէնէն շատ գինքն է որ կը սիրեմ...

Մերուն է: Ես'տու իր սիրունութեան չափ ալ խելացի, ինքնազուտահ ու անկախ: Իմ ճանչցած իրեն տարեկից երեխաներուն մէջ իր նմանը չկայ: Բոլոր ընդգիմութիւնները հալեցնելու եւ իր փոփաքները կոտորել տալու զաղանիքը զիտէ:

Ամէն անգամ որ մեր տունը դայ, զինքը զիջ մը աւելի մեծցած կը դանեմ ու մատիտ մը առած, թաթիկէն բռնելով կը տանիմ կայնեցնել հիւրանոցի այն սպիտակ պատին տակ, ուր իր ամճան

կենսադրականը կայ զծիկներով ու թուականներով: Կ'անի՝ պարարտ հողի մէջ ինկած առողջ հունտի մը պէս, աճապարանքով: Իր տարիքը դեռ վեց չեզաւ ու արդէն զիտէ անունը ստորագրել, քանի մը պարզ նախադասութիւններ գրել ու կարդալ, նաեւ հեռաձայնել՝ ու այդ գործիքին մէջ մեծի մը լրջութեամբ խօսիլ: Արդիական տան մը բոլոր կազմաները զիտէ զործածել, ու զեւ կրնամ ընելը իր նշանարանն է՝ եւ օրուայ ընթացքին ամէնէն շատ զործածած նախադասութիւնը:

Ինքզինքը խնամակալ ու պաշտպան կարգած է իրմէ մէկուկէս տարու փոքր եղբոր՝ Մարգին ու դոյն առած իր հովանիին տակ՝ բաւ է որ ան ձեռք չտայ իր սեփականութեանց ու իր խաղալիքներուն, որոնք տիկնիկներ չեն յամենայնդէպս: Կերպրեկալէ (փլասթիք) շինուած կենդանիներ են, եղջերու, գառնուկ, կով, վագր, առիւծ, փիղ, մի,

Թունազգիներ եւայն: Ու նաեւ կառքերու եւ ինքնաշարժներու նմոշներ: Գիտէր ըրորին անուններն ու որ երկրէն ներսածուած, անոնց աշխարհի որ կողմը արտադրուած ըլլալը: «Աս վալիօ է, աս՝ Բուլ Բոյս, աս մէկը՝ Սիթրոյէն, ասիկա Բկաբլաք կամ Շէվի...»:

Եթէ մէկը սխալի ու իբրեւ նուէր տրուի ընդ իրեն, քաղաքաւարութեամբ զայն ընդունելէ ետք, կը տանի մէկ կողմ նետելու եւ մոռնալու: Եղբորմէն զատ ուրիշ մանչ չի սիրեր: Կ'երեւակայիմ, երբ իր տարիքը 12-13 ըլլայ, փոխուի զիջ մը, այն ատեն հեռաձայնը երբ զանգահարէ ու մենք լսափողը ձեռք առնենք կանչին պատասխանելու, պիտի ըսեն, թէ «որ- Գարէնին է որ խօսիլ կ'ուզեն», եւ կամ ինք միշտ հեռաձայնի գործիքին տակը պիտի ըլլայ, անընդհատ շաղկերատելով, ու միւս ձեռքը բռնած անտուրիչի մը մէջ փակագիծեր բանալով զարդուած: Թերեւս ալ իր ծնողքը ստիպուած ըլլան իրեն յատուկ հեռաձայնի գիծ մը հաստատել իր ննջարանին մէջ... Յաճախ պիտի բացակայի առունէն, ու ճաշի պահերուն յանկարծ յայտնուի՝ շնչատու թուշերը կարմրած: Երբեմն ալ պիտի կանչէ, ըսելու համար թէ «այսինչ կամ այնինչ ընկերուհիին տունն է ու ճաշի չըսպասեն իրեն»...

Անցեալ օր իր ծննդեան հինգերորդ տարեդարձն էր ու տոնխմբութեան հրաւիրուելիք իր տարեկիցներուն ցանկը ինք կազմեց: Երբ անոր մէջ չատ ծանօթ ու յաճախ յուսած քանի մը անուններու բազմակայութիւնը իր ուշադրութեան յանձնեցի:

— Կրէմփ, — ըսաւ, — դուն առ գործին մի՛ խառնուիր. ատոնց հետ յարաբերութիւններս իզած եմ...

Ապշեցայ:

Ինք կազմեց նաեւ սեղանին վրայ դրուելիք ուտելիքներուն ցանկը:

— Վրան «Հեփիլի պրքի տէյ» Կըրուած կարկանդակ մը, շամիչ, պիստակ, երեք տեսակ (վանիլա, գեղձ ու ելակ) պաղպաղակ՝ ու տէք իզ օլլ, — ըսաւ:

— Երբեք չի պաղպաղակը մոռցար, — ըսի:

— Չմոռցայ, ես շոքուալով պաղպաղակ չեմ սիրեր:

— Թերեւս հիւրերդ կը սիրեն, — առարկեցի:

— Ես չեմ սիրեր, կրէմփ...

Ու հարցը փակուած համարեց:

Օր մը հիւրեր եկան մեր տունը: Միասին բերած էին իրենց չորս տարու մանչուկը: Անտակ, աղմկալար ու անհանգստ լակոտ մը: Անոնց գալէն կէս ժամ ետք, հիւրանոց մտաւ Քարէն, մօտեցաւ ինծի, գրկեց գլուխս ու փոփոստը ըսաւ.

— Կրէմփ, ինչպէ՞ս վարուիմ այդ լակոտին հետ. վարուիմ այնպէս որ ալ չբերնի իրենց հետ, թէ ո՞չ այնպէս վարուիմ որ նորէն բերնի:

Ուրիշ օր մը, երկար բացակայութենէ մը ետք, երբ մեր տունը եկան, եւ զինքը թեւերուս մէջ առնելով ըսի, թէ «ո՞ր էր, շա՛տ կարօտցայ իրեն», ըսաւ որ հիւանդ էր ու հայրիկը բժշկի կոնյէց իրեն համար:

— Է՞, ո՞ր տեղը կը ցաւէր:

— Կը հազայի, շունչ չէի կրնար առնել... Իմիչկը թելեֆոնով խօսեցաւ փորեկիս ու կուրծքիս հետ, ու դեպ տուաւ:

— Լեղի է՞ր տուած դեղը:

— Ձէ՛, համով էր, գինիի համ ունէր:

— Դուն ե՞րբ գինի խմեցիր որ գինիին համը գիտես:

— Օր մը փափայտ գինիէն զիջ մը խմեցի:

— Գինովցա՞ր:

— Ձէ, գինովալու չափ չխմեցի:

Անցեալ ամառ, օր մը, հետս պատարագի տարի գինքը Սք. Գրիգոր Լուսուորիչ եկեղեցին:

— Կրէմ փա, ի՞նչ կ'ըսեն, ի՞նչ կ'ընեն:

— Կ'երգեն, կ'աղօթեն:

Յոյց տուի զգնատարուած պատարագիչը ու ըսի որ ան ու գպիւրները կ'երգեն ու կ'աղօթեն, իսկ ժողովուրդը քրտն կ'աղօթէ:

— Այնպիսի մարդ ո՞ր պիտի պատկի,

փիժմամանին ինչո՞ւ չեն հազած...

Ճ

Իրեկունը, երբ պատկեցուցինք զինքը, եւ համբուրուելիք ու բարի գիշեր մաղթելիք ետք լոյսը մարեցի, առարկեց.

- Լոյսը մի մարեր, կրէմ փա:
- Ինչո՞ւ:
- Կը վախնամ:
- Ի՞նչ բանէ:
- Փիղերէն, առիւծներէն:
- Այդ բոլորը անտառին ու դրքերուն մէջն են, հոս չեն կրնար դալ: Յետոյ՝ ես ու մեծ մայրիկը հիւրանոցն ենք, ձայնդ որ լսենք կը հանինք օգնութեան ու կը վրնակենք զանոնք: Յետոյ աղօթեցիր, չէ՞... Աստուած հոս է ու կը պաշտպանէ Քիւ:
- Կրէմ փա՞:
- Ձա՛գս:
- Կրէմ փա, փի՛ղգոգոգ: Եթէ կ'ուզես՝ Աստուածը հետդ տար, բայց լոյսը մի՛ մարեր:

Ճ

Օր մը իր ընկերուհիներէն մէկը կը պատմէ իրեն, թէ իր մայրիկը հիւանդանոց երթալով, ազբարիկ մը բերած է իրեն:

- Ես ազբարիկ ունիմ, բայց չեմ կարծեր, թէ մամա հիւանդանոցէն է բերած. մենք ամէն բան Վէյ կնտ Փի (\*):
- Ի՞նչն կը գնենք:
- Ի՞նչն խենթ ես, էյ կնտ Փին պէյպի չեն ծախեր...
- Տուն դալուն պէս, ըունչ առնելէ առաջ, վազեց մօրը քով:
- Մամա՛, զիս ուրիշ՞ գնեցինք:
- Հիւանդանոցն ես ծնած, - կ'ըսէ մայրը:
- Ես հիւանդ էի՞ որ հիւանդանոցն եմ ծնած:

Ճ

Արդեօք Մարտ ամսուն ծնած ըլլա՞նք է պատճառը որ լալն ու խնայը

(\*): էյ կնտ Փի Աքլաքիքի կնտ Փեւիփիք Թի Փըմփըմի: Մուսլան Սպարափառներու ըկեղեցուքիւմ մը:

իրարու կը խառնէ... Ձէ՞ որ այդ ամսուն մէջ ալ արեւն ու անձրեւը իրարու կը խառնուին ու իրար կը խաշածեն:

Ձինքը այնքան շատ կը սիրեն, որ երբեմն կը մտածեմ, թէ միայն իրեն համար է որ կ'ապրիմ ու զինքը երջանկացունելը կ'անջքս նպատակն է:

Հապիւ հինգ ամսու էր, երբ ծծակով կաթին չիւր մէկ կողմ նետեց ու սկսաւ կաթը բաժակով խմել:

Մէկ տարու չկար՝ երբ արտասանեց իր առաջին բառը:

- Յլաւը փաք (Թաղար), - ըսաւ: Այս բանին լուրը մեզի տուող մօրը աչքերուն մէջ արցունք կար:
- Ուրիշներու պատկերը «մամա» կամ «փափա» ըսելով կը սկսէին, - ըրողեց, սա փիւր Յլաւը փաք-ով սկըսաւ... Եթէ հայրը ծաղկեմշակ ըլլար, նորէն ձեռով մը կը հակնայի...

Ճ

Մեծ մայրը, իրեն, իր արին մեծութեամբ վարդապոյն պայուսակ մը գնեց, որ երբ փողոց ելլեն միասին, քովէն քալած պահուն ձեռքը բռնէ: Օր մը այդ պայուսակէն հինգ փեմեր հանեց, համբոց՝ ու ստաւ ինծի:

- Բեզի դրամ, կրէմ փա:
- Ենորհակալ եմ, դէր սեղանին վրայ:
- Հինգ բոպէ ետք զանոնք ժողուեց ու կրկին դրաւ պայուսակին մէջ:
- Ինչո՞ւ ետ կ'առնես, ինծի տուած չէի՞ր:
- Նորէն քուկը թող ըլլան, դնեմ պայուսակիս մէջ որ շմտին...

Ճ

Ամէն անգամ մեզի դալուն քանի մը օր վար կը գնենք զինքը ու մեծ մօրը հետ մրցման մէջ ենք, թէ ո՞վ աւելի շատ նուէր պիտի գնէ իրեն: Անհամար խաղալիքներէ դատ, աւելի քան քսան հաս մանկական զբաղանքներու պատկերազարդ հատորիկներ ունի, որոնք կը պահէ բարձին տակ՝ «որ կարդայ»:

- Անհանգիստ կ'ըլլատ այդ բոլորը

բարձր տակ, մէկ կողմ դնենք, - Ըսի օր մը:

- Չէ՛, կրէն փա, գիշերը քունիս մէջ կը կարդա՞մ:

Երկար մտածելէ ետք եկայ այն եզրակացութեան, թէ գիշերը կ'երազէ, ու առաւօտուն արթննալով, կը կարծէ՛ թէ քունին մէջ կարդացած է զանոնք:

Արդէն կը ճանչնայ բոլոր թուումներուն ու կենդանիներուն պատկերները, ու գիտէ անոնց բոլորին անունները: Ամէնէն շատ սիրած կենդանիները ձիերն են:

- Կրէն փա, Էրր մեծնամ ինծի ձի մը գնէ:

- Կը գնեմ, բայիկ, բայց ի՞նչ գոյն կ'ուզես որ ըլլայ:

- Հատ մը ճերմակ, հատ մը կարմիր:

- Աղէ՛կ, հատ մը ճերմակ, հատ մըն ալ կարմիր կը գնեմ:

- Չէ, կրէնփ, ճերմակը շուտ կ'աղատի, շոքոյալի գոյն ձի մը գնէ:

- Շատ լաւ, ձա՛գս, մէկ հատը շոքոյալի գոյն կը գնեմ:

Փողոցը խաղցած պահուն կնոջս բարեկամուհիներէն մէկը տեսնը էր զինքը ու շքարէնը տեսնել եկայ ըսելով մտաւ ներս: Մարիտուած աչքերով ու սեւ, շատ երկար արուեստական թարթիչներ դրած կին մըն էր: Քարէն ուշադրութեամբ նայեցաւ անոր գէմքին ու կնոջ երթալին ետք վազեց մեծ մօրը քով:

- Կրէն մա, այդ կինը բաքունի (կուղբ) կը նմանէր, - ըսաւ:

Ճ

Որովհետեւ հաց կերած պահուն - հանգարտ սեղան չի նստի ո՛ր - փըշրանքները հոս ու հոն չթափել կը պատահիրնք, նեղուած, ըսաւ:

- Ո՞ր սպուշը հոցը եփած պահուն մէջը փշրանք դրաւ...

Ճ

Ամառը, տաք օր մը, օձիքը բաց ու կարճ թեւերով շուպիկ մը հաղած կը հսկէի իր վրայ, մինչ ինք կը խաղար պարտէզին մէջ: Քովս կանչեցի, հարցնե-

լու համար, թէ ծարաւցած է, ուտելու կամ խմելու պող բան մը կ'ուզէ՞: Երբ զինքը վրկեցի, թեւերու վրայ անող մաղերու անտառը իր ուշադրութիւնը գրաւեց: ձեռքով զանոնք շոյիլու յարժում մը ըրաւ, ու, ճմեմ հայրիկ, թեւերուդ վրայ Փըզ կայ, ըսաւ:

- Այո, ձա՛գս, ամէն մարդու թեւերուն ու կուրծքին վրայ Փըզ կը բուսնի որոշ տարիքէ մը ետք:

- Կիներունը չի՞ բուսնիր:

- Ո՛չ:

- Մամայիս թեւին տակ Փըզ կա՞յ...

Ճ

Ուրիշ անգամ մը իր հօրաքոյրը ափ մը լեցուն փայլուն կեղծ դրամներ բերաւ իրեն իրբեւ խաղալիք:

Ուրախացաւ ու դրու, զանոնք իր պայուսակին մէջ:

- Քանի մը հատ ինծի չե՛ս տար, - հարցուցի:

- Չէ՛, կրէնփ, եթէ դուն դրամ կ'ուզես, գնա՛ պանքայէն առ, ասոնք իմս են, կրք քեզի տամ, վերջը կուլան:

Երկու թուղէ ետք, իր պզտիկ գլխին ինչ անցաւ դարձաւ չըրտեմ, եկաւ քովս:

- Կրէնփ:

- Այո ձա՛գս:

- Կրնամ հետդ նպարտմտնուին գալ ու իմ դրամներովս ծամոց գնել:

- Չէ, բայի՛կ, այդ դրամները միայն խաղալու համար են, անոնցովս բան չես կրնար գնել:

Յուսախաբուեցաւ: Ի՛նչմըր միջոց: Բացաւ պայուսակը ու բոլոր դրամները պարպեց ափիս մէջ:

- Ա՛ռ, կրէն փա, բոլորը քեզի, դո՛ւն խաղայ անոց հետ:

Բողբէ մը հոց, եկաւ քովս, մաղցեցաւ ծունկերուս վրայ ու իր ումէնէն քաղցր ժպիտով ուզե՛քը յուսաւորած, ըսաւ:

- Կրէն փա, ինծի քիչ մը դրամ տուր:

Քովս դրուած սեղանին վրայ դիպւած կեղծ դրամները ափով առի՞ ու Իրկարեցի իրեն:

- Ձէ՛նէնէ՛, ատոնք քո՛ւկդ են, քեզի

տուի՛, մոռցա՞ր... Գու գրամե՛զ տուր  
ինձի:

Ճ

Օր մը, դեանուպիով հետս նիւ Եւրթ  
տարի գինը: Երբ Իսթ Բիվլըրի տակէն  
կ'անցնէր փառուղին, «հիմա գետին տա-  
կէն կ'անցնինք», - բացատրեցի իրեն:  
Երբ տուն եկանք, վաղեց եղբորը քով ու  
վառ գոյնեղով նկարագրեց մեր ճամբոր-  
դութիւնը, որ ճամբորտ արկածախնդր-  
ութեան մը ընդմիջ ունեցած էր իրեն  
համար:

- Գետին տակէն ալ անցանք, - բա-  
ցատրեց, - բայց երբ պատուհանէն դուրս  
նայեցայ, ձուկ չկար դուրսը:

Ճ

Ինձի համար Քարէնը ամէն բան է:  
Ե՛ւ չարուն, Ե՛ւ ծաղիկ, Ե՛ւ երգ, Ե՛ւ  
ջուրի կարկաշ, Ե՛ւ շնչելու օդ, Ե՛ւ կա-  
պոյտ երկինք:

Կատուի մը չափ հետաքրքիր է, ազ-  
ւելի չափ խորամանկ, թռչունի մը չափ  
ճշտողուն, գառնուկի մը պէս բարի, գայ-  
լի չափ անսիրտ, եղջերուի չափ արագ,  
սուրբի մը պէս ճշմարտասօս, շուշանի  
մը պէս դիւրորակ, մաքուր՝ լերան ձիւ-  
նի պէս եւ առեղծուածային՝ կնոջ մը  
նման:

Կը սիրէ լաւ հաղուիլ, ծունկիս նըս-  
տիլ, աղմկել, հեռատեսիլի մեքենան  
խառնել, ճաշի սեղանը պատրաստելու  
համար մեծ մօրը օգնել: Կը սիրէ քաղցր  
բաներ, ծորակին առջեւ կեցած ժամերով  
հոտն ջուրին հետ խաղալ, մկրատ,  
թուղթ, գունաւոր մատիտներ, հեքիաթ,  
Երբ մեզի բերն՝ կ'ուրախանանք:  
Քանի մը օր ետք, երբ տանելու գան, նո-  
րէն կ'ուրախանանք որ պիտի հանդիմնէ:  
Բայց տարուելէն կէս ժամ ետք՝ տունը  
դարապ ու անհրապոյր կը թուի մեզի:  
Ամբողջ օրը, թիւրեւ քան անգամ իբր  
խօսքը կ'ընենք:

- Եթէ Քարէնը հոս ըլլար...  
- Ծուկան ելակ կար, մեղք որ Քա-  
րէնին հոս հղած ասան չկար որ դնէր ու  
կերցնէր՝:

- Վիքրիմի մը մէջ աղուր հազուատ  
մը տեսայ, ճիշդ իր չափն էր. գնեցի որ

յաջորդ անգամ տուներնին երթայնուս  
հետս տանիմ:

- Բան մըն ալ Մարքին համար առ-  
նէիր:

- Արի՛, սնոր համար ալ առի:  
Ուսանողութեան շրջանիս, զերակա-  
նութեան դասին «սիրելի բայը կը հոյո-  
վէինք, հիմա «Քարէն» կը հոյովենք...  
- Քարէն, Քարէնի, Քարէնով...  
Ինչպէ՞ս ըսեմ, ինչպէ՞ս հասկըց-  
նեմ...:

Քարէնով երջանիկ ենք: Իրենց տու-  
նը ծովափին վրայ է, երբ փոթորիկ է ու  
քամին սոնայ դուրսը, իր մասին կը  
մտածենք, շմախ՛, շմախ՛նա՛յ, հիւանդ  
չըլլա՛յ:

Առջի օր, երկար բացակայութենէ  
մը ետք, երբ մեզի բերն, վազեցի դէմ՝  
ու առի գինը թեւերուս մէջ:

- Ճանի՛կըս, ճանի՛կըս, ճանի՛-  
կըս...:

- Կրէմի:  
- Ի՞նչ է, հողիս:  
- Կրէմի, ճանիկս ի՞նչ ըսել է:  
- Ճանիկս՝ աչքիս լոյսը, հողիիս  
դուրբին, կեանքիս սիւնը, ծերութեանս  
միտթարութիւնը ու երջանկութեանս  
աղբիւրը ըսել է. հասկցա՞ր:

Ժիտականօրէն շարժեց իր սիրուն  
դուրսը:

- Ճանիկս կը նշանակէ, թէ մեծ հայ-  
րիկը քեզ շատ կը սիրէ:

- Որքա՞ն շատ:  
- Մովուն ջուրերուն չափ:  
- Կրէմի, Մարքն ալ կը սիրե՞ս:  
- Այո՛, բայց քեզմէ քիչ մը քիչ:  
- Որքա՞ն:

- Գաւաթ մը ջուրի չափ:  
Պահ մը մտածեց, ջուրերուն չափը  
աչքին առջեւ բերաւ հաւանաբար, բող-  
դատեց իրարու հետ, դո՛ւ եղաւ, ուրա-  
խացաւ ու թոմարուիկ թեւերը վզիս  
չուրջ օղակած ըսաւ, թէ ինք ալ գին շատ  
կը սիրէ, ծովուն ջուրերո՞ւն չափ:

Այդ պահուն եթէ ուզէր որ երկնքի  
աստղերը որսալով իրեն բերէր, առանց  
առարկութեան ճամբայ կ'ելլէր:

Ա. Հ.

3. ԳԵՂԱՐԴ

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Ա.

Ուզեցի ուրախ ինքնաշարժ  
Անձանօք մամբով, նայիլ՝ աստղերս՝ Ան,  
Գրեմեյի հեռուստոյ պարակ մ'անանուն,  
Գազիլ սէրն անքիծ մատնեբով անվարժ:  
Ոստիկան մ'ըսաւ. «Նըշան չե՞ս տեսներ,  
Գընա՛ կամ քաղաք, կամ ալ դէպի լեռ»:

Ուզեցի ազատ նստիլ օդանաւ,  
Ամպերէն անդին քըռիլ ծագէ-ծագ,  
Երմեյ արեւը, կապոյտը՝ անյա՛գ,  
Լեցուիլ Անհունի խորհուրդովն անբաւ:  
Հարցուց պաշտօնեան. «Կը համի՞ս ցոյց տալ  
Տամար ա՛յն երկրին ուր կ'ուզես երթալ»:

Ուզեցի քառիլ նաւու մը կայմին,  
Յանձնել վշտերը չուրերուն անափ,  
Թախառի՛լ... մտնալ քաղաք ու քարափ,  
Թերեւս գտնէի Երազիս կզգին...  
«Զըկայ, ծովուն վրայ, հանապարհ անծիր, -  
Ըսին, - Օրէ՛նք է, չունի՞ս անցագիր»...

Դարձայ ես յայնժամ խուցըս մեծաւոր,  
Տալի մատնեբուս փետուր ըսպիտակ,  
Թուղթով շինեցի նաւ ու սաւառնակ,  
Յանձնեցի անձնք սիրուն իմ վիրաւոր:  
Գըտա՛, ո՛վ հըրաշք, երգիս մէջ անհուն՝  
Ե՛ւ սէր, ե՛ւ քըռիչք, եւ ազատութի՛ւն:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Բ.

Թըռչունն երգեցիկ  
Դեռ հազիւ բացած կըտուցն իր լոյսին  
Ձեռք մը անձանօք խըլեց զինք հիւզէն  
Ու դըբաւ վանդակ.  
Ահարոն այդ մեծի՛կ...  
Աչքը մընաց դուրս՝ երկնի կապոյտին:



Զարկաւ օրն ի բուն  
 Թեւերն ազարծի բանոյի թելերուն,  
 Մերք ալ ցարս թառին մընաց գլխահակ.  
 Ջուրի փռիտարէն  
 Կաթիլ առ կաթիլ խըմեց միշտ արցունք,  
 Ապրեցուց սիրտը վըշտովն իր խորունկ:  
 Մեծցաւ օրէ օր՝  
 Յրագն իր ըրած յոյս ու ապաւէն:  
 Զարկաւ, մի՛շտ գարկաւ կըտուցն իր բասը  
 Բանտի թելերուն:  
 Եւ տեսաւ յանկարծ  
 - Հովէ՛ն թէ բախտէն -  
 Տըխուր վանդակին դրանակն - իրա՞ւ - բա՛ց...  
 Գերագոյն վայրկեա՛ն.  
 Սըլացէա՛վ Անտին  
 Ճիշտ՛վ մ'անստեման՛  
 Թըռաւ դէպի խոր երկինքը կապոյտ,  
 Անտեղեակ - ի՛նչ փոյթ -  
 Իր նակատագրին:

### Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Գ.

Հեղեղը պըզտար  
 Իր թափին գերի  
 Կ'երթայ սանձարեկ դէպի ծով ծախ,  
 Հեղեղը հըզօր  
 Կոհակ առ կոհակ  
 Կը տանի ծովին կեանքն իր նահատակ:  
 Սակայն կամակոր  
 Ճիւղ մը ծաղկափթիթ  
 Կը փշրէ շոթան յորձանքին վարար  
 Կը կատչի ժայռին,  
 Կանգ կ'առնէ. աչքին՝ արցունքը վըմիտ.  
 Կը դիտէ արեւն, աստղերն անհամար,  
 Կը դողայ հովէն,  
 Խոյս կու տայ ծովէն...  
 Ու մինչ կը վազեն ջուրերը պըզտար,  
 Ինք՝ նիւզ կամակոր  
 Կ'ապրի հոգեզմայլ խորհուրդը կեանքին,  
 Կ'օրորուի գինով գիրկը Անտունին:

Յ. Գ.

1968 թ.

ՆՈՒՊԱՐ ԶԱՐԽՈՒՏԵԱՆ

**ՄԱՀՈՒԱՆ ԿԱՄՈՒՐՋԸ**

( Վ Է Պ )

**Գ Ի Ր Ք Ա Ռ Ա Ջ Ի Ն  
ԱՂԱՂԱԿՆԵՐ ԱՆԳՈՒՆԴԷՆ**

ԳԼՈՒԽ Բ.

Տիգրան Պարթևեան կրկին ու կըրկին կարդաց հեռագիրը:

«Կը գտնուիմ Համա: Առողջութիւնս յաւ է: Պիտի հասնիմ իրգրաւ նայեմքեր ինկցին»:

ՄԻՔԱՅԵԼ ՊԱՐԹԵՒԵԱՆ

Մտեցաւ պատուհանին: Ի՞նչ դեղեցիկ էր օրը: Ուրախութիւնը կը սաւառնէր տուններու վրայ՝ վարդապոյն մշուշի մը պէս: Բակին մէջ, սեւ գոգնոցով տղաքը կը խաղային հսկիչներու ուշադիր նայուածքին տակ: Այսօր ասն էր իր հայրական սրահն համար: Իր սիրելի Միգայիլը կը դտնուէր իրզրումէն քանի մը հանդիման հետու: Մէկ շաբաթէն պիտի ըլլար հոս, չորս տարուան րաժանումէ մը ետք:

Այնքան երջանիկ էր, որ չլսեց մուսնետիկը, որ փողոցէ փողոց լիաթոք կ'աւետէր ընդհանուր զօրակոյը, այս 30 Հոկտեմբեր 1914-ի Ուրբաթ առաւօտով:

Բակի պատերէն անդին կը տեսնէր քաղաքի խիտ տունները, տանիքներու այդ դաշտը, որմէ կը ժայթքէին Ուլու ճամբի եւ Տշիլ ճամբի սյացիկ մինարէները եւ ուրիշ մինարէներ: Իսկ տեղտեղ, հայկական թաղի դարաւոր հովի-

ները, եկեղեցիներուն խաղաղ դմբէթները: Սուրբ Աստուածածին, Սուրբ Հըրշտակապետք, Քառասուն Մանուկ, Սուրբ Հռիփսիմէ: Իսկ քաղաքը չըջապատող զոյգ պարխապներուն փլատակները, վկաներն էին անոր խռովայոյզ ճակատապրին: Որովհետեւ, իրզրում, հռոմայեցիներու իբրզը, հայկական հին թաղաւորութեան մեծագոյն քաղաքներէն մին, բիւզանդական կայսրութեան պահակը բարբարոսներու դէմ, ձեռքէ ձեռք անցած էր, անտէր եւ անզաւակ այրիի մը պէս:

Տիգրան Պարթևեան նայեցաւ շքրափակը: Փողոցին միւս կողմը, Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիին հին-հին քարերը կը տաքային արեւի ջերմ ճառագայթներուն տակ: Ճիշդ այդ պահուն, հաւատացեալները սկսան խումբ-խումբ դուրս ելլել եւ հեռացան վիճարանելով:

Քահանան յայտնուեցաւ կողմնակի դռնէ մը եւ կանգ առաւ փողոցին մէջ: Մունետիկին ձայնը տակաւին կը լսուէր հեռուներէն: Տէր Գէորդ դիտէր արդէն անոր ըսածները: Յստակօրէն լսած էր անոր ձայնը, երբ կ'անցնէր եկեղեցիին քովէն: Քիչ մնաց վերջ տար ժամերդութեան եւ հաւատացեալները զրկէր իրենց տունները. սակայն անոնք այնքան երկիր-

դաժութեամբ կ'աղօթէին եւ այնքան մեծ էր անոնց անձկութիւնը, որ շուզեց զըրկել զանոնք աստուածային սիրտանքէն: Քահանան արագ քայլերով կտրեց փողոցը, որ կը բաժնէր եկեղեցին դըպրոցէն եւ մտաւ բակը: Հսկիչներէն մէկը մօտեցաւ իրեն.

- Օրհնեցէ՛ք, Տէ՛ր հայր, - ըսաւ, դու ինք խոնարհելով:

- Աստուած օրհնակա՛ն, որդի՛, - պատասխանեց քահանան, - ո՞ւր է Պ. Պարթեւեանը:

- Պարոն Տնօրէնը քիչ առաջ ելաւ իր գրասենեակը:

Քահանան քաւից աշակերտներու երամանեփ ճեղքելով: Սովորութիւն ըրած էր կանգ առնել անոնց մօտը, խօսիլ անոնց հետ, սիրալիբ խօսքեր ըսել, խըրատներ տալ: Իայց այսօր դանոնք չըկատեց իսկ: Բարձրացաւ հինաւերց շէնքին քարէ աստիճանները:

Պարոն Պարթեւեան, որ նկատած էր անոր զաւր, իրեն կը սպասէր գրասենեակին դրան մէջ, վայրկեան առաջ զայն մտանակից ընելու իր ուրախութեան:

- Քիչ առաջ հետադիւր մը ստացայ Արքայէջէն: Երէկ իրեկուն զրկած է Համայնէն: Կ'ըսէ՛ թէ շարաթէ մը էր դրոմ կը հասնի:

Սակայն քահանան բան մը չէր պատասխաներ եւ չէր բաժնէր իր ուրախութիւնը: Յանկարծ մօտեցաւ պատէն կախուած օրացոյցին եւ բարկութեամբ քաւից թերթիկը եւ զայն դրաւ սեղանին վրայ, Պարթեւեանի զարմացած աչքերուն առջեւ:

- Ինչո՞ւ տակաւին չես պատուած սա անիծեալ թուականը:

- Ինչո՞ւ անիծեալ թուական: Ընդհակառակն, օրհնեալ թուական, որովհետեւ զայն կը դտնեմ նաեւ. զուկիս զրկած հեռագիրին վրայ:

- Լա՛ւ յիշէ այս թուականը, Հինդը-շարթի, 29 Հոկտեմբեր 1914... Ժամերէ ի վեր դուժկան մունեախիլը փողոցները կը շրջի, եւ դուն տակաւին կ'ապրիս ուրիշ աշխարհի մը մէջ:

- Ի՞նչ մունեախիկ. ի՞նչ աշխարհ...

- Օսմանեան կայսրութիւնը պատերազմ՝ յայտարարած է Գերմանիոյ եւ Աւստրիոյ կողքին՝ Արեւելեան Համաձայնութեան դէմ: Կէս զիշերէն ի վեր կառավարութիւնը ընդհանուր զօրակոչ հռչակած է:

Տնօրէնը զարմացած, լայն-լայն բացաւ աչքերը.

- Պարոն Պարթեւեան, շատ մտահոյ էմ: Թուրքիոս ո՛չ մէկ պատճառ ունէր մտանակելու այս պատերազմին: Իր կայսրութիւնը ընդարձակ է եւ շատ մը ազդեցու նախանձը կը շարժէ: Արեւմտ, ներկայ ղեկավարներուն նպատակները ուրիշ են. - դաժնով յաղթողներու կողմը: Իրենք հաւատացած են որ Գերմանիան անպայման պիտի յաղթէ, եւ այդպիսով յառաջանալ դէպի Արեւելք եւ Երկրորդ՝ այս առիթէն օգտուել, վերջնականապէս լուծուած մը դտնելու համար ներքին կարգ մը հարցերու, եւ մանաւանդ հայկական հարցին:

- Իայց, Տէ՛ր Գէորդ, մի՛ մոռնաք որ հայկական հարցը զրեթէ կարգադրուած է իրենց հաւանութեամբ: Հայկական նահանգներու յատուկ դրութիւնը ճանչցուեցաւ մեծ ազդեցու կողմէ, ի միջի այլոց Գերմանիոյ եւ Աւստրիոյ կողմէ, որոնք Թուրքիոյ զաշնակիցներն են: Երկու եւրոպացի մարզպաններ նըշանակուեցան ըլլորին հաւանութեամբ: Կը խորհիմ, թէ եթէ մենք հաւատարմօրէն կատարենք մեր քաղաքացիական պարտականութիւնները, ոչ մէկ անհաճոյ բան կրնայ պատահիլ մեր հայրենակիցներուն: Եւ յետոյ, մի՛ մոռնաք որ որոշ քաղաքական հասունութիւն մը ունինք եւ պիտի շնորհուք որ կրկնուին 1895-ի եւ 1909-ի դէպքերը:

- Հասո՞ւն կամ ոչ, արդէն ինկած ենք թակարդին մէջ: Ի՞նչ կ'ընէ օսմանեան կառավարութիւնը երեք ամիսէ ի վեր: Անհաւատայի խոստումներով մեր զգուշութիւնը կը քնացնէ մեծ քաղաքներու մէջ, նոյն ատեն զալիքիւնները կը զրկէ թալանելու համար գիւղերը եւ շարժարելու համար գիւղացիները, այն պա-

տրբուկով, որ անոնք զէնք կը պահեն: Անդիէն կը գինէ շէրքէ զնեքը եւ քիւրտե-  
 բը: Որո՞ւն բողոքել, որմէ՞ օգնութիւն  
 ինչորեւ: Եւրպան ամբողջ կրակի մէջ է:  
 Ամերիկան, իր բարեսիրական երեւոյ-  
 թին տակ, միայն ու միայն իր շահերը  
 կը հետապնէ: Անոնց միտնոնարները կը  
 նախընտրեն թուրք տղայ ընդունիլ ի-  
 րենց զսրոցներէն նեքս եւ թուրք հի-  
 ւանդ մը ինամել իրենց հիւանդանոցնե-  
 րուն մէջ, քան հարիւր հայեր: Եւ դրժ-  
 րախառութիւնը հո՞ն է, որ մենք ջրուած  
 ենք այս ընդարձակ երկրին մէջ, ինչպէս  
 աստղերը երկնակամարին վրայ:

- Տէ՛ր Գէորգ, շատ յոռետես մի՛ ըլ-  
 լաք: Կատարենք մեր պարտականութիւնը  
 եւ մնացեալը ձգենք Աստուծոյ: Մենք  
 աշխատասէր ու խաղաղասէր ազգ ենք,  
 եւ կը ներկայացնենք պատկառելի թիւ  
 մը, մօտ երեք միլիոն:

- Երեք միլիոնի բաժնուած: Ձենք  
 կիցած երբեք բոլորս միասին ունենալ  
 նոյն նպատակը, նոյն երազը:

Լուցին, չխորացնելու համար իրենց  
 անձկութեան վիճը: Բակէն կը բարձրա-  
 նային յոնկարծական եւ զուարթ ազա-  
 ղակներ:

- Զուարթ՝ քանի մը օրուան համար, -  
 կը մտածէր քահանան: Եւ ինք որ ախա-  
 նատես հղած էր ուրիշ շարժերու, կը  
 լսէր ուրիշ ազմուկ մը, որ կը ժայթքէր  
 այս նոյն մանուկներու ճեղքուած կո-  
 կորդէն եւ կ'երթար ապտակել աստղերու  
 անտարբերութիւնը: Այդ տեղի պիտի  
 ունենար վայր մը, երկրին հարաւային  
 կողմը, Եփրատի երկու ափերուն, ուրկէ  
 պիտի բարձրանար ողբը հազարաւոր  
 էակներու, անմարդկային ճիշդ հազա-  
 րաւոր հրեշտակներու, որոնք կը ջախ-  
 ջախտին իրենց մօրը բազուկներուն ու  
 արզանդին մէջ: Եւ այս անգունդէն  
 բարձրացող աղաղակները պիտի վերա-  
 բարձնէ յաւիտանս երկրակամարին կա-  
 պոյրը:

- Ամէնէն կարեւորը, խուճապի  
 յմատուիչն է, - ըսաւ, - մարդ չի գի-  
 տեր պատահելիքը: Մեր առաջին գործը  
 պատիկները տուն գրկելն է: Պէտք է ան-

միջնակէ երթամ տեսնեմ միւս տնօրէն-  
 ները, որպէսզի պատրուակ մը դանկն  
 պարոցները զոցելու:

Քահանային սեւ սիւրուէթը պահ մը  
 ցծադրուեցաւ դրան բացուածքին մէջ,  
 յետոյ չգոյութեան մատնուեցաւ:

Տիւրան Պարթեւեան կը գտնուէր  
 պզտիկ պատշգամին վրայ: Բակը ամ-  
 բողջ կը տարածուէր իր առջեւ: Տղաքը  
 կը շարունակէին իրենց խաղերը ազմու-  
 կով ու եռանդով: Նոյնիսկ ամէնէն  
 հանդարտները եւ խելօքները կը մաս-  
 նակցէին վաղջերու եւ մրցումներու:

- Սեղճե՛ր, - մտածեց տնօրէնը, -  
 կարծէք նախազպարու մը ունին եւ կը  
 ջանան այսօր իսկ սպառել ու բախութեան  
 այդ բաժինը, որ Աստուած յատկացու-  
 ցած է իւրաքանչիւր մահկանացուն իր  
 կէսնքին ամբողջ տեւողութեան համար:

Նշան մը ըրաւ վերէն եւ հակիշը  
 դանդաղ քայլերով մօտեցաւ աստիճա-  
 նին, ուր կը գտնուէր պղտիկ զանգակ մը  
 եւ քաշեց շուանը:

Պատիկները դադրեցուցին իրենց  
 խաղերը եւ շարուեցան կարգի: Տնօրէ-  
 նին դէմքը աւելի լուրջ ու խիստ էր, քան  
 աստուան: Լուսթիւնը վայրկեանական ե-  
 դաւ:

Պարոն Պարթեւեան խօսեցաւ ցած  
 ձայնով: Ըսաւ՝ որ կամքէ անկասկապատ-  
 ճատներով զսրոցը պիտի զոցուէր քանի  
 մը օրուան համար: Խստիւ պատուիրեց  
 աղոց որ հնազանդ ըլլան իրենց ծնողքին,  
 չթափառին փողոցներու մէջ եւ մանա-  
 ւանդ յհետանան իրենց տուներէն եւ հայ-  
 կական թաղերէն:

Բոլորն ալ մնացին անշարժ ու լուռ,  
 փոխանակ ուրախութեան ճիշեր արձա-  
 կելու: Հսկիշը հրամայեց որ պատրաս-  
 տրէին մեկնելու: Պայուսակները կախե-  
 ցին իրենց ուսին եւ քալեցին դէպի ելքը:  
 Անձկութեան եւ սարսափի ախիւրներ կը  
 շրջապատէին գիւրերը: Իրենց արեան մէջ  
 կը կրէին գարեք տեւող հայածանցներու  
 եւ ջարդերու հետքերը, դարեր տեւող  
 ստրկութեան եւ նուաստացումի հետքե-  
 րը իրենց իսկ հայրենիքին մէջ:

Պարոն Պարթեւեան ուռուցիչները

Հաւաքեց իր շուրջը, եւ անոնց պարզեց կոցուծիւնը առանց յոռեանութեան: Յոյսով էր որ դասերը ծօա օրէն կը վերջոկարն եւ ամէն բան կ'ընթանար բնականաբար: Սակայն ձայնին թոնը համոզիչ չէր:

Լեւոնիկ հօրը կը սպասէր դրան առջեւ: Միասին, ինչպէս ամէն օր, ուղղւեցան դէպի տուն: Պարթեւեաններուն բնակարանը կը գտնուէր դպրոցէն ոչ շատ հեռու: Ընդարձակ բակով, երկյարկանի շէնք մըն էր, նման էր զորումի բարեկեցիկ բնասանիքներու բնակարաններուն:

Տան մէջ կը տիրէր տօնական մթնոլորտ: Պետադիրը կարողալէն ի վեր, Տիկին Պարթեւեան, իր աղջկան՝ Արփիին օգնութեամբ, պատրաստութիւններ կը տեսնէր իր զուկին ժամանումը տօնելու համար: Կը փոխէին սենեակին վարսադորները, բարձի երեսները, սաւանները: Դրացուհիներուն լուր տրուած էր, որպէսզի օգնութեան հասնին կերակուրներու եւ անուշեղջներու պատրաստութեան:

Տնօրէնին անակնկալ ժամանումը չբարձրեցուց կիներուն աշխատանքն ու ետօղորդը: Տիկին Պարթեւեան, խոհանոցին մէջ, կարկանդակի խմոր շաղիւղով զբաղուած էր:

- Այսօր, կամօք անկախ պատճառներով ստիպուեցանք զգրոցը կոցել, - յայտարարեց Պ. Պարթեւեան:

- Այսօրուան երկրորդ լաւ անակնկալն է, - պատասխանեց տիկին Պարթեւեան, դործը շարունակելով, - դուն ալ ճիշդ ժամանակին եկար: Ետտ կարեւոր դնելիքներ կան, քեզի ցանկը ասմ եւ շուկայէն բէր: Քանի մը օրէն Միքայէլը հոտ պիտի ըլլայ եւ տակաւին բան մը չենք կրցած պատրաստել:

- Անակնկալները միշտ լաւ չեն ըլլար, - ըսաւ Պ. Պարթեւեան, - ինչ որ է, դնուելիքներուն ցանկը տուր. ես թորոսին հետ կը զրկեմ շուկայէն: Միայն շուտ ըրէ՛, որովհետեւ շատ կարեւոր դործեր ունիմ կատարելիք եւ ժամանակը քիչ է:

- Ատտուն աւելի ուրախ ու զուարթ

էր. ի՞նչ կայ, Տիգրան: Արդե՞օք Միքայէլին դէշ բան մը պատահած է:

- Ո՛չ, Միքայէլին դէշ բան մը չէ պատահած: Ուրիշ մտահոգութիւններ ունիմ գործիս վերաբերեալ: Որքան լաւ պիտի ըլլար, եթէ Միքայէլ բանի մը տմիս ալ լօզան մնացած ըլլար: Այդ մասին կը խօսինք վերադարձիս:

Եւ առանց մտիկ ընելու կնոջ քացազանշութիւնները, դուրս ելաւ Արփիին խիտ կերպով յանձնարարելէ ետք, որ յակին դուռը դռնէ երկաթէ նիզով եւ քունայ միայն ու միայն ծանօթներուն տոջիւ:

•

Տէր Գէորդ դպրոցները մէկիկ մէկիկ այցելելէ ետք, դնաց առաջնորդարան, Եպիսկոպոսին հետ խորհրդակցելու: Բաղաքին բոլոր քահանաները հաւաքուած էին արգէն իրենց պետին շուրջ: Կացութիւնը ծանօթ էր ամէնուն, այնպէս որ ժողովը կարճ տեսեց, Պէտք էր անմիջապէս գործնական քայլեր առնուէին:

Եպիսկոպոսը, հետը տանելով Տէր Գէորդը, իբրեւ երէց քահանայ, գնաց Սէրայ, կառավարելին հետ տեսակցութիւն մը ունենալու համար: Վալին փութով ընտրուեց զիրենց իր պատանեակը: Խոհեմ ու խելացի մարդ մըն էր Թահաին պէյը եւ իր պաշտօնը կը վարէր մեծ հեղինակութեամբ: Կը ջանար խաղաղութիւն եւ հասկացողութիւն սերմանել իր նահանգի բնակիչներուն միջեւ: Այցեւորաներուն ապահովացուց, որ, ա՛յնքան ատեն որ ինք կառավարել կը մնար, իր նահանգին մէջ հայերը կրնային ապրել առանց մտահոգուելու իրենց ապահովութեան մասին:

Եպիսկոպոսը, որ ուրիշ զբաղումներ ունէր, Տէր Գէորդէն բաժնուեցաւ անմիջապէս: Քահանան ատեն մը երթեւեկեց Սէրայի նրբանցքներուն մէջ, կարեւոր թուղթեր ունէր ստորապրել տալիք: Բարեկեց կարգ մը ծանօթ զէմքեր, որ զինք շտեմանելու զարկին:

Տէր Գէորգ կը գտնուէր մուտքի ընդարձակ սրահին մէջ, երբ դէմը ելաւ իր տան դրացի Սիմոն Կազիրեանը: Խորհրդաւոր մարդ մըն էր Սիմոնը: Երկար տարիներ իրը հիւանդապահ՝ աշխատած էր Տոքթօր Մուրատեանի ձեռքին տակ, որուն նաեւ կ'ընկերանար շրջապատյուններու ընթացքին: Երեք տարի առաջ, բժշկիչը դինք արձակած էր գործէն անձանօթ պատճառով մը: Եւ նախկին հիւանդապահը, հակառակ որ անգործ կը պտտէր, կը վարէր աւելի ճոխ կեանք մը:

Սիմոն քահանային աջը առաւ եւ յարգանքով տարաւ շրթներուն: Կ'ուզէր լաւ տպաւորութիւն մը ձգել անոր վրայ, որովհետեւ քանի մը օր առաջ, հրապարակաւ յայտնած էր, որ Տէր Գէորգին հետ ինամիսնալու նպատակ ունէր, ահոր աղջկան՝ Շուշանիկին ձեռքը խնդրելով իր անդրանիկ աղուն՝ Արշակին:

Տէր Գէորգ զարմացաւ Սիմոնին ներկայութենէն Սէրայի մէջ, այսպիսի դէպք մը: Կազիրեան տուաւ հետեւեալ բացատրութիւնը.

– Երկու զուակներս սաացան զօրակոչի հրամանը: Այստեղ շատ բարեկամներ ունիմ պաշտօնեաներու մէջ: Պիտի ջանամ, անոնց միջամտութեամբ զուակներս զերծ պահել պատերազմէն: Եթէ հարկ ըլլայ, նոյնիսկ պիտի վճարեմ անոնց պիտելը:

Քահանան կը շարունակէր կասկածով նայել անոր աչքերուն մէջ:

– Ժանտարմաներուն հրամանատարը, – խոստացաւ կարգադրութիւն մը ընել, այսօր իսկ: Բոլոր երիտասարդները պիտի ստանան զօրակոչի հրամանը, ուշ կամ կանուխ: Պէտք է անպարհել, որովհետեւ ուշ մնացողները պիտի չկարենան որեւէ կարգադրութիւն ընել:

Տէր Գէորգ կամաց-կամաց իջաւ Սէրայի հինցած աստիճանները: Կ'իջնէր մեծ հրապարակը, ուր կը տիրէին հանապազօրեայ հուռզեղը եւ աղմուկը: Միայն համազգեստաւորներուն թիւը աւելցած էր: Հոկտեմբերի այս ջինջ երկինքին մէջէն, արեւը տակաւին կիզիչ ճառագայթներ կը թափէր ամբոխին

վրայ: Լիճոնատի վաճառորդները իրենց պղինձէ դաւաճանները իրարու կը զարնէին, եղանակ մը յօրինելով, պաղպաղակ եւ սիմիթ ծախողները զիրար կը խայծակէին: Անդին, զեպպ ծախողները իրենց սեկանները հաստատած մեծ ծառերու շուքին, փետուրէ հովաւարներով կը հրահրէին իրենց Վաղարշապատ կրակը, որոնց վրայ կը կարմրէին շամփարուած ոչխարի միսերը...

Տէր Գէորգ, աստիճաններու վրայէն, կը դիտէր հրապարակը: Հովը՝ որ կը փչէր ընդհատ ընդհատ, կը բարձրացնէր փոշիի ամպեր, եւ երբ կանգ առնէր, սօսիներուն լայն տերեւները կը դառնային ամբոխին վրայ, սոված բազէներու պէս, յետոյ կ'անհետանային գլուխներու ովկիանոսին մէջ:

Յանկարծ միտարէներու զառաքիններէն, միւէզդիները սկսան կարգաւ Ալլահին մեծութիւնը: Ամբոխը սկսաւ ծփալ, աղմուկները զաղբեցան եւ հաւասարեցաները, խուճ-խուճ ուղղուեցան դէպի մզկիթները, կէսօրուան աղօթքը կատարելու համար: Եւ այս հազարաւոր թուրքերը, հնազանդ մանուկներու պէս ներս կը մտնէին իրենց կոշիկները դրան առջեւ ձգելէ ետք:

– Պէտք չէ վախնալ ժողովուրդէ մը, որ այսքան կ'անցնի Աստուծոյ, – մտածեց քահանան այս հոգեյալ տեսարանին առջեւ:

Խեղճ, Տէր Գէորգ, որքան կը խորուէր երեւոյթներէն: Որովհետեւ, այս 30 Հոկտեմբեր 1914-ի Ուրբաթ օրը, բոլոր թուրքերը մզկիթներու մէջ չէին աղօթել: Հազարաւորներ կը սրէին իրենց զաշտները, կ'իւզոտէին իրենց հրացանները, ուրիշներ ճառեր կը խօսէին ամբոխները խելաղարելու համար եւ կ'ըսէին.

– Ձեզի ըսուեցաւ որ կեանքու մը սպաննել շատ լաւ է, բայց ես ձեզի կ'ըսեմ. մեծ պիտի ըլլայ ձեր արժանիքը, եթէ սպաննէք ահար ծերուկ մը, անտէր կին մը եւ մանաւանդ մանուկ մը, որ տակաւին կ'ապրի իր մօրը արքանդին մէջ, Ձեր սրտերը թող աւելի կարծր ըլլան, քան

մեր երկրին ժայռերը. եթէ տկարանաք կեանքուրք մը առջեւ, եթէ ձեր ձեռքը դողայ մանուկի մը օարսափած նայուածքին առջեւ, այն ատեն մեծ պիտի ըլլայ ձեր պատիժը դժոխքին մէջը:

Տէր Գէորգ դանդաղ քայլերով բռնեց վերադարձի ճամբան: Երէցիկներ եւ Շուշանիկը անձկութեամբ իրեն կը սպասէին դրան առջեւ: Հաղար տեսակ դաղափարներ շարձարած էին իրենց միտքը այս քունի մը ժամուան ընթացքին:

- Թորոզը տակաւին չվերադարձա՞ւ, - Հարցուց քահանան:

- Ո՛ր, - ըսաւ երէցիկներ, - շատ մտահոգ եմ իր մասին. կէսօրին հոս պէտք էք ըլլաք:

- Երեք օրէ ի վեր բացակայ է, - աւելցուց Շուշանիկ:

- Մտահոգուելու պէտք չկայ, - պատասխանեց հանդարտօրէն Տէր Գէորգ, - իրեն ըսած էի որ վերադարձի ճամբուն Իլիճա հանդիպէր եւ մեզի քանի մը պարկ ցորեն բերէր Ղուկաս աղբոր ջաղացքէն: Այնքան ատեն, որ Թահսին պէյ կառավարիչ է, մեղմէ ոչ մէկուն մտզին իսկ չեն կրնար դաշխել:

- Այո՛, Թահսին պէյ ուղիղ ու արդարատէր մարդ է. բայց ինք առանձին չէ, կան միւսները...

- Ո՞ր միւսները:

- Իթթիհատի մարդիկը: Իթթիհատականները շատ բան կը պարտին Հայրուս: Եթէ կրցան տեղ մը հասնել, այդ կը պարտին մե՛ր յեղափոխականներուն: Ձե՛մ կարծեմ որ անխոհեմ եւ ապերախտ գտնուին՝ իրենց բարեկամներուն վնասելու շահ:

- Թուրքին բարեկամութիւնը աւելի մտանդաւոր է, քան իր թշնամութիւնը:

Շուշանիկ պզտիկ տաշտ մը դրաւ Տէր Գէորգին առջեւ: Քահանան լուացուցաւ ու նստաւ իր տեղը, մինչ մայր ու աղջիկ, ցած լիկ սեղանին վրայ կը շարէին կերակուրները: Ընթրեցին առանց մեծ ախորժակի: Թորոզմին բացակայութիւնը ծանրօրէն կը ճնշէր մթնոլորտին վրայ: Եւ օրը կամայ-կամայ յանդեցաւ իր վախճանին: Թաղին ազմուկ-

ները մարեցան գիշերուան թանձր վարագոյրին ետեւը: Եւ ամբողջ քաղաքը մտաւ մեռելային անշարժութեան մը մէջ: Նոյնիսկ գիշերապահը, որ կը շրջէր իր երկաթածայր ծանր դաւաղանը զարնելով սալալատակին, այդ գիշեր շանցաւ հայկական թաղերէն:

Բայց ոչ ոք կրցաւ աչքերը փակել: Ո՛չ դահլճները, որովհետեւ անոնք կանխաւ կը գինովնային դաշիք զոհարերութիւններու անմեղ արիւնի հոտովը, եւ ո՛չ դոհերը, որովհետեւ անոնք կը զգային իրենց շուրջը թափուհարումները մահուան թափանցիկ թեւերուն, որոնց իւրաքանչիւր փետուրը գալոյն մըն էր, ուղղուած դէպի իրենց սիրտը:

Գ Լ Ո Ւ Ն Գ .

Հակառակ որ միլիոնաւոր լուսեղէն կէտեր կ'ստղագագդէին երկնակամարը, այդքան քերձակ ու պայծառ չբացուեցաւ: Արշալոյսը երկարօրէն վարանցաւ հորիզոնի գծին վրայ, արդիւշուհ համար արեւին երեւումը եւ ուշացնելու համար այս ողբի եւ սուգի օրուան սկիզբը:

Եւ գէպքերը սկսան ընթանալ սովորական նախաղիծին համաձայն: Մունետիկները կ'անցնէին թաղէ թաղ, աւետելու համար կառավարութեան վերջին հրահանգը: Վերադարձի՝ բնակիչներ, մտի՛կ ըրէք, լա՛ւ բացէ՛ք ձեր ականջները, վերջը շտեմի մի՛ ըսէք: Տասնըութ տարեկանէն վեր եղող բոլոր այն մարդիկը պէտք է քանընդորս ժամուան մէջ ներկայանան գորանոց՝ գինուորացրուելու համար: Անոնք որ պատերազմական զէնքեր պահած ունին, պէտք է զանոնք յանձնեն այսօր իսկ գինուորական իշխանութիւններուն, մուխթարին ներկայութեամբ»:

Եւ ձայները կը հեռանային, կը ազդարանային ու կը լսուէին հետունքէն, քաղաքին միւս թաղերէն, մինչ ուրիշ ձայներ, աւելի մօտերէն կը կրկնէին նոյն բաները:

- Տասներեթ տարեկան այր մարդիկ... Քսանըչորս ժամուան ընթացքին:

Եւ արդէն, կէսօր շեղած, խուզարկութիւնները սկսած էին հայկական թաղերու մէջ: Եւ տակաւին շարժացած վերքեր, հաղիւ մոռցուած վախեր, սկսան արթննալ ու կոտտացնել սրտերը: Թուհապը՝ որ կը քնանար քսան սերունդներէ ի վեր, արեան կաթիլներուն մէջ, օռնաց՝ ուղեղներու ամայութիւնը եւ անորոշութիւնը զրաւելու համար: Եւ ծերերը յիշելով անցեալի դառն օրերը, սկսան կուրծքերնին ծեծել, եւ զղջացին ծնած ըլլալուն, որովհետեւ կրկին պիտի տեսնէին անասնացած մարդկային դէմքեր եւ ամբոխներ, որոնց զրօշակին վրայ գրուած պիտի ըլլար սեւ գիրերով, քարդ, բռնաքարում, քայլան:

Փանտարմաներու ջոկատներ, մուսթարին ցուցմունքներուն վրայ կ'երթային տունէ տուն եւ մարդերը կը կանչէին իրենց անուններով: Ծառերը տակաւին նոր խմացած էին եղելութիւնը եւ ժամանակ չէին ունեցած պատրաստութիւն տեսնելու: Եթէ ուշանային դուրս գալու, ժանտարմաները ներս կ'ը խուսէին եւ մարակի հարուածներով փողոց կը նկատէին մարդը, իր ամբողջ ընտանիքով:

- Դաւաճաճ, կեաժո՛ւր, ո՛ւր ես, ինչո՞ւ կը պահուըտիս:

- Ձեմ պահուըտի՛ր, էֆէնտի, պատրաստութիւններ կը տեսնեմ: Մեղի քըսանըչորս ժամ պայմանաժամ տրուած է...

- Լուէ՛, անպիտան կեաժո՛ւր, - կը պոռար շա՛վուը, ապտակ մը իջեցնելով մարդուն երեսին: Գիտեմ թու ո՛վ ըլլալդ: Պատրաստութիւններ կը տեսնէիր կա՛մ փախչելու եւ կամ ալ զէնքերդ պահելու...

- Մենք զէնք շունինք որ պահենք, էֆէնտի: Մենք իաղաղ ու աշխատող մարդեր ենք, ի՞նչ պիտի ընենք զէնքով...

Կիցերով ու մարակի հարուածներով, մարդը կը հեռացուէր տունէն, առանց բառ մը կարենալ ըսելու իր կնոջ

եւ զաւակներուն, որոնք անկիւն մը կըմկըւած կ'ողջային ու կ'աղաղակէին աղիողորմ: Փողոցին ծայրը խուսմբ մը կը կաղմուէր այս խեղճերէն: Եւ օտարկանները զանոնք հրելով ու հրժուկելով կը ջըչէին առաջ, զէպի Սէրային հրապարակը: Ճամբու ընթացքին, Թուրքերը կ'անարդէին զիբենք եւ տղաքը քարեր կը նետէին անոնց:

Ուրիշ մը կը զարմանար ժանտարմաներուն պահանջը լսելով:

- Կը սխալիք, էֆէնտի, այս առտու իսկ Սէրայ դացի եւ պլոնէլ վճարեցի զաւակս եւ ինծի համար: Ահաւասիկ ըստոցաղբրները, կառավարութեան կնիքով եւ հազարապետին ստորագրութեամբ:

Ոչ ոք ականջ կը կախէր իր ըսածներուն: Իր բողոքներուն կը պատասխանէին հարուածներով: Ոչ ոք կը յօժարէր ուչք մը նետել այդ թուղթին վրայ, որ կը կրէր կառավարութեան կնիքը: Հայ մը իրաւունք չունէր հետու մնալու զինուորական ծառայութեան: Ի՞նչ էր հայը, վախելիլու համար այդպիսի մենաշնորհներ, որոնք վերապահուած էին միայն ու միայն Թուրքին: Միայն հաւատացեալի մը ձեռքը այդ թուղթի կըտորը կը ստանար պաշտօնական արժէք:

Պէտք էր մեկնիլ, որովհետեւ այդպէս որոշած էր հաղիւ կարգալ զիտցող օստիկան մը: Ոչ մէկ օրէնք ի զօրու էր պաշտպանելու համար այս ստրուկները, այս քրիստոնեաները, այս կեաժուրները, զորս Ալլահը յանձնած էր հաւատացեալներուն քահանայքին: Կա՞յ օրէնք մը, որ կը դատապարտէ ոչխարներու հօտ մը սպանդանոց զրկողը:

Ծարաթ մը ետք, քանի մը հողի տուն վերադարձան: Զանոնք ծեծած ու չարչարած էին առանց պատճառի, պարզապէս՝ որովհետեւ իրենց ողբերը եւ ցաւերը հաճոյք կը պատճառէին դահիճներուն: Ասոնք ընդհանրապէս տարբերուէին: Կային նաեւ արհեստաւորներ, որոնք ազատ արձակուած էին, որպէսզի իրենց տէրերը առանց կօշիկի եւ առանց հաղուստի չմնան:



Միևնեքը, որոնց մէջ տասներհինգ տարեկան պատանիներ կային, զրկուած էին ճակատ, պաշտպանելու համար թուրք հայրենիքը, որպէսզի քաղաքներու մէջ ապրողները հանդարտօրէն կատարեն իրենց ոճիրները: Ըարդեն անոնց անտէր թողած կիները եւ երեխաները, բունաբարեն անոնց կոյս աղջիկները, բնակին անոնց տուններուն մէջ եւ տէր դասնան անոնց ինչքերուն:

Երկու հարիւր հազար հայ զինուորներ, խռովին զիծի վրայ կը պաշտպանէին սահմանները. քաղաքը կը կատարէին իրենց պարտականութիւնը թըլնամի մը զէմ, որ նուազ վտանգաւոր էր, քան թիկունքի թուրք զինուորը: Երբեմն՝ երբ ընդհարումներ տեղի կ'ունենային, ետեի գիծը, որ ընդհանրապէս բազկացած էր թուրք զինուորներէ, կըրակ կը բանար թշնամիին կողմը եւ հարիւրաւոր հայ զինուորներ կը փոէր խըրամներու մէջ, զանոնք կ'ունակէն զարնելով: Այսպիսով կեանքները կը պակասէին աշխարհիս երեսին: Արեան հանդէսներ պիտի սկսէին շուտով:

Ճ

Աշնան զեղին ու զորշ օրերը թաւալեցան հատիկ-հատիկ ժամանակի համբիշին վրայ: Սպիտակ ժպիտով ձմեռը, ատեն մը հանդարտեցուց զազաններուն կատաղութիւնը, զանոնք արգելափակելով իրենց օրջերուն մէջ: Այդ տարի, հայ եկեղեցիներուն կոչնակները լուսմնացին եւ հայ տունները՝ փակ դռներու ետեւ, տկար մտմերու լոյսին տակ, ըացով ու կոծով սօնեցին Փրկչին ծնունդը:

Եւ հարաւէն, զանազազ ու երկչոտ քայլերով՝ զարունը բարձրացաւ հայկական բարձրաւանդակն ի վեր: Եւ անօթի դազանները սկսան ոռնալ զալիք խրախճանքները երեւակայելով: Որովհետեւ թուրքը կը սիւրէ իր հանգիստը: Ինչո՞ւ ահապարել, ինչո՞ւ ենթարկուիլ ձմեռան բուքին ու ցուրտին, երբ դաւոյն

կրող ձեռքերը կը զողզան, մկանները կը կծկուին: Նախընտրելի չէ՞ սպաննել զուարթ ու դաղլ արեւին տակ, երբ կարելի է ընտրել իր զոհը, եւ վայելել անոր շարշարանքները, առանց վնասուելու ընտելեան անյարմարութիւններէն: Մեծ ոճիրները ձմրան մութ գիշերներուն չէ որ կը զործուին: Ան որ մութին մէջ կը սպաննէ, կը վախնայ իր խիղճէն, կ'ամչնայ իր արարքէն, եւ վերջին դաստաստանին պիտի կրէ աւելի նուազ պատիժ մը, քան այն ոճրագործը, որ իր արարքը անբարտաւանօրէն կը զործէ ցերեկի լոյսին տակ: Այդ պատճառաւ, Օսմանի յաջորդները յօշոտեցին տկար մանուկներուն զիակները կապոյտ երկինքներու վրանին տակ, պայծառ օրերու խաղաղութեան մէջ, արեւի լլացուցիչ լոյսին տակ, այն ատեն՝ երբ ոճրագործներու գութը կը հալի սրտերուն մէջ:

Ապրիլը տարածուեցաւ աճէն կողմ, բայց արշալոյսները վարանոտ էին ու գորշ: Թուրք զինուորներ արձակուրդի եկան իրենց ընտանիքներուն մօտ, բայց ոչ մէկ հայ զինուոր բախտը ունեցաւ կրկին անցնելու իր տան սեմը եւ համբուրելու իր սիրելիներուն երեսները: Ոչ ոք զիտէր անոնց ուր ըլլալը:

Փողոցներուն մէջ կը սլքտային անթիւ զինուած խուճեք, որոնք զարնան առաջին օրերուն իսկ, իջած էին լեռներէն: Անոնք բազկացած էին աւազակ Քիւրտերէ, արիւնարբու Ձէրքէզներէ եւ բանտէն արձակուած ոճրագործներէ: Գիշերները կը քնանային խանութներու հովանիին տակ, շուկաներու գաղջ խաւարին մէջ եւ ցերեկները կը թափառէին հոս ու հոն, ինչպէս բորենիներ գերեզմաններու շուրջ, սպասելով իրենց ժամանան:

Այս կացութիւնը տիրեց մինչեւ 23 Ապրիլի զիշերը:

Այդ գիշեր, Հոննոթի ակերուն գոռացող թնդանօթները լռեցին եւ արեւելքէն բարձրացաւ թուրք վահաններուն ոռնոցը: Եւրոպայի գետերը ներկըւած էին կրակով եւ ծծումբով, մինչ

Տիրիսի եւ Եփրատի ջուրերը կը սարքը-  
 նային դալիք սպանդերու տեսիլքով։  
 Երկրագունդի ամբողջ տարածութեան  
 վրայ, միլիոնաւոր բերաններ կը պոռա-  
 լին իրենց ատիւութիւնը, միլիոնաւոր  
 բազուկներ զէնքեր կը ճօճէին հակա-  
 ռակորդին դէմ։ Բայց հոս, սուր ժա-  
 նիքներով եւ նեխած շունչով, անօթի  
 դայիք կը հեւային անզէն եւ խաղաղ  
 սուներու շուրջ, ուր պատսպարուած  
 էին անպաշտպան զոհերը։

Երկրէ միլիոն անտէր երեխաներ,  
 կիներ եւ ծերեր կը դանուէին քսան մի-  
 լիոն դահլիճներու տրամադրութեան տակ։  
 Տաւը դահլիճ մէկ զոհի համար։ Ի՞նչ  
 լար բախտ, ի՞նչ դառն ճակատագիր։  
 Գոնէ մէկ դահլիճի մէկ զոհ իշար։ Ինչ-  
 պէ՞ս տեղ ապահովել Յէննէքին մէջ,  
 երբ իրենց ըսուած էր, որ դրախտ մըտ-  
 նելու համար, իւրաքանչիւր հաւատաց-  
 եալ պարտի զոնէ մէկ կեալուր սպաննած  
 ըլլալ։ Մինչ իրենց քսան միլիոն էին եւ  
 զոհներ՝ միայն երկու միլիոն։ Ուրեմն  
 միայն երկու միլիոն հրանելիներ պիտի  
 ըլլային, միայն երկու միլիոն բախտա-  
 լորներ պիտի կարենային մարդկային  
 զոհ մը մատուցանել իրենց Մոլոտին, եւ  
 իրենց արհնւումայ ձեռքերը ցոյց տալով  
 պիտի կարենային ներս անցնիլ դրախտի  
 դռնէն։

Պիտի յիշէ՛ս արեւ, այդ անվերջա-  
 նալի օրերը՝ այդ անձոռանալի՛ օրերը,  
 որովհետեւ հուրէ դէմքիդ վրայ կը պա-  
 հես տակաւին արեան բիծերը, որ ժայթ-  
 քեցան մինչեւ քու բարձրութիւնդ։ Եւ  
 դո՛ւն՝ զայրացած, զինովցած կը դան-  
 դաչէիր անհունութեան մէջ եւ մէկէ ա-  
 ւելի անգամներ, ճակատդ դարկիր ան-  
 դութ հրկնակամարին կարծր բերեղին։  
 Պիտի յիշէ՛ք աստղե՛ր այդ սեւ օրերը,  
 երբ ցերեկով կը զիտէիք երկիրը, հա-  
 կատակ որ արեւը ձեր առջեւ կը տարա-  
 ծէր իր շլացուցիչ վաթազոյրը։ Պիտի  
 յիշէ՛ք ու պիտի լա՛ք, աստղե՛ր, որով-  
 հետեւ ձեզմէ շատեր անհետացան չտե-  
 նելու համար արեան անձրեւը, որ կ՛ո-  
 ղոզէր երկնակամարին կապոյտ դաշտե-  
 ըն՝

Ճ

Յունիսի առաւօտեան լինջ արեւը  
 կ'աւելք էրգրումի տանիքները, բայց  
 սիրտերը մութ էին եւ յոյսերը մեռած։  
 Հայկական թաղին սուները կը նմանէին  
 զոց զերեզմաններու, որոնցմէ երբեմն-  
 երբեմն ուրուական մը դուրս կ'ելլէր։

Տիկին Պարթեւեան իր ամուսնոյն  
 մեկնումէն ի վեր, սեւեր հագնելը կը  
 մնար սենեակին մէկ անկիւնը եւ կը  
 սպասէր որ մահուան մութ մակընթացու-  
 թիւնը դինք առնէ ու տանի իր սիրելի  
 դակին եւ ամուսնոյն մօտ։ Արփի կը կա-  
 տարէր տան բոլոր զործերը, որովհետեւ  
 մայրը յաճախ պտուկած կը մնար լուս ու  
 մունջ եւ կը մերժէր յաճախ իրեն հրամ-  
 ցըւած կերակուրները։

— Լեւոնի՛կ, — ըսաւ տիկին Պարթեւ-  
 եան, քոյր կանչելով գաւակը, որ խոհա-  
 նոցին մէջ կ'օգնէր իր քրոջը, փողոցները  
 տակաւին ամայի են. վաղւորով դնա՛ Տէր  
 Գէորգենց եւ խնդրէ որ եթէ կրնայ մեզի  
 թող գայ, երբ որ կրնայ, վերադառնա՛ր  
 հետը նարեկ մը բեր։ Գիտես որ մեր  
 նարեկը հարց տարաւ։ Ուշադրութիւն  
 ըրէ՛ եւ ոչ ոքի մի՛ տեսնուիր։

Լեւոնիկ դուրս ելաւ։ Իսկապէս փո-  
 դոցները ամայի էին եւ աղան, առանց  
 դժուարութեան, քանի մը վայրկեանէն  
 հասաւ քահանային տունը։

Բակին մէջ, փոքրիկ Սօնան խտրի  
 մը վրայ նստած, լաթէ պուպրիկ մը կը  
 քնացնէր, բայց Լեւոնիկ անոր կողմն իսկ  
 չնայեցաւ եւ ուղղակի ներս մտաւ։

— Ի՞նչ կայ Լեւոնի՛կ, — հարցուց  
 երէցկիներ։

— Մայրս անհանգիստ է, կ'ուզէ որ  
 Տէր Գէորգը իրեն այցելէ այս օր, երբ որ  
 կրնայ։ Յետոյ ըսաւ որ նարեկ մը բերեմ  
 հետս։

— Տէր Գէորգը Եկեղեցի դնաց շատ  
 կանուխէն. իսկ Եռշանիկին ըսեմ որ  
 նարեկ մը տայ քեզի։

Եռշանիկ մօրը մայրը լսելով երեւ-  
 ցաւ վերի պատշգամը եւ Լեւոնիկը վեր  
 կանչեց։

— Եկո՛ւր, Զապէլ քոյրիկը մեր տու-

նը մնաց երէկ գէշեր, կը փափաքի քեզ տեսնել:

Լեւոնիկ բարձրացաւ տախտակէ առտիճանները:

- Ներս եկո՛ւր ըսաւ Շուշանիկ, քիչ մը հանգիստ ըրէ եւ կարկանդակ մը տամ, կե՛ր:

- Պէտք է շուտ վերադառնամ, ըսաւ Լեւոնիկ, մայրս պատուիրեց որ փողոցին մէջ թուրքերուն չհրեւիմ:

Ջապէլ Մուրատեան տխուր ժպիտով մը մօտեցաւ Լեւոնիկին, շոյեց անոր մազերը, քաղցր խօսքեր ըսաւ:

- Միքայէլէն լուր մը առե՞ք, հարցուց աղջիկը:

- Չէ՛: Ջապէլ քոյրիկ, այդ պատճառաւ է որ մայրս միշտ անհանգիստ է:

- Մօրդ ըսէ որ, այսօր իսկ, եթէ դէշբան մը չպատահի, իրեն այցելութեան պիտի դանք, իմ կողմէն շատ բարեւեներ ըրէ:

Ջապէլ, Տոքթոր Բարսեղ Մուրատեանին մէկ հատիկ զուակն էր: Բարձր ուսում ստացած էր, եւ մէկէ աւելի անդամներ, հօրը հետ, այցելած էր Եւրոպայի մեծ քաղաքները: Միքայէլ Պարթեւեանին խօսեցեալն էր: Իրենց մանուկ հասակին ընկերներ եղած էին, եւ երբ, Միքայէլ Եւրոպա կը մեկնէր ուսումը աւարտելու համար, Ջապէլ խոստացած էր որ իրեն պիտի սպասէ եւ տակաւին կը սպասէր:

Շուշանիկ խոշոր կարկանդակ մը տուաւ Լեւոնիկին, յետոյ գնաց հօրը սենեակը ու նարեկ մը բերաւ: Լեւոնիկ կարկանդակը ուսելով իջաւ բակը:

- Եթէ կ'ուզես, քիչ մը խաղցիք Սոնային հետ, ըսաւ Շուշանիկ:

- Այսօր չեմ կրնար խաղալ, մայրս պատուիրեց որ չուշանամ:

- Մայրդ իրաւունք ունի, ուրեմն անապարէ: Կ'ուզե՞ս որ քեզի ընկերանամ մինչեւ ձեր փողոցին անկիւնը:

- Դուն անհող եղի՛ր - Շուշան քոյրիկ, դիտես որ ես շատ արագ կը վազեմ:

Ջապէլ վազելով իջաւ աստիճանները եւ կրկին զրկեց մանչուկը: Աղջիկը կը հեկեկաք:

- Լեւոնիկ, անուշիկ Լեւոնիկ, ըսէ՛, երբ պիտի վերադառնայ եղբայրդ, Միքայէլը, երբ կրկին պիտի տեսնեմ զայն...:

- Ճիշդը չեմ գիտեր, Ջապէլ քոյրիկ, թերեւս վաղը գայ, թերեւս զաւրբաթ, ո՞վ գիտէ...:

Եւ տղուն արցունքները խառնուցան աղջկան արցունքներուն...:

- Գնա՛, ըսաւ Ջապէլ, մայրդ մի սպասցներ, եւ զգոյշ եղի՛ր:

Փողոցը միշտ ամայի կը թուէր: Լեւոնիկ նարեկը պահեց բանկոնին մէջ, ցարխ թեւին տակ: Այդպէս պատուիրած էր մայրը: Կը բաւէր որ հասնէր դիմացի քառուղին, դառնար մախ կողմի փողոցը, քիչ մըն ալ վազէր եւ արդէն հասած կ'ըլլար իրենց դրան առջեւը:

Հասաւ քառուղին, քիչ մը ըննչապառ: Պիտի դառնար դէպի իրենց փողոցը, երբ խումբ մը լակոտներ, ուրոնք կնդիկ կը խաղային մզկիթի մը հրապարակին առջեւ, զինք նյութարեցին: Խաղի սովորական ընկերներն էին, մօտակայ թաղի թուրք տղաները: Բոլորն ալ կը ճանչնային Լեւոնիկը: Նախքան միանել ի վեր իրարու հետ չէին խաղցած: ամիսներէ ի վեր հայ տղաքը փողոցներու մէջ չէին խաղար թուրք տղոց հետ:

Բոլորը մէկ դադրեցուցին իրենց խաղը ու ոտքի ելան: Լեւոնիկ գէշ նախազգացում մը ունեցաւ: Տակաւին ժամանակ ունէր վազելով յուն հասնելու: Բայց անտեսանելի ձեռք մը զինք անշարժացուց: Ահմէտ, որ խումբին պետն էր, քանի մը քայլ առաւ իր կողմը եւ կանչեց:

- Լեւոն, շատոնց երեսդ շինք օտաներ, ի՞նչ կայ, խէր ըլլայ: Եկո՛ւր միասին խաղանք:

- Մայրս արգիլեց որ խաղամ փողոցին մէջ, արեւին տակ:

- Մայրդ չ'ուզեր որ մեր հետը խաղաս: գիտե՞ս ինչու մայրդ չ'ուզեր որ միասին խաղանք:

- Ճիշդը չեմ գիտեր: Ինծի ըսաւ որ

փողոցի փողին աչքի հիանդութիւն կուտայ:

- Ի՞նչ ապուշ խօսք: Տե՛ս, ինչք առտուրնէ ի վեր կը խաղանք փողոցին մէջ, եւ աչքի ցաւ չենք ունենար:

Լեւոնիկ չպատասխանեց: Մայրը իրեն կը սպասէր եւ ինք ժամավաճառ կ'ըլլար այս տղոց հետ վիճարանելով: Յանկարծ լակոտներէն մէկը խուճարին մէջէն ձայնեց:

- Մեր հետը խաղալ չես ուզեր, այդ քու պիտեալիքդ է: Բայց այստեղէն չդացած, պէտք է մեզի վերադարձնես այն բոլոր զնդիկները որ մեզմէ շահեցար ասկէ առաջ:

- Եթէ պրպանիս մէջ զնդիկ ունենայի, բոլորն ալ Ահմէտին կու տայի, որովհետեւ տն իմ լաւ բարեկամս է: Հօրս մեկնումէն ի վեր այլեւս պարտած եմ զնդիկ խաղալէ:

- Անպայման գրոյաններուդ մէջ պահած զնդիկներ ունիս, պոռացին լակոտները, իր կողմը վազելով:

Սկսան խուզարկել զբոլորները: Լեւոնիկ ոչ մէկ դիմադրութիւն կ'ընէր: Կ'ուզէր ժամ առաջ ձերբազատուիլ, որպէսզի անոնց ուշադրութիւնը չդառնայ նարեկին: Գրպանները մէկիկ-մէկիկ խուզարկելէ ետք, թուրք տղաքը՝ կատարած եւ յուսախաբ, սկսան հայհոյել:

- Ձրեցէ՛ք, թո՛ղ տուն փերադառնայ, մայրը անպայման իրեն կը սպասէ, պոռաց Ահմէտ, միջամտելով: Միայն թող խոստանայ մեր իւրաքանչիւրին քսան զնդիկ բերել վաղը առաւօտ, ճիշդ այս տեղը:

Ոչ ոք կ'ուզէր հնազանդի Ահմէտի հրամաններուն, մանաւանդ որ ուրիշ թաղերէ խումբ մը տղաք հաւաքուած էին Լեւոնիկին շուրջը եւ Ահմէտը չէին ճանչնար իբր խմբապետ:

Տասներկու տարեկան տղայ մը, բռունցքի զօրաւոր հարուած մը իջեցուց Լեւոնիկի դէմքին: Հայ տղան, քնադաբար ձեռքերը երեսը տարաւ պաշտպանուելու համար եւ սուրբ մատենաը սահեցաւ բաճկոնին տակէն եւ ինկաւ դեպին: Անպարտեց զայն վերցնել, սակայն ոտքի

հարուած մը Գիրքը նետեց շրճմակին ճիշդ մէջտեղը, եւ անզղբու կրամակի մը կատարութեամբ, այս բարբարոսներու գաւազները, որոնք իրենց մօրը կաթին հետ ծծած էին գիրքի եւ զրականութեան ատելութիւնը, նետուեցան Սուրբ ճղնաւորին յօրինած աղօթքներուն վրայ եւ բզիկ բզիկ ընելով ոնոր էջերը, ոտնակոխ ըրին հրաշագործ նախազատութիւնները:

Ահմէտ վազեց ընկերոջ օգնութեան, սակայն արդէն շատ ուշ էր: Այլեւս աչքը չէր կարգուիլ: Երկրորդ լակոտ մը պոռաց:

- Հայրս, ամիս մը առաջ, մեռաւ ճակատամարտին մէջ: Կեանքները սպաննեցին զինք: Այս տղան ալ կեանքը է, ինչո՞ւ կը պաշտպանես զինք: Ձե՛ս պիտեք որ բոլոր կեանքները մեր թըրնամիներն են եւ պէտք է բոլորն ալ մորթուին:

- Ո՞վ ըսաւ որ բոլոր հայերը պէտք է մորթուին:

- Անցեալ օր, Հօրեղբայրս ըսաւ: Ի՞նչի՞ համար անգամ է:

Ոչ ոք կրցաւ բերանը բանալ: Ի՞նչի՞ հատ բառը սարսափ կ'ազդէր նոյն խակ երեսներուն: Լեւոնիկ, շուտաւ կը մնար, եղնիկի մը պէս, չըջապատուած անպոթ ու կատարած շունչերու վոճմակով մը:

- Ձարկէ՛ք, պոռաց յանկարծ խոշոր տղայ մը, եւ քար մը վերցնելով նետեց Լեւոնիկի գլխուն: Քարը վրիպեցաւ իր նպատակէն: Բայց միւսերը հետեւեցան իրենց ընկերոջը օրինակին: Լեւոն հարուածները կը ստանար գլխուն, ճակտին, կուրծքին, ձեռքերուն: Արիւնը սկսած էր հոսիլ վէրքերէն...

- Վազէ՛, Լեւո՛ն, տուն վազէ՛, պոռաց Ահմէտ, վերջին անգամ փորձելով սպասել իր պզտիկ բարեկամը:

Լեւոն նետուեցաւ առաջ: Քարերը կը տեղային իր շուրջը: Թումբը սկսաւ հալածել զինք, բայց միջոցը երթալով կաւելնար, որովհետեւ Լեւոնիկ արագաշարժ էր: Հասաւ տան առջեւ, դուռը կիսաբաց էր: Ծիշոյ այն ատեն երբ պիտի անցնէր

սեմը, խորք քար մը, օգին մէջ դառնալով դպաւ ահանջին, եւ խեղճ աղան ինկաւ քրոջը բազուկներուն մէջ:

Լակոտները կատաղութեամբ նետուցան հին դրան վրայ, բայց ան ներուէն կղզուած էր: Անցան փողոցին միւս կողմը եւ սկսան քարեր տեղացնել թակին մէջ: Աղմուկը այնքան մեծ էր, որ թաղին թուրք բնակիչները, որոնք տակուին խոր քունի մէջ էին, արթնցան եւ պատուհանները բանալով վռնտեցին անուսպ ստահակները:

Տ

Միմոն Կազիրեան նախաճաշը վերջացուց եւ Փա՛ւֆ քեզ, Տէ՛ր, ըսելով տեղաւորուեցաւ բազմոցին վրայ եւ ծխատուփը բանալով՝ սկսաւ գլանիկ մը ուրբել: Վահան, սենեակին մէկ անկիւնը նստած, աչքերը չէր հեռացնէր հորմէն, կարծես անկէ խօսք մը, նայուածք մը կը սպասէր:

Ատենէ մը ի վեր, Վահանին վարմունքը կը մտահոգէր բոլոր տնեցիները: Ընտրի ընթացքին, բերանը գրեթէ բան մը չէր դնէր, պատասխան չէր տար հարցումներուն եւ երբ աչքերը ուղղէր անոնցմէ մէկուն աչքերուն, հոն կը յայտնուէր մետաղեայ եւ վայրի փայլ մը:

Կազիրեանի երկու զաւակները այն հազուադիւս երիտասարդներէն էին, որոնց ծնողքը, զանազան միջոցներով, յախողած էր զանոնք տունը պահել, հակառակ ընդհանուր զօրակոչին: Այդ երիտասարդները, ընդհանրապէս կը պատկանէին հարուստ ընտանիքներու, որոնց ոսկիները անխորտակելի պատնէշ մը կը կազմէին դուրսի սպառնացող վտանգներուն դէմ: Ամէն ինչ կարելի էր գնել, կը բաւէր միայն լայն բանալ ոսկիներու սնտուկը:

Վահան գիտէր որ հայրը հարուստ չէր եւ կը զարմանար թէ ինչպէ՛ս յաջողած էր Արշակը եւ զինքը հեռու պահել պատերազմի փոթորիկէն:

Ն. Զ.

(Շար. 2)



## ՅԱԿՈՒ ՄԱՆՈՒԿԵԱՆ

### ՏԻԵՋԵՐՔԻ ԽՈՐՀՈՒՐԳԻՆ

Անջրպետի խաղաղ ծոցն եմ այս գիշեր  
 Ու հրքիռիս լուսամուտէն դէպի վեր  
 Ես կը նայիմ լուսաբարձի աստղերուն,  
 Շողերուն տակ որոնց ներքում աչքերուն  
 Իմանալու քաֆուն խորհուրդը կեանքին:  
 Ըսի՛ն ինձի աստղագէտներն իմ երկրին,  
 Թէ՛ երբ հասնիմ գիրկը լուսնի լուսալանջ՝  
 Պիտի լուծեմ ողջ անեղծուածն հոգեւանջ  
 Իմ հոգեղէն, անմեկնելի գոյութեան:  
 Ըսի՛ն ինձի որ քուերով արծուային  
 Տիեզերքի ֆակիմ հանգոյցը գորդեան  
 Ո՛չ թէ սուրով, իմացումով այլ մեկին  
 Ու վերանա՛մ, աստուածանա՛մ յաիտեան...:  
 Խորաքափանց օ՛ր նայուածքիս դէմ հզօր  
 Անմատչելի երևույթներն անքննին  
 Թուի՛ն յաւէտ լոյ մանկավի՛պ տարփաւոր  
 Այնքան պարզ ու ֆողցրումակ  
 Հեփիաբունակ ու յստակ,  
 Զոր ընթեռնում հակիրն շունչով մը միայն...:

Ո՛հ, ֆանի՛ ցայգ, ֆանի՛ ցերեկ անդադրում  
 Դեզերեցայ լուսնակի լոյս արիւրում.  
 Ականջ տուի ազրիւրներու սօնադին,  
 Մերք ֆայեցի անտառներէ ամենի  
 Որոնումի նոր բախիղներ պեղելով.  
 Մերք ծովերու խռովայոյզ խարակով  
 Կոհակներու շաչո՛ղ շունչին ունկ տուի,  
 Բայց մնացի միշտ նայն տղան երկրային  
 Չյագեցուած նայն տեղեւորով, նայն մտեով,  
 Իմաստութեան բերկրամատոյց բանալին  
 Երազի պէս հեռակայ  
 Ես չգտայ, չգտայ...:

Արդ, յուսարեկ, քողած լուսնակն իմ հտին  
 Կը սաւառնիմ անջրպետի մէջ անհուն,  
 Յոյս կապած աստղերու վառ ֆոային:  
 Մենութեանս մէջ, ա՛հ, ես որքան կը ցանկամ,  
 Որ բիւր աստղերն զամբիւղներով լուսեղէն  
 Լուսամուտէս երկարեմ,

Խորհրդագրեղ որպէս արխիւ պատմական՝  
 Զեռագիրները անցին  
 Լինելութեամ գաղտնիքին :  
 Ա՛հ, կը ցանկամ, կը ցանկամ,  
 Լուսարձակովն անոնց հրա՛շք գիտութեան  
 Կարդալ ոգին անյիշատակ դարերուն,  
 Իմա՛ստն անյայտ մեր փռչեթաղ անցեալին,  
 Երագներուն մթամայն,  
 Ոգորումին անմեկին... :  
 Անցնի՛լ անդին մամուլաթախիծ դամբանէն  
 Դէպի ոլորտն անդրշիրիմեան ծագերուն  
 Եւ ստուգել անմահութի՛ւնն արփամայն  
 Էականերուն ոգեզէն... :  
 Ջեղումիս մէջ անանճանկան ցեծութեան՝  
 Սիւն՛մ գանճն վարդերու պէս հատեան  
 Լուսամուտէս երկիրն իմ շէն, արփաւոր,  
 Ուր փարատին յանախամբներն զարուար  
 Տիեզերքի անլուծելի հարցերուն :  
 Թող որ յուէտ երջանկութեամբ աստղային  
 Բարեկամներս եւ սաշտներն իմ բոլոր  
 Գռչե՛ն հպարտ ովկիանն ի վեր աստղերուն,  
 Թէ մարդն ի սպառ տէրն է արդէն իբ բախտին  
 Եւ բնութեան աներեւոյթ իրերուն... :

Բայց խոկումիս արձագանգող չկայ ձայն,  
 Աստղերն հեռուն կը դարպասե՛ն զիս միայն,  
 Կարծես երկրիս գիրկն իմ նստած հեշտագին,  
 Ուր աչքերուս նայն նագանճով կը ժպտին :  
 Եւրջս միտիկ անդորրութիւն է բարեան,  
 Կը գլգլայ մեզս սիրերգ մը հոգեթով,  
 Միքէ սիրայ ցայգասո՞՞ն է մայիսեան  
 Կը վարարի սիրտս ի՞նչ խոր երայրճով... :  
 Դարձի՛ր հրթիռ, տա՛ր զիս երկիրս հնաշոգ  
 Երբ աստղերէն չկայ յոյսի ոչ մէկ շող,  
 Որոնումի հանապարհով լուսնային  
 Խոհերս պիտի երբ նայն հեւքով քաւային :  
 Տա՛ր զիս հրթիռ, տա՛ր օճախն իմ հայրենի,  
 Տիեզերքի թռչ խորհուրդներն անպատում  
 Մնամ լուսնին եւ աստղերուն պսպրուն,  
 Բաւ է հոգւոյս լոկ մտաւտ մը ամայի  
 Ծաղկածորի ծաղկածիծաղ լանջին տակ,  
 Երանուէտ ուր հայրերս հանգումակ  
 Սիրտս բացած Լուսաւորչի կանթեղին՝  
 Տենչամբներս վառ ծաղկումին ի խնդիր  
 Եւ անձօրէն ծնրադիր՝  
 Իր սրբաշիթ շողերէն  
 Կայլակ մը յոյս աղերսեմ... :

6. Մ.

ԱՐՏԱՇԷՍ ԵԱՂՈՒՊԵԱՆ

**ՏԷՐ - ՏԷՐ ԱՄՈՒՆ ԱՆԻԾԵՑ**

- Մարդիկ կան, որոնց խօսակցութիւնն ու գիծագիծը անոնց նկարագրին ու հոգիին ճշգրիտ հայեւիլն է. ուստա Ձաքարին գէժքին նայելով, կարելի էր տեսնուի հոգին կարգալ:

Բարեգէժ, թիկնեղ, խոշոր ձեռքեր, հաստ հաստ մատներ, դուարթ, բախտէն գոհ, աստուածամօխ հիւան մըն էր. միայն քիթը քիչ մը մեծ ու գինիէն կարմրած:

Բոլորէն անխտիր սիրուած, ինչո՞տ յօժար դուռ դրացիի, բարեպակամ եօթն օտարին: Կը նորոգէր դպրատան տանիքը, ժամուն կոտրած փրթածները: Գիւղ մը գիւղով Ձաքար ամուն կը հանչնային իբրև բարի քրիստոնեայ:

Իր խաթրը ամէն տեղ կ'անցնէր. թաղականին, քէհիային, ծխախոտի մաքախոյզերուն, մեծին ու պղտիկին: Մէկուն հաւուն քիշա շէր ըսեր, մըլիւնի վրայ շէր կոխեր: Ընդունակն ու քաղցրալեզու էր: Կիններ մեղմ կատակներով առդնտելու աղուոր վարպետ: Շըլանի նշանաւոր հիւան էր:

Բոլոր օվան, քիւրտն ու կիւան կը ճանչնար զայն ու կը սիրէր. դուլ դադար չունէր, միշտ աշխատանքի մէջ. կը սիրէր պինին ու իր արհեստը: Կոտրած արօթի մը օխը, սոյլերու անիւները, բաշի կոթերը, փլած մարազները, կաթող տանիքները:

Երբեմն օրերով տունէն բացակայ, մերձակայ գիւղ մը կամ տուն մը կը շէ-

նէր, կամ առիքի մը փոտած մարդակները կը փոխէր:

Ձաքար ուստային խղճատանքին ու ազնուութեան պիւղ մը գիւղով վկայ էր: Տան հարազատի նման ամէն դուռ լաց էր իր առջեւ: Կային կութին պարտականները կը վճարէին բերքերով ու դրամով:

Ան հպարտութեամբ կ'ըսէր, թէ ինք տակաւին օր մի օրանց մէկին դուռը դացած շէր վերտեսաները հաւաքելու:

Կը սիրէր պինին, մանաւանդ կիթ հետն ունենար ծովուց թափա խառուր իրեւ աղանդեր:

Մարդիս ամուն իր աղմկոտ գլխուն մէջ, դիւ Տէր պապուն ինչպէս խօսիլը չբանաձեւած, ներս մտաւ Գուլար քորուն, ետեւէն ալ Տէրպապան:

- Ողջո՞յն ձեզ, - ըսաւ Տէր Աստուածատուր եւ տեսնելով Մարդիս ամուն հոն՝ որուն երեսները կաս կարմիր եղած էին պինարունքէն, անհաճոյ անակնկալի մը հանդիպածի պէս, պոյնը նետեց:

Մանուկ ու կնքահայր վայրկեան մը վարանքի ենթարկուեցան հրուէրին պատճառն ըսելու:

Տէրպապան ինչպէս միշտ՝ անկալական ու յանձնապատասան, լեցուն դաւաթը պարպելէ հոք՝

- Ի՛, է՛, ինչո՞ւ լեզուներդ կապուեցաւ, ըսէք տեսնեմ, Ձաքար, չըսե՞ս զիս ինչո՞ւ կանչեցիր:

- Հա Տէրպապ, հըլէ սը դաւաթն ըլ



խմէ. — ու աչքէն վաղող ջրերը սրբելով, սկսաւ արաֆրանկա :

— Տէրհայր, էսքան Սասու կամօք, ետքը ջու կամօք, ձեր Մարանը կըքահարսորդուն, Մկրին ուղեկու համար կանչեցինք: Մկրին մէքն ու պուլը դուն կը ճանչնաս, մեծ դէպքին զոհուեցան, դուն թաղեցիր: Մկր հիմա դպրացական աղուոր պապա կտրի՞ն տղայ մի եղեր է. Տէր պապա նորէն կ'ընեմ, էսքան Սասու կամօք, ետքն ըլ ջու իզրնովդ խնամի մի ըլլինք, է՛նչ կ'ընես :

Տէր Աստուածատուր այս անակնիւլ առաջարկէն յանկարծ խտտադիմեց, աչքերուն բիբերը մաքոքի պէս արազարազ աճ ու ձախ վազել սկսան, արհամարհոտ ակնարկ մը նետեց Սարգիս ամուին, դաւաժը ձեռքն առաւ ու վայրկեան մը զիտեիէ ետք՝ խմեց կրքոտած ունդերով եւ ստանց դեղեւելու, վճռական ու քիւնախնդիր, յարեց :

— Սարգիս, Սարգիս, ես ձեզմէն աղջիկ կ'ուսնիմ, բայց ձեզի աղջիկ չիմ տար, ուրիշ դուռ նայիր :

Սարգիս ամուն լուռ, աղիքներու գալարում մը զգաց: Ան դրեթէ կը գուռազէր թէր Տէրտրուն ըսելիքը՝ լիզուն պապանձեցաւ լուռ ու անբարբառ մնաց :

Տէրհայր մեկնելէն ետք, Քաւորները սրտակոտոր ու յուսախաբ գիներին դուր վերջացուցին շատ միլումազմիկ սպաւորութեան տակ եւ երբ Սարգիս ամուն իր օրհնեղանքն ու շնորհակալութիւնը ասուով կ'ուզէր ճամբայ իյնալ, ըսաւ .

— Սանո՛ւկ Զաքար, ես պարտքս կտտարեցի, հիմա ալ մեր դեղացոց առջիւ ո՛չ սեւեքես, ոչ ըլ մեղաւոր իմ . խօսք մի կայ կ'ընեն, Աստուած ողորմած է... :

Տէր հօր զոհնիկ ու անբարեհաճ վերաբերումը զինք սուր կէրքով ու նողկանքով լեցուցած էր :

Զաքար ջանաց մեղմացնել կնքուհար վիշտը անուշի կապել փորձելով .

— Հըլէ քիչ մի ժամանակ տուր կընըհար, ես Տէր ամուին հետ հեղ մի տակախօսամ, բան մի կ'ընենք, դուն ջրիստոնէական ճամբուդ մի շեղիր, կը գու-

րունցինք, բան մի կ'ըլլի, Աստուած մենծ է: — Սարգիս ամուն հիմա կըքի կծիկ մէք: Տէրհայր արհամարհանքը իր ջուներ իսպառ փախցուցած, անոր ամարդի սաստող ձայնը միշտ իր ականջին . «Սարգիս, Սարգիս, ես ձեզմէն աղջիկ կ'ուսնիմ, բայց ձեզի աղջիկ չիմ տար, ուրիշ դուռ նայիր» :

Ժամ առաջ ան կ'ուզէր իր վերջին միջոցը կիրարկել :

\*\*\*

Շատ չանցած, կարմրցի Սարգիս ամունք մաքրեցին իրենց տան կից փոքր տնակը, որ անգործածելի իրերով ու կենդանիներու կերի ամբարն էր . մաքրեցին պատերուն ու առիքին շանչուշեքը, պատերը ճերմակ կերով ներկեցին, յատակը խաբր մը ձգեցին, դրան վրայի փոքր պատուհանին վարագոյր մը կախեցին ու դուռը փակեցին :

Անլուծելի հանելուկ մը, որ հետաքրքիր դրացիները ափ ու բերան կը թողուր :

Շաբաթներ ետք՝ օր մը, սակայն, դրացիները տեսած էին դիւղացի գեոռահաս աղջկան մը դուրս գալը այդ դոց դռնէն: Բամբասանքի վարակիւլ ալիքներ կրկին ողողեցին լրակարօտ լիզունները :

— Քա՛ խուրպանդ ըլլեմ, Մայրամ խաթուն, խեղճդ, մտքճդ կ'անցնէ՞ր որ մեր էտ ամչկուտ Մկրը աղջիկ կրնար փախցնել, ի՛նչ գիտեմ անամ, էտպէս լսեցի . սուտին իրաւին խապար չունիմ, մեղքը սուտ ըսողին շլին . դիտե՛ս ինչ, կ'ըսեն, թէ փախցուցածն ալ Տէրպապայի աղջիկ է :

— Ես ըլ լսեցի քո՛րս, էտ քէ՞ծը, է՛մ մինէն ըսաւ . բայց ինք ի՛նտոր էտ տղուն ետխան թողուց: Շան կնիկը մերդի կարաս էր . գիշեր ցերեկ աչքը Մկրին վրայ էր: Աստուած մէկ բանը ա՛նամ, ես չիմ հասկնար . կ'ըսէ ջի, խեղճ աղջկան երեսը միշտ ծուռ է, մօրը կարօտէն կուրայ, կ'ամշնայ ոտքը դռնէն դուրս նետել . կ'ըսէ, հիմա ալ՛մ աշխարհ գիտէ, որ պապուտ տունէն փախած իմ, ամօթէս գիտինք մտնել կ'ուզիմ :

Անոնց անհաւատալի կը թուէր, որ էմինէ խանըմը Մկրիկն օձիքը ձգելէն զսա, կ'աշխատի եղիւր քրոջ մը նման, զեռասի աղջկան վիշաք ամոքել:

- Գորս, էտոր մէջ Աստու մատը կայ. էտ կնիկը քրիստոնէական սիրտ ունի. փառք Աստու որք տղուն հոգին խալտու:

Սակայն, հիմա դուռ դրացի նկատելի վերապահութիւն ունէին կարմրցրց ընտանիքին հանդէպ. չօր ու մօր կամքին հակառակ աղջիկ փախցնելը միշտ հանրային դատապարտելի երեւոյթ մը նկատուած էր: Դրացիները յայտնի կերպով կը խուսափէին Մկրէն. փողոցի լակտներն իսկ ծուռ կը նայէին: Էմինէ խանըմը սակայն նուատացման ենթարկուած չէր, ո՛չ ալ համակրանքէ ղըրկըւած. անոր ժպտուն բարի ակնարկը ու անբնագրօսիկ նազանքը կը գինաթափէր մեծն ու պզտիկը. նայուածքի իր մեկնոյցը, վեհանձն շարք ու ձեւը անոր կուտար անմեղունակ, անուշիկ մանկան մը չքնաղ պատկերը: Ան կրնար դերեփարել շնչաւոր սեւէ արու էակ:

Օրեր ու շաբաթներ իրարու կը յարդէին արագ. լուրերու անթել հեռազիրները դադրած էին, բայց դրացիները լսած էին, որ Մարան ծոցուր կը:



Տէր Աստուածատուր անթերի ատաղձ էր չըջնի մը ատոջնորդն ըլլալու, եթէ կին շունենար:

Արտասովոր ընաւորութիւններով, ինքնատիպ գիւղական Տէր պապո մը հիմա:

Երիտասարդ տարիքին, ան ոտքը գիւղէն դուրս նետած, Պոլիս, Իզմիր ուսանած, հոն քահանայացած ու հայրենի օճախը վերադարձած էր: Գիտէր լաւ հայերէն, թուրքերէն, թուարանութիւն, քիչ մ'ալ Փրանսերէն:

Ան, այնպէս սովորական Տէրպապա կոչուող գիւղացի քահանաներէն չէր: Անոր պէս ուսումի արտակարգ սիրով, կրօնական փիլիսոփայութիւնով, խիզար ու անվախ նկարագրով ուրիշ քահանայ մը

ամբողջ օվային մէջ չկար: Տէր Աստուածատուր վարդապետ ըլլալէք մարդ էր: Ան իր անձին վեհապետական տէրն էր. պատուախնդիր, հեռու ստորադասի հակուձէ:

Երջանի առաջնորդը լաւ կը ճանչնար անոր ինքնատէր, անձնիշխան սղին ու կը գնահատէր անոր հայրենասիրութիւնը: Ան վեր էր յարանուանական ժողովանդութենէ, հայ եկեղեցին ու զգրուցը կը գաւանէր իբրեւ ժողովուրդի հոգեւոր ու մտաւոր զարմնոցը, անոր ցաւերը ամբողջը, աղբիւն յոյսի փարսուր: Քահանայացած էր ժողովուրդին ծառայելու համար. մերժած էր ընդունիլ նիւթական որեւէ վարձատրութիւն իր պաշտօնին համար, ո՛չ մէկ նստուցում: Հանձնքով կը միանար գեղականին աւուր պատշանի ցաւին ու խրախճանքներուն, գաւաթ մը գինիով կ'օրհնէր անոնց սեղանը, կը խմէր, կը զուարճանար միշտ խօսելով ուսման գիւղացու պէս, ալաֆրանկա բառերէ հետո, առանց պերադասի մեծամիտ ցոյցի:

Ժամ, պատարագ, տնօրհնէք, ծընունդ, թաղում միշտ կը մերժէր փողը: «Հապա՛, փարա անիմ որ շալա՛կս նըստին», կ'ըսէր. ան որոշած էր ըլլալ անկախ ու անկաշկանդ, վեր աղաներու կամայականութիւններէ:

Տէր Աստուածատուր իր զիւղի անվճար քահանան էր. իր շէն օճախը կը պահէր իր ճակտին քրտինքով, հողէն հանած հալալ վառատակով:

Ու եթէ զուք, երբեւեցէ լսած էք բողոքական Տէրտէր մը, խիտ անհաճոյ, ճեղքրտուած խոպոտ ձայնով, այդ անձը կարմրի Տէր Աստուածատուրն էր:

Անթերի կը կատարէր եկեղեցիի արարողութիւնները, միշտ քիչ մը կարճ կապելով: «Մրտերդ թող շիտակ ըլլի, հաւաք ունեցողին հոքանն ալ հերիք է, կ'ըսէր, դացէք գործերուդ, միմակ աղօթքով փոր չի կշտանար»: Ինքն ալ շուրջապէս հանելէ ետք, բաւը ուսին դաշտ կը մեկնէր աշխատանքի:

Երեկոյան ժամերգութիւնն էտք, բակը տնտեսողներուն կ'ըսէր. «Տա՛, Տա՛,

ի՛նչ օսքերդ կը քաշես թորո՛ս, զնա՛ տունդ հացդ կեր, զինիդ խմէ, կնիկդ զբկէ պտակիր, հանգստացիր, վաղը նա՛րէն եզան պէս պիտի աշխատես»:

Քրիստոսի պաշտօնեայ, բայց իր բովանդակ էութեամբ մուկդին Մովսիսական, աչքի զէ՛մ, երկու աչք: Կիրով-նօրեայ իր քարոզներով զիւղացիին հո-ւին կ'ոգնեցինք պատուախնդրութեան ու հայրենասիրութեան կրակով:

Կը խրատէր զիւղացիին չըլլալ ցու-ցամբլ ու պոռոտախօս. կը դանէր ու-նայնամիտ հայրենասէրներէն, կը թե-լազրէր լուս ու յամառ աշխատանքով բարձրացնել իրենց նիւթական ու բարո-յական ժաղկաբազմը, ու իրաւական ահ-րը դառնալ իրենց պատուին ու գոյքին:

Տէր Աստուածատուր, անհամբոյր, դաժան դիմագծով, վառւղ մազերով նի-հարակազմ ու զիւրաբարբօք անձ մըն էր:

Չանչուի պէս կուտ ու խոլոպ մօ-րուք մը կզակին փակած, քարերուն կզամ մամուռի նման, յամառութիւն յատկանշող պինդ կզակներ, մազերի պէս յարատեւ ալ ու ձախ վազող բլբեր, շատ անխնամ իր հազուատ կապուտը, մանաւանդ ջրտուքի ճամբուն վարտիքին ծայրերը վեր ստիտած, բա՛ւը ուսին՝ ճիղբար մը շրթունքէն կախ, կարելի՛ էր ենթադրել, թէ ան՝ Կարմրի գիւղին ու-սումնական քահանան էր:

Կատարեալ շէյն մը, անտ'թէւեթ ու յանձնապատան: Գիւղին թուրքերը տկնածանքով կը վերաբերուէին Տէյի Քէշիշին հետ. կը ճանչնային պոյն իր խորքով ու անոր՝ զէ՛մ իրենց ատկու-թիւնը կը ծածկէին մեղմ ողորումներով. մանաւանդ, երբ տեսնէին Տէրտրոջ կրակ վաթող, մաքոքի արագութեամբ ալ ու ձախ վազող բլբերը ու լսէին անոր ճեղ-քըրտած ձայնը սահուն թուրքերէնով:

Անոնք Տէր Աստուածատուրին պարտքի ու պահանջի հաշիւը կը պա-հէին նպատաւով օր մը բաղադրեալ տոկոսովը զանձնու համար: Վրէ՛խընդ-րութիւնը Տէյի Քէշիշին տարբերքն էր: Ակնիբեւ որեւէ անիրաւութիւն, զիրա-ւարանք իր հօտին՝ կը շղթայազերծէր իր

ներքին բորբոսած քէնը, անխոր ու անփեւեր կը դատապարտէր ուր որ անկ էր, ոչս մը կամ մշակ մը:

Երբ զիւղացիին մէջ նշմարէր տկա-րութիւն իր իրաւունքներու պաշտպա-նութեան, կատարի կշտամբանքի կ'են-թարկէր զայն, գրեթէ վրան կը թքէէր: «Տա՛, դուն մարդ չե՛ս որ իրաւունքիդ տէր կենաս, զնա՛ կնկանդ լաշակը զըլ-խուդ ոնցուր, մեղք որ վրադ կոկով կայ»:

Տէր Աստուածատուր, հովիւ քով զանձն իւր զէն է վերայ աշխարաց իւրո-յի մարմնացումն էր:

Օր մը, հոն պաշտօնավարած դա-սատու մը ինձ պատմեց հետեւեալը՝

«Դպրոցներու արձակուրդէն անմի-ջապէս ետք՝ Կարմրի գիւղի հողաբար-ձուներուն հետ պայմանաւորուեցայ տարուան մը ուսուցչական պաշտօնի-վիւղ դիպցի նախօրք ծանօթանալու տի-րող պայմաններուն:

Գիւղ հասած չհասած, ինձ բնկերա-ցող հողաբարձուն առաջարկեց Տէրհօր կալը երթալ միասին, անոր ծանօթանա-լու համար: Ես ալ կը փափաքէի տեսնել այդ շատ գովուած քահանան:

Տէր պապան կալը չէր. նստելու լուք տեղ մը դասնք անոր սպասելու: Երկին-քէն կարծես կրակ կը թափէր. նիզակի պէս սուր իջնող արեւին կիզիչ ճառա-դայթները մարդն ու անասունը կ'անդա-մալուծէին: Մըրկող տաքը գոյորջիթ խտութեան մը հասած՝ դաշտերէն կո-հակ-կոհակ վեր կը բարձրանար:

Շինականին կայտեղը գերազանցօ-րէն սպաւորիչ, բանաստեղծօրէն գրա-ւիչ էր: Ան՝ սրբազրիչն էր մարդ էակին նիւթապաշտ կրկնօրն ու թեւազրիչ աշ-խատանքի ու հողի սրբութեան: Հօն մարդուն հողին կ'ընկուղուէ տերա-ցատրելի վսեմ խորհրդապաշտութեամբ մը:

Արծիւի մը խաչը բաց թեւերան յափ լայն հացլաթ մը, շորք բարձր նի-հար ցիցերու կապուած, փոքրիկ շուք մը ստեղծելու համար, ճաշ ու հանգստի

մը տաղաւարն է, որուն տակ միշտ անխուսափելիորէն խանձարուրի մը մէջ կաշկանդուած մանկիկ մը կը ներհն անխուով: Յարզի փոշիին մէջ թաթաւուն չուրի տամուկ կուտ մը, բերնէ բերան լեցուն սիթիլ մը թան, կերակուրէն դատարկուած պղինձէ լենկէր մը՝ փայտէ խոշոր դաշններով բեռնաւոր, ուր նանձերու վոհմակ մը շուքին տակ հարսնիք կը խաղայ:

Երկնքի համատարած կապոյտը սպարտոզ ամպի ո՛չ մէկ թիծ: Յորենի գըլխատուած ցողուններուն արանքէն, յողնած արտոսի մը պատահական կանչը կը հալի սօթին խտացած ալիքներուն մէջ:

Կամին լծուած դանդաղ հլու եզներ աղբրական աչքերով իրենց միօրինակ յուրբանէ շրջանը կ'ընեն մունջ, պոչերնին անվերջ, յուրքէն ցնցելով խայթող աներես մոծակները փախցնելու համար:

Արեւէն խանձած կիսամերկ լաճ մը ծալապատիկ կամին նստած, ջրունը գուրբը, յորանջելով, որոնացող եզները անդու կը վարէ: Գերանդին իր բարբարոս աւերը գործած է ազահօրէն: ցորենանի նիւար ծղօտները սակեզօյն քիստերէն զլխատուած, փորուած աչքերու պէս կիզիչ արեւուն տակ լուռ կը խանձին:

Կալանդին բուրբերու բարձրութեամբ դիզուած ցորենի հասկերը շինականին աղի քրտինջովը մկրտուած, խաշող սորենին տակ, մահուան դալուկը կը զգենուն:

Ձեփիւռի ոչ մի նշոյլ. յարզի բեկոր մ'իսկ չի շարժիր: Շատախօս ճպտութիւն անախորժ միօրինակ ճոխնը միայն օվսոյն խաղաղութիւնը կը խանգարէ. անոր պարբերական կոխնը գալիք անհանդուրժելի տաքի մը նախանշանն է կ'ըսեն:

Արոյզ հարս մը, զլուխն ու ծնօտը պոռոտ գոյնով չիթ մը կապած, կը մըտնէ տաղաւարին շուքին տակ, զիրկը կ'առնէ իր ճլացող քրտնիւր մանկիկը ու կը դառնայ ցորենի բարձր զէշերուն

կողմը, դիտող աչքերէ ծածկուելու համար, կը սեղմէ լացող մանուկը իր կուրծքին, կը համբուրէ կըքոտ խոնդազատանքով մը ու լոյս աշխարհ կը հանկ պինդ կոնկան բանկոնակէն իր նորսփթիթ քրտնած կուրծքը, ամուր մը կը սեղմէ զայն իր կոշտացած ափին մէջ արուի մը ախտազին գրպիտով ու այդ հպանքէն, շնաշխարհիկ երանութեան մը հէշտանքով օդոդուն, երկու մատնէլուն արանքէն, կարմրած տաք պտուկը կը դնէ մանկան խուճապահար շրթունքին, աչքերը վհատումով յառած հետուն՝ իր բացակայ ամուսնին... Շինականը իր տարերքին մէջ է: Յոյնութիւն շնանչցող մարդ ու կին հանդերձ ընտանեօք, մեծն ու պզտիկը հեռի հեռ քրտնաթոր աշխատանքի լծուած են:

Ընտանիքին մէջ ամէն ոք իր դերն ու պաշտօնը ունի, երբ դիւղացին իր կայր կը հանէ, դարակած մարազը, դինիի կարասը ու փեթակները շէն ու շէնապայծառ պահելու համար:

Տէր պապան նոր չէճ մը ուսին նետած, վերադարձաւ:

— Ողջոյն ձեզ մենծ աղաներ, — ըսաւ կէս ժպիտով մը ու չէճը խրեց դիզուած յարզին մէջ:

Այլանդակ անձ մը, մաղն ու մօրուքը կորած յարզի փոշիին մէջ, աչքին բիրկը մաքրեի պէս աջ ու ձախ կը խուսէն: Անոր այդ կերպարանքը վրաս ցնցող տպաւորութիւն մը ձգեց: Տարակուսեցայ ճամբու ընթացքին Տէր հօր հասցէին տրուած առատ դովեստներուն, զայն վերագրելով արժանիքներ պնահատելու անոնց անկարողութեան:

Տէր պապան՝ Պաղտատէն փախըստական թխամորթ Մարտի քահանանունուն կը նմանէր:

— Տէր ամուսնուս ինձ ընկերացող հոգաբարձուն, — առաջնորդարանի յանձնարարութեամբ էս պարոնը մեր զպրօցին դասատու վարձեցինք. հայիւր տես խելքիդ ինտո՞ր կը պառկի:

Տէր հայրը հատ մը էնպէս վերէն վար դիւ չափեց, սեթրափանթովով,

յրուաթով վարժապետը, ու առանց կենցաղադէտ ձեւականութեան՝

- Ո՞ր դպրոցը աւարտած ես, պարո՞ն:
- Կեդրոնականը, Տէր Հայր:

- Տանկերէն լաւ գիտե՞ս, Ֆարախաթ կրնա՞ս գրել: Էս երկրին մէջ, սերունդնին չսրնայ, շան լեզուն գիտնալ կարեւոր է, - ու դեռ պատասխան չտաացած, - թուաբանութիւնդ ինտոր է, կոտորակ եւայն գիտե՞ս:

Ուսումնական մարդու տարափ մը ուրիշ կարգումներ, որոնք զիս իսկապէս հիասթափեցին:

Ես իւրովի ընդունեցի, որ այդ խոժոռ, այլանդակ քահանան ուսած անձ մ'էր, որ ես անվիճելիօրէն Հանդիպած էի Հաւասարի մը, եթէ ոչ գերադասի մը:

- Վարժապետ, բարի եկար, Հաղար բարի մեր գիւղը, լաւ է որ առաջուրն է իրար Հասկանք, ամուսնացած չես, չէ՞:

- Ոչ Տէր Հայր, գեռ Հող Հասած չեմ:

- Է, ուրեմն մտիկ ըրէ ազա՞ս, ես դոր խօսող մարդ եմ, դուն յետոյ զիս պիտի ճանչնաս: Որովհետեւ ամէն շաբաթու դուն տարբեր տան մը մէջ պիտի ճաշես, (այսպէս էր անոնց ամուրի ուսուցիչը կերակրելու եղանակը) պիտի չփորձես գեղացոց աղջիկներուն ու հարսներուն հետ իյնալ, մեզի հետ պիտի ապրես իբրեւ աղնիւ Հայ երիտասարդ մը: Անցեալ տարի ձեր դպրոցէն շրջանաւարտած էտէպսիդ լակոտ մը վարձեցինք, ինչ մալ ըլլալը յետոյ գիտցանք, դեղին հարսները ճամբու դուրս Հանել փորձեց, քանի մը ամիսէն իստեցինք: Էս մէկ: Երկրորդ՝ դուն կուսակցական ես:

- Այո, Տէր Հայր:
- Տե՛ս, ես չեմ Հարցներ թէ ո՞ր կուսակցութեան անդամ ես, բայց էս պայմանը կը դնեմ, որ դուն մեր գիւղին վարժապետն ես, ո՛չ կուսակցական դործիչ: մեր գիւղացիք ազգասէր մարդիկ են, չենք ուղեր որ մեր մէջ բաժանում-

ներ ըլլայ, իրար բղկտեն: Հայրենասէր ըլլալու համար պայման չէ կամ գաշնակ, կամ հնչակ ըլլալ, ու ետքն ալ իրարու հակառակել:

Ամիսներ յետոյ սակայն, երբ դիւղացին վերջացուցած էր իր աշան ցանքը, ամբան բերքերը ներս առած, մարտը կենդանիներու ճմբան պաշարով լեցուցած, կարասները գինիով լիքն, մասունք պանիրով, իւրով ու թթուաներով ճոխացած ու վերջապէս ան օրըրած իր ճակտին քրտինքն ու փոշին, ձմեռը, արդար Հանգստի մը Համար, այդ հայրենակրօն Տէլի Քէչիչը, տմէն շաբաթու իրիկուն մը, իր տունը ընտրովի կը հաւաքէր խումբ մը գիւղացիներ ու ես անոնց կը կարգայի մեր ողատագրութեան արիւնտ ճամբուն ինկած նուա-տակներու կեանքէն:

- Տա՛ վարժապետ, ես ալ կը կարդամ, ամէն մարդ ալ կը կարդայ, բայց քու կարդալը ուրիշ է, բերնէդ կէծ ու կրակ կը թափի, - ու դառնալով մեր ունկընդիրներուն՝

- Հիմա շիտակն ըսէք, էսի պատարադ մի չ'արեմ՞ր:

Այս սրտակոչ խանդավառութիւններու պահուն, ան արդեօք երբեւիցէ կըրցա՞ւ մտածել, թէ դժբախտ օր մը, Հայուն անողոք Աստուածը անդամ մ'ալ պիտի քանդէր թումբերը ժանտափանտ էսիտին, - Ե՛ւր - հեղեղելու, այրելու, փնայնելու հայոց աշխարհը ու անոր բարի, ազնուական ցեղը, ու ինք յիմանալով թուրանական անմարդկային խոշտանգումներուն, Հոր մը պիտի նետուէր մեռնելու, ուրկէ ողջ դուրս պիտի Հանուէր, պայտուէր ու փողոցը շուններուն ձգուէր՝:

»

Իրիցկինը Տէր պապային Հակապապ կերն էր: Կաթի պէս ճերմակ, գեղեցիկ ու բարի: Անք շոյող գերուկ քծերու նրբութիւն մը, որ զայն կ'ընէր աւելի դրաւիչ:

Գլուխը կը ծածկէր Ծաղկերանդ չիթով մը, ճակտին կէտէն մինչեւ իր փոք-

բիկ ականքները, ծայրերը հանդուցելով էր ներամաշկ թուշին տակ:

Իր բնական գեղքը, բարի ու յարատեւ ժպիտը ամէնուն՝ զինք կ'ընէր վասնգաւոր. անոր առոյշը իգականութեան միանուլուած ցցուն մայրական նութիւնն իսկ՝ յաճախ անզօր էր պատնէշելու զայն ցանկատենչ շար աչքերէ: Անոր անխարդախ ժպիտը, խորտուն աչքերը զայն կ'ընէին խիստ յափշտակիչ ու խոցելի:

Իրեցկիւնը հեղեղող, ողորդող կենսականութիւն մը ունէր: Յաստի մարդ կը տարուէր մտածելու, որ ան՝ այդ անմեղունակ անուշ ժպիտով կը խորտուսէր իր վրայ սեւեւուող զայթակղած ակնարկները: Իայց ան նման էր փշուտ թուփերու մէջ աճած կակաշի մը, զըծւար էր անոր առաքիւնի զէնքերուն յաղթահարել:

Գիւղին ամէնէն բանտարկուներն իսկ՝ պիտի շուշէին անոր միտն աւտել: Ան երկու սեւեւէն ալ սիրուած էակ մ'էր:

Մարանի խարոյկի արկածէն ի վեր, այս մանկատիրոս կնոջ ժպտուն աչքերուն մէջ վշտի ցոլեր բոյն դրած էին: Անբերեցի՞ մեռց մը կարծես իր շնչող սիրտը կը ճմուրկէր, իր մշտազուարթ հոգիէն ներս տարօրինակ անծանօթ վախ մը խարխիս ձգած էր, որ հետաւոր վրտանքի մը ահազանդին պէս կը խոռովէր հոգին:

Մանրօրէն կը տքնէր այս անտոյր տակնապին ակը գտնելու. խուրդէթը գտնուող իր հարազատներէն ողջութեան ու առողջութեան լուրեր ստացած էին, ի՞նչը կրնար այս մշատեւ արտի տաղնապն ստեղծել, որ օրըստօրէ կը նուաճէր իր զուարթութիւնը ու մաթ շղարշ մը կը քաշէր իր ծիծղուն աչքերուն: Գիշերներու ծանր քունը միայն յափով մը կը ցրուէր իր ընկճուած տրամադրութիւնը: Կը մտածէր ամուսնոյն յայտնել իր այս ներքին շփոթն ու հծծիւնը, բայց կը վախնար, որ կութը քակելու ատեն, ստիպուի յայտնել իր ծանր մտատանջութիւնը Մարանի մասին, որ ամիսներէ ի

վեր կրծած ու մաշեցուցած էր իր մայրական քնքոյշ հոգին:

Մայրը դիտած էր, որ Մարանի բոցոտ աչքերը շիջած էին, ուր հիմա, սիրով յղի աղջկան մը վշտահար հրապոյրը կը դեղերէր: Մարան, դադարած էր իր սիրած գեղջկական պարերգները երգելէ. կարծիք չըթունջներուն կապանք դրած, ճնշող խորհուրդներու մէջ կ'ը խորխորէր. ան այլեւս հողորդակից չէր իր հարազատներուն, ու իր շուրջը գոյն առնող նոր երեւոյթներուն: Կանուխ անկողին կը մտնէր ու ժամերով անքուն կը տապալակէր:

Ան լուծ էր, ինչպէս երկընթացի մը յեղակարծուստ կորսուած ազբերի մը կարկալը:

Մօրը կարեկցութիւնն ու գորովը ջառագատուած էր. աղջկան կը մօտենար, սիրտը դող:

Դրացի ծերունի Վառվառ ապլան իրիցկնոջ խիստ զաղտնի ըսած էր, թէ Մարան, սէրով բռնուած է: Մօրը փորձերը խոստովանցնելու աղջիկը, մնացած էր սպարդիւն:

Ծ

Գիւղացին իր պէտքերը կը պարենաւորէ ձմրան խիստ ցուրտերէն առաջ. տնոնց համար դժուար է ձմրան ձիւնին, բուքին քաղաք երթալ, գնումներու համար:

Իրեցկիւնը, նախորդ իրիկուընէ վաղւան ընելիքներով մտահոգ, մութն ու լուսուն կամայուէկ մը դուրս սահեցաւ անկողնէն Տէր պապան շարթնցնելու սքուռութեամբ. քանի մը անգամ Ծուլօրէն յօրանից, կլորիկ փոքն ու կոնակը քերեց, հազաւ կարճ Ֆիսթանը, վրան անցուց շալվարը, Ֆիսթանին փէշերը խնամքով մէջն ամփոփելով, տեղաւորեց դիրուկ ծիծերը, ժրեց դօտին, լաչակն անցուց դիւրուն ու քալեց գէպի ջուրին կուժը:

Սրկու աւուճ ջուր զարկաւ երեսը ու երեք անգամ խաչակնքեց իրեն անհասկընալի դրարար աղօթք մը մըթմըթալով:

Ձորցուց երեսները կարծր կտուէ սրբելով մը, ամբարցուց, լաւ մը շտկեց գլխուն լաշակը, մօտեցաւ շարտախին ու ձայնով մը, որ մայրական քնքոյշ լարէ մը կը հոսէր, կանչեց.

- Մարան, Մարան, ձագս, ժամուն կրճակը զարկաւ, ել տեղանը հաւքէ, կովերը կթինք, էսօր Տէր պապուդ հետ քաղաք պիտի երթանք, վրայ գլոխ, օտից առնելու. շուտ ելի՛ր, ձագս, օրհարաքուն չի մնանք. Տէրպապադ ժամուն պալուն պէս ճամբայ պիտի իշնանք: Ու երբ անպատասխան մնաց, կրկին ձայնեց. աղջիկէն պատասխան չստանալով, շտկուեցաւ դէպի անօր անկողինը, սիրտը փնրացատրելի դողով մը լեցուն:

Մարան չկար հոն, անկողինը դատարկ էր:

Շուտաւ ու սարսփահար, ետ վազեց դէպի իր անկողինը, վա՛յ Տէրպապա, աղջիկդ չկայ, ձեռքդ ոտքդ պազնեմ, ի՛նչ տունս աւբաւ, աղջիկդ փախեր է, փախե՛ր...

Իրիցկինը շարաթներէ ի վեր այսպիսի արկածանկարներու մը նախագայտումն ունէր, բայց կը սարսփէր Տէրորուն յայտնել:

- Ձի խերիս, չի խնդաս օղուլ, - անիծեց աղէտահար մայրը. բայց իր դաժան անէճքէն անմիջապէս զզջախոհ, - վայ մեղա՛յ, մեղա՛յ Աստուած, պապանձի՛ր լեզու, ի՛նչ ըսեմ, ո՛ր ըսեմ, ո՛ր երթամ, էս ի՛նչ խշի՛մ էր տուի՛ր Աստուած, էս ի՛նչ սեւ մախի՛ր ցանկցի՛ր գլխուս:

Տէր հայրը, գլխէն լախտի հարած մը կերածի պէս, զպունը վրան քաշեց ու վեր վազեց խելացնօր եւ երբ անկողինը թափուր գտաւ, ցատումէն խելագարած, վաթ առաւ դտակը, վեր գարձուց աչքերը դէպի երկինք, լա՛յն բացաւ իր երկու ձեռքերը աղաչաւոր տոնական լրջութեամբ մը, ինչպէս սովոր էր ընել ամէն կիրակի Ղերմեանդ յուզումով, երբ իր երկնազերս տէր ուղորմաներով, ազգին հայոց ազատութիւն կը պազատէր. սխերի՛մ ու դաժան,

վանկ առ վանկ շեշտելով, ան նզովեց իր զաւակը:

- Վայ դուն անիծուի՛ս, նա՛մուսըդ աղջիկ, անիծուի՛ս, չի՛ խերիս, չի՛ խընդաս:

Ու զայրոյթէն խելագար, դարձաւ իր արցունքի մէջ կորսուած սրտարկ կնոջ՝ «սլ ես աղջիկ չունիմ կը հասկընա՛ս, գետինն անցնի, անգամ մալ երսը չտեսնեմ. վրաս եօթը սաք խոտ բունի, ես էս ամօթն ու հոգուս խշիւ՛շը պիտի չմոռնամ»:

- Մա՛րդ, անասուած Տէրպապա, Աստուծն է չե՛ս վախնար, բերանդ առի՛ւր - պոռայ իրիցկինը դիժացած, արցունքի մէջ կորած: Տէր Աստուածատուրի տան վրան սեւ ազուս մը կանչեց, տունը մտաւ խոր սուգի մէջ: Մահ մը պակաս պիտի ցնցէր անօր ընտանիքը: Այդ առաւօտ անոնց կովերը նախիբը մտան առանց կթուելու եւ Տէր հօր խոպոտ ձայնը «Տէր զրաղումս» շարձադանակ ժամուն խելաշաղախ կամարին տակ. Տէր պապան Աստու հետ խառնված էր...

Գիւղ մը դիւղով մտաւ սուգի մէջ. անոնց տունը մահ մը պատահածի պէս, լեցուն էր կարեկից դիւղացիներով:

Տէր հօր աչքին յարաշարժ մաքոքը իր փարսախը կրկնապատկած էր. տունը մահալլ ու դժոխային կը թուէր. ան, անցուց զտակը դիւխը, կուլ տուաւ քանի մը դաւաթ գինի ու դնաց այգին սէրփինէնկերը քաշելու. աշխատանքով կ'ուզէր մոռնալ սրտին կսկիծը, թէ ան միանակութիւն կը փնտռէր, առանձնութեան մէջ իր բարձրամայն ողբը ու բողոքը երկինքին պոռալու: Այդ յամառ, վճռակամ մարդը լա՛լ կ'ուզէր, լա՛լ, պատիւը արտասուրտած կը զգար:

Ճ

Շոգ ամառը փէշերը հաւաքած, գնացած էր. արձակուրդը վերջացած, դպրոցները պարտկած էին փողոցը աղձըղ շարանիճիները:

Երազուութիւն մը՝ որ գիշ մը տըխրութիւն սրսկած էր ամէն կողմ: Այդ

խաղամու ստահակներուն բացակայութիւնը աղճատած էր փողոցին զուարթ կենդանութիւնը:

Պատահական անօթի շոն մը հաջողք անկար աղքատի մը վրայ, կամ հաւու մը ուսին չօքած աքլորի մը յաղթական, հպարտ կանչը միայն կը խոտովէր փողոցին միապաղաղ լռութիւնը: Ամբոն վերջալոյսերուն խիտ երամներով սուրացող ճիւղան սարեակները, որ շոտագունած արեւմարին ճանաչները կը վարագուրէին, անխոտացած էին: Զարտախներուն վրայ գլուխներն կախ խամբած ծաղիկները, փշատներու գեղնած փոքր ու փոշոտ տերեւները, ծառերուն մերկացած թեւերը, աշնան յաղթական մուտքը կը շփոթէին ամէն կողմ: Սմբան յոգնեցուցիչ տօթը ի սպաս չքացած էր:

Գիշերները, երկնքին անծայրածիր անհունութենէն, գիրկ գիրկ վար հոսող փափուլուն աստղերուն տակ քնացող ու անոնց անլուծելի խաղերով յափշտակուող աչքերը, հիմա, վարը ծածքի տակ իջած, առատադին անողորկ դարձիկներուն սասերը կը համբէին:

Աղքատիկ պատուհաններուն կոտրուած ապակիները թղթուած, ձիթախաղով օծուած էին: Դուրսը մեղմիկ հոսող սուտակի եղբը, թափանցիկ սառի փրխրուն, ծաղկաւուն կեղևով մը կ'եզերուէր: Պապոնն եղեամբ տուներու ցուխները կը կլայտէր: Աշունը զով, տխուր խաղաղութիւնով մը գրկած էր քաղաքը:

Այդ երեկոյ, մութին մէջ անծանօթ սարսուռ մը կը թեւածէր: Փողոցին սոված շուներուն կաղկանձը սարսափի կը մատնէր դուռ դրացի: Սեւ խապարի մը նախազգացումը չմեցուցած էր թաղիցին: Մարդիկ շունչերին բռնած, սըրտատարփ, ժամու զանգին մահազոյժ դօզանջին կը սպասէին կարծես. վարագոյրներու արանքէն սեւ պատմուճանով, երկար քղանցքներով ճիւղի մը ժամանումը կը լրտեսէին: Ամէն աչք ժամկոչ Մարտիրոս աղբոր վշտակոծ դէմքը եւ անոր ուսին կրած, փայտէ հսկայ դա-

շաղը կը տեսնէր. դրեթէ կը լուին անոր յոգնած քայլերը, որ մահը շարժած իրենց թաղը կուգար:

- Հոգիս կը վկայէ, որ էս գիշեր մէկը հոգեվարքի մէջ է. չէ՞ք լսեր շունչերներուն սարսափելի ոռնոցը, - ըսաւ Մարգրիտ խաթուն: Գրացի Մարգրիտ ամենց տան կից փոքր հիւղակին մէջ, խուճարահար ետուզեա մը կար:

Ոչխամուտ դայեկը արին ջրտինքի մէջ, իր արուեստին զերագոյնը կը փորձէր, մահամեղձ մայրը երկունքի տատանելի ցաւերէն ազատելու:

Երեխան կարծես կը մերժէր լոյս աշխարհ գալ, առաջ ոտքերը դուրս գնել կը յամտէր իր կիսամեռ մօրն արգանդէն: Ամուսինը, դուրսը ցուրտ ժիլանցքին մէջ մահատիպ կը դողար: Աստուածային դատան վճիռով մը սակայն՝ մահը յաղթական՝ կլանած էր մայրը:

Ինչ տնադորոյն երկնային անօրինութիւն, Մկրի ծնունդով ալ իր մայրը մահացած էր:

Ահռելի հանդիւնով մը, որ ակնի մորթուող կենդանի մը հոգեվարքային մաքառումներուն կը նմանէր, քան մարդկային ողբակոծ ճիւղի մը. վար ինչու Մկր շնչակապ, իր անշնչացած Մարտին դիակին վրայ:

Մթալնած տնակին մէջ, Մարգրիտ ամուսին խղճահար ընտանիքը մահէ անպատում ողբը կը հեծեծէր:

- Գարեգի՛ն, աղա՛ս, նետուիք Յուրակին վրայ, գնա՛ զեղը, էս չար խապարը տար սանահօրանց, Տէրտրուն ու ազգականներուն, - եւ անկարող շարունակելու, փղձկեցաւ դառնագին: Այդ կարծր շիղերով շարքաշ գիւղացին պտտուած՝ հեղեղալով արտասուեց:

Նոր ծագած արեւը վաղորդայնի ցուրտն ու եղեամբ դեռ չէր կլանած, երբ Գարեգին գիւղն հասաւ գծրախտ լուրը գուժելու:

Սանահայր Զաքար իր Հեռ առաւ գիւղին երէցփոխը ու արցունքոտ աչքերով շոկուեցաւ դէպի եկեղեցին, ուր ծերունի աղօթարարներ, մեղաց թողու-



թեան եւ աշխարհի խաղաղութեան աղերսը կ'ընէին Աստուծոյ:

Դուրսէն կը լռուէր Տէր Աստուածատուրի ցասկոս ու բաղաձայն հրահանգները ամենակալին:

Ձաքար ուստան, անկարող զսպիւռ իր արցունքը, ինչորեք երէցփոխէն, որ ան տայ չար խապարը:

- Մանօ Քէչեան, ոտքը պագնեմ, բերանս վրայ շերթար, Աստու սիրուն դուն ըսէ Տէր պապուն, կ'աղաչեմ:

- Ուստա՛ Ձաքար, ըսունիք բա՛ն է, սիրտս կը խշտալայ, ինտօ՞ր որիմբայց տեղի տալով ուստային պաղատանքներուն, տուաւ չար խապարը, երբ ժամերգութիւնը վերջացած ու ժամը դարսկած էր:

Տէր պապան կայծակահար ցնցունցաւ. փիլոնը չհագած դուրս վազեց դիւահարի մը պէս ու ակնջին չհաստալով, ետ դարձաւ դէպի երէցփոխը ու պոռայց.

- Դուն էտ ի՞նչ էր ըսիր Մանօ Քեչեան:

Ան այդ պահուն ցնորածի մը ողորմելի տեսքն ունէր:

- Աստու կամքը էտ է եղիր Տէրպապա, կրկնեց Քեչեան խոր կորեկցութեամբ. դեղ մը գեղով պիտի լայ, պիտի սպայ Տէ՛ր պապ, բայց ժահը Աստու դործն է, դուն էտի գիտես:

Տէր Աստուածատուր անկարող էր քայլը փոխելու, բթամած ու շմած, ակնարկը յառած պատէն կարկառուն աստուածամոր մրոտած դատկերին՝ ուր մէթի պատրոյգէն ժահամերձ լոյս մը կը հեւար, կը նայէր անքթիթ, մարդու մը նման՝ որուն միտքը յանկարծ կը լսորբի զործեկէ:

Մանօ Քէչեան զիւղական կեսնքի փորձառութիւնով Հարուստ, հալէ հասկըցող ու Հաւասարակշիռ, շուտով կուսնեց Տէր հօր զղջախոհ հոգեխոյզ վիճակը ու ատկէ ստանալիք Հաւանական արտի հարուած մը, վար առաւ Տէրարուն փիլոնը ուսէն, թեւն ինկաւ ու դարձաւ Ուստա Ձաքարին.

- Ձարբար, էս չար խապարը հէլէ

մէկուն շիտաս, հիմա հըլէ շիտակ մեք օտան էրթանք, հոն կը զուրուցինք:

Տէրպապան ինքն իր տէրը չէր այլուս. ուշացիր ու կամազուրկ՝ մանկան մը պէս կը հեռուէր. կը քայլեր Գեհեային կռթնած, ոտքերը կը կթոտէին, կ'երթար առանց գիտնալու թէ, ո՛ւր. ու երբ օտան հասաւ, Մանօ Քեչեան ոմուր մը փակեց դուռը ու անմիջապէս անցաւ Տէրպապան կարգի բերելու իր վարպետ դերին:

Փինիին սրարջաւ մատուցումը, տակաւ ողեւորել սկսաւ սպասման եզրին հասած վշտակոծ քահանան ու քարեկեց իր դաւկին դէմ կուսուկուած զայրոյթին թուճրը: Հեղեղանման արցունքի կայլակներ հոսիլ սկսան անոր շանշուլի նման մօրուքէն վար. կուլար դառնակակիծ հեկեկանքով ու ապաշաւտի կցկտուր մեղալսականներով:

Ան՝ որ իր կենաց բոլոր օրերուն իր կամքին ու մտքին միահեծան տէրն ու տիրականը եղած էր, կամակորօրէն Հպարտ, անզիջող իր համոզումներուն մէջ, կուլար՝ մայրը կորուսած մանկան մը պէս:

Արցունքը, վըշաղ մեղմող դեղագերն է. կայուած լեզուն կը սացուի նման տեղատարափի մը, որմէ ետք արեւի նշոյլներ կը փալփին կրկնակամարին վրայ. կակիծը մասամբ կ'ամոքէ ու նախանձական թեթեւ խաղաղութիւն մը սփոփանքի պէս բան մը կը սփռէ կակծահար սրտին: Հիմա լան՝ պիտի կախ կը խոկար: Ի՞նչպէս տալ այս զարհուրելի լուրը իր կնսլ ու զաւակներուն:

Իր կեանքի բովանդակ օրերուն, ան տակաւին դիմազբաւած չէր այսպիսի սիրտ յօշոտող հարուած մը:

Փինիին, իր թափը կորուսած, կակիծը տիրականօրէն գերակշռած էր ալքը:

Տէր պապան կաթոզին կը սիրէր իր զաւակները ու Հակառակ իր զաման անէծքին, ան իր սրտին խորէն բուռն սիրով կը սիրէր Մարանը- անոր կարօտը

չատ երկար խոռոված էր իր գիւերուան զո՛ւնը:

Հիմա, ան կը տեսնէր սուգի, չիշաւանի իր յարկը, կը լսէր իրիցկնոջ ողորմական մահերգը. կը յիշէր անոր ծընկալոք թախանձագին պաղատանքը, ըլլալու վթախիբառ ու անյիշաչար, մահուանդ՝ երբ լուր ատին որ Մարանը ծոցուր էր:

«Օտքդ պագնիմ, ձեռքդ պագնիմ Տէրպապա, Հօրդ մօրդ Հողուն, ձգէ երթում աղլիկս տեսնամ, երկհուպս է:

Ես մայր եմ, դուն Հողի չունի՛ս, դուք ու կրօնք չունի՛ս, դուն Հայ քրիստոնեայ չի՛ս, Աստու մարդ չի՛ս. աղլիկդ տղան սիրեց, ամուսնացաւ. տղան՝ կ'ըսեն թագուհիին պէս կը նայի Մարանին, ի՞նչ կ'ուզես անաստուած, դուն չես գար, մի գար, թող տուր որ ես երթամ ձագս տեսնամ»:

Ան, իւրովի կը խոստովանէր, որ իր կարգին ու կրօնքին գէ՛մ գործած էր, անողորմ, քարսիրտ ու աննորոզ եղած էր իր Հարազատ զուկին:

Կ'երեւակայէր, քաղցրարույր ծաղկի մը պէս կոկոնած աշխոյժ Դարանը պատնեզուած, փայտէ դժխեմ դագաղը, փորուած ցուրտ գերեզմանը ու իր սրբուհի արեան գետեր կը հոսէր. կը տքնէր մտասեւեռ ճար ճամբայ մը լանելու:

Մանօ Քեհեան ենթադրելով, որ խտասիրա Տէր պապան Հասած կ'երեւէր պղտմի, քրիստոնէական ներդաստի ոգիի մը, մտածեց իրկաթը տաք տաք ծեծել. առաջարկեց, որ երթան, բոլորը միասին թաղման արարողութեան ներկայ ըլլան:

— Չոճուհիւր թող եթիմի պէս չի թաղուի Տէ՛րպապ, մահը Աստու գործն է, ամենուսն է. ալ Հիմա անցուկը մոռցուկ պէտք է ըլլի: — Մանօ Քեհեային վերջին նախազատութիւնը կարծես ցնցեց զինք, ան վերջինց փախուստի սեւ օրը, որ Մարանին անկողինը պարսպ գտած էր ու երգուած՝ անոր երեսը տնկած մ'ալ չի տեսնել:

(Շար. 8 եւ վերջ)

Կսկիծին Հետ, կրքի յեղակարծ ներխուժում մը տակն ու վրայ ըրաւ անոր սակաւ ինչ կակոցած խոտաբարոյ ու պատուանդիբ Հոգեկան աշխարհը:

Խղճահարութիւնը պարտուած, տեղի տուաւ զազանային պայրոյթի մը, որ սմքեցուց իր անպատում վիշտը ու հին միացող վէրքը կրկին տիրապետեց իր յամառ Հողուն:

— Չէ՛, Մանօ Քեհեայ, չէ՛ ես չեմ գար, ո՛չ ալ իրիցկնոջ, — ըսաւ ան դառնաւոր Հառաչանքով: Դուք կ'երթաք, գտցէք, ես երդում եմ ըրեր անոր երեսը անգամ մ'ալ չի տեսնել:

Մարանը՝ Աստուած դիտող երկու աչիցս լոսն էր, զընծ տղաքս շատ կը սիրէի, բայց օճախիս պատիւը փարա մի էրաւ, ալէմ մէլմէքէթը վրաս խնդացուց. ինձի համար մեռնիլ էր: Չէ՛, չէ՛ վալլահի չեմ գար:

Ձաքար ամուի արցունքները, Մանօ Քեհեայի ազաչանքն ու ողորմաները ապառաժի կը զարնուէին:

Տէր ամուն՝ կամակոր, կրքոս ու քարսիրտ, արտասուածոս աչքերով մնաց անգրդուելի իր անխիղճ ու անմարդկային վճռին մէջ: Անոնք Համաձախեցան սակայն՝ որ Ձաքար ամուն եւ երէցփոխը երթան, ու առայժմ լուր չտան իրիցկնոջ, ոչ ալ գիւզացոց:

Ողբացող կարեկից դրացիներ միայն արցունքոտ աչքերով Հետեւեցան գիւղացի զարիպ աղկան դագաղին:

Մարանի կրօնաւոր հայրը, զու՛ նախապաշար ժանդոտած կապանքներու, մնաց անդրդուելի ու մերժեց տեսնել իր Հարազատ զուկին գիւղը:

Մնողական սիրոյ ի՛նչ զարհուրելի Հեզնանք...

Քաղաքացի զոյգ քահանաներ, ի յարզանս եղբայրակից քահանայի մը, իւր վշտով Հետեւեցան թշուառ աղկան սեւ դագաղին, աղօթեցին արտաբուխ, որ Աստուած խիղճ տայ Հօրը ու Համբերանք մօրը:

Միբուն Մարան, ցուրտ Հողը մտաւ որբի մը պէս առոնց Հօր, առոնց մօր արցունքի: Ա. Ե.

### ԿԵՆԱՑ ԲԱԺԱԿԸ

Բաժակները գինով լցրե՛ք,  
 Ես խմում եմ հայրենիքիս  
 Սուրբ կենացը՝ գինով կարմիր,  
 Սիրտս բաժակ կարմիր գինու,  
 Միրտս բաժակն այն բախտաւոր՝  
 Որ դարձել է կենաց բաժակն հայրենիքիս:

Թող որ խմեմ գինին վառման  
 Այս բաժակի,  
 Թող որ քամուի վերջին կաթիլ  
 Արիւնն սրտիս:  
 Փռնովուրդ ի՛մ, դու էլ խմի՛ր,  
 Դու էլ հրճուի՛ր  
 Հայրենիքիդ երգը երգի՛ր,  
 Եւ դատարկիւր կարմիր գինով լեցուն սիրտդ  
 Նրա շէջ փառքի համար:

### ԱՇԽԱՐՀՆ ՈՒ ՄԵՆՔ

Փռքիկ տերեւ՝ ծառախիտ անտառի դիմաց,  
 Մի կաթիլ ջուր, խայտոդ, ծփուն ծովի առաջ,  
 Աննշոյլ կայծ, ատենազարդ կարգյտի տակ,  
 Ես ու աշխարհն:

Հեզ մանուշակ, պարտէզների մէջ ծաղկազարդ  
 Փռշու մառնիկ, հսկայ ու մեծ լեռան դիմաց  
 Մի անգոր կանչ, ժխորների ժայթքին առաջ  
 Ես ու աշխարհն:

Աշխարհն շնչին ոչիճնները դարձրին աշխարհ,  
 Անտառն՝ տերեւներն այն փռքիկ,  
 Ծավն այն անտուն՝ կաթիլն ջրի,  
 Տիեզերքը՝ աստղերն այն վառ  
 Ամեն մի ինչ, մի մասնիկն է մեր աշխարհի,  
 Աշխարհն ու մենք:

ՌԻՄԱ ԳԱՌՕՆԷ

ԱՐԱ ԱՐԾՈՒՆԵՒ

Դ Ե Ղ Ի Ն Լ Ո Յ Ս Ը

Սեյլա՝ իր նոր բարեկամին հետ թե-  
ւանցուկ՝ իջաւ զիշերային գետնալարի  
դրօսասրահի օձապտոյտ աստիճաննե-  
րէն: Նուազի վիճակն ու կարմիր լոյ-  
սերը թրթռացին իր այտերուն վրայ: Ա-  
րու նայուածքներ զարնուեցան կարճ  
չբնազգեստին քղանցքէն երևցոց զրզը-  
սիչ զիստերուն, որոնց Սեյլա պատաս-  
խանց անհող ժպտով:

Ձեռքի ու աչքերու մեղմ շարժում-  
ներով բարեւեց ծանօթները: Բարեկամը  
կէս մթութեան մէջ կ'ուզէր զտնել ազատ  
սեղան մը: Բայց Սեյլա քաշեց անոր  
թեւէն:

— Նախ պարենք, էտտի՛:  
Պառնուեցան պարողներու խում-  
բին: Նուազախումբի չորս ելեգորական  
կիթառներն ու թմբուկները կը ջնային  
գերազանցել Հինգ երգիչներու ճիշերը:  
Զրօսասրահի ցած առաստաղը կը ցըն-  
ցըւէր: Զոյգերը կը պարէին ափրիկեան  
կշտոյթով պար մը. անհանդարտ շար-  
ժումներու բերումով՝ կարճ ու նեղ շըր-  
ջազգեստները աստիճանաբար կը բարձ-  
րանային վեր, հրաւիրելով արու նայ-  
ուածքները:

Պահ մը դադարեցաւ նուազը. էտտի  
վերսկտաւ փնտուել ազատ սեղան մը:

— Աւշացաք, ազատ սեղան չմտաց, —

ըսաւ սպասեակը, — եթէ կ'ուզէք, նստե-  
ցէք աստիճաններուն վրայ, հո՛ն:

Աւրիչ ընտրութիւն չկար: Էտտի  
ապսպրեց երկու դաւաթ ուխաքի ու  
ինդրական ժպիտ մը նետեց աստիճան-  
ներուն վրայ նստողներուն: Երկու զոյ-  
գերու միջեւ բացուեցաւ նեղ անցք մը:

Դարձեալ ելան պարելու: Սեյլա՝  
եղնիկի դեղեցիկ աչքերը խոշոր բացած՝  
նայուածքը կեդրոնացուցած էր դեղին  
լամբի մը: Ստեբըր մանր սոսուճներով  
տեղքայլ կ'ընէին. ամբողջ մարմինը ա-  
րագ հեւքի մը մէջն էր. ձեռքերը կըտ-  
րուկ շարժումներով կը բարձրանային  
ու կ'իջնէին համաշափ: Միայն նայ-  
ուածքն էր անշարժ՝ զամուած դեղին  
լոյսին:

Սեյլա ժպտեցաւ. դարձեալ Հին  
մտածումը արձագանդեց մաքին մէջ:  
Դեղին լոյսը տարածուեցաւ ու անցք  
բացաւ. այդ Հին դիմագիծին: Տարեց  
դէմք մը՝ քառասունը հինգ տարիներու  
փորձառու նայուածքով, ինկաւ իր տաս-  
ներութամեայ ժպիտին վրայ. Ռոպէրն  
էր, պարոն Ռոպէրը, հօրը լաւ բարե-  
կամը, որ երկու տարի առաջ յանկարծ  
ձգեց իրենց խնդրուած քաղաքը ու մեկ-  
նեցաւ հեռաւոր երկիր մը: Ինչո՞ւ.  
Հայրն ալ չգիտցաւ պատճառը: Բայց

տարբեր էր պարոն Ռոպէրը. կը քալէին միասին գետեզերքի երկար ու լուռ ճամբէն, կը խօսէին շարքի ու բարբի մասին: Այն ատեն տասնհինգ տարեկան էր Սելլա. նոր էր մահացած երիտասարդ մայրը՝ երկար ամիսներ հիւժեղ ու տառապելիէ հող անձանօթ հիւանդութեան մը պատճառաւ: Ինք կը մտէր առանձնութեան մէջ ու պէտք ունէր սրտակիցի մը ու փութեան: Հա՛յրը...: Կոչու ու եսասէր մարդ մըն էր ան, անտարբեր կեանք ու աղջկան նկատմամբ: Տառապած էր մայրը ամուսնոյն ամէնօրեայ կոշտութիւններուն ու արհամարհանքներուն դիմաց: Իսկ ինք երբեք չէր սիրած հայրը քու անոր ներկայութիւնը իր ամբողջ ծանրութեամբ ճնշած էր որտի՛ն վրայ: Մինչդեռ, զգայուն ու ազնիւ մարդ մըն էր պարոն Ռոպէրը: Սելլա յիշեց այն օրը, երբ յոննութիւն պատրուակելով մտաւ պարոն Ռոպէրի թեւը. իր նորարար կուրծքին սեղմեց անոր արմուկը: Ռոպէր անտարբերութիւն կեղծեց, հեռացուց թեւը ու ցոյց տուաւ զետի՛ն ջուրերուն վրայ սահող փոքրիկ նաւակ մը...:

Դադրեցաւ երաժշտութիւնը: Դեղին լոյսը փոքրացաւ: Սելլա եւ իտտի վերադարձան իրենց տեղերը: Նուազախումբը սկսաւ նուազել մեղմ եզանակ մը: Յոգնած մարմիններ զրկեցին գիրար ու սկսան օրորուիլ քնքուրեամբ:

- Պարենք, Սելլա՛...
- Ո՛չ, իտտի, կ'ուզեմ հանգստանալ քիչ մը:
- Իտտի հետաքրքրութեամբ նայեցաւ շուրջը:
- Թո՛ղ կուտա՞ս որ պարեմ բարեկամուհիի մը հետ.
- ...

Սելլա առանձին դիտեց շուրջը: Մտնօթ շատ տղաք կային հոն, որոնց հետ ունեցած էր արկածախնդրութիւններ: Սկսած էր անմեղ համբոյժ մը, անցած զբօսարահներու զիւ նուազներուն եւ դոյնողոյն լոյսերուն մէջէն, ու փոքրիկ սենեակներու նկէս մթութեան մէջ, ա-

նոնցմէ շատերու հետ հանդարտեցուցած էր յոգնած ջրղեղը...: Ի՞նչ միօրինակ էին անոնց զէմքերը. բնտանեկան հինցած ալպոմի մը նկարներն էին կարծէք: Հապա այս կտտին, որ շուտով պիտի միանար այդ նկարներուն...: Բոլորն ալ անցեալի յուշ էին միայն: Բայց, պարոն Ռոպէրը. ա՛հ, դարձեալ վերադարձաւ ան՝ իր մոխրադոյն մազերով ու ինքնաժտահ ժպիտով: Սելլա յիշեց այն օրը, երբ ցանկապատէ մը վար իջնելու պատրուակով, թեւերը փաթթած էր անոր վրին. ցատկած էր վար, ու յետոյ չէր ուղած բաժնուէլ, ձեռքերը բարձրացուցած էր անոր ականջներուն ետեւ, շոյած էր ծոծրակը, նայած աչքերուն ու հասկցուցած որտի՛ն տակ աճող ծարաւին մեծութիւնը: Բայց ան քնքուրեամբ հեռացուցած էր զինք. բռնած էր ձեռքէն ու միասին վազած էին դէպի կանաչ մարզերը: Ի՞նչ հաճելի պիտի ըլլար համբոյժի մը ծաղկումը մարգագեանի դարնանային դոյներուն վրայ: Բայց, պարոն Ռոպէր՝ երջանիկ ու անհոգ մանուկի մը նման՝ կը վազէր...:

Սելլա կոնքին վրայ զգաց իր ծօտ նստող ժօրուսաւոր անձանօթ երիտասարդին ձեռքը: Ձցնցուեցաւ: Երիտասարդին նայուածքները շարունակ կը հետապնդէին իր ժպիտները: Իտտին միօրինակ ու ձանձրացուցիչ էր դարձած: Ձրնդդիմացաւ տղուն յառաջացող ձեռքերուն...:

Յանկարծ դրացի ձեռքը փախաւ իր մարմնէն: Վերջացած էր մեղմ երաժշտութիւնը. Իտտի, վերադառնալէ առաջ, նշմարած էր Սելլայի մտածկոտ երեւոյթըն ու ժօրուսաւոր աղուն աչքերուն փայլը:

- Երթա՛նք, Սելլա:

Ճ

Քառորդ ժամ ետք՝ փոքրիկ սենեակի մը կիսամութին մէջ՝ Սելլա նետեց ինքզինք անկողնին վրայ: Իտտի գոչեց պատուհանները:

Սեւլայի համար գաղտնիք չունէին այս միօրինակ բեմադրութիւնները, որոնք կը սկսէին հանուող կօշիկներու բացուող վարագոյրով...: Ժպտեցաւ զարձեայ պարոն Ռոպէրն էր մտեր մտքի էջերուն: Այո՛, անձրեւոտ առաւօտ մըն էր. առանձին էր տունը, երբ եկաւ ան: Ինք դուռը բանալէ առջև՝ քակեց դիւնբազմատին կոճակները. քակեց երկար մագիբը...: Որոշած էր. այդ օր պիտի հանցնէր այդ մարդուն կուրծքին տակ կուտակուած սուղ: Պարոն Ռոպէր մտաւ ներս, առաջին անգամով իսկ նշմարեց աղջկան կուրծքերուն կէս կտրութիւնները, «առանձին էս», փոփսաց: Ինք չպատասխանեց հարցումին. մօտեցաւ, թեւերը փաթթեց Ռոպէրի մէջքին, դուրսը դրաւ անոր ուսին. պահ մը սպասեց. անշարժ էր այդ զարմանալի մարդը...: Սեւլա հեռացուց գլուխը անոր ուսէն, աչքերը կիսախուփ. կրթոտ չբիւրեր՝ սպասումի կըսեցով այրած՝ շարժեցան. «Ռոպէր, համբուրէ գիտ... միայն դուն իմաստ ունիս ինծի համար...: Ամբողջութեամբ զրուած ես սիրտս...»:

Ծանրացած էր շնորհաբանը: Էտտի կը բաժնէր Սեւլայի շրթները, իսկ... պարոն Ռոպէրը՝ այդ զարմանալի մարդը՝ մօտեցուց շրթները իր ճակտին ու անհրապօր համար մը դրոշմեց հոն: Յետոյ, կոճակեց քակուած կոճակները, շօյեց իր երկար մագիբը, ամփոփեց գանոնք աջ փոքին մէջ ու ըսաւ.

- Այսպէս աւելի լաւ է, Սեւլա՛: Մեկնեցաւ:

Վերջին հանդիպումն էր: Ծարաթ մը հող լսեց հօրմէն, թէ պարոն Ռոպէրը վերջնականապէս մեկնած էր քաղաքէն, դէպի հեռուոր երկիր մը:

Յիշեց իր ցնցումը. զարմանքը: Ու ահա, այդ հին, անծանօթ, զարմանալի զգացումը, որ ամէն օր կը թրթոսյ կուրծքին տակ, կը մեծնայ իր ձանձրոյթին ու միօրինակ կեանքին հետ միասեղ: Այո՛, կը սիրէր այդ մարդը. միայն ան կ'սպրէր իր մէջ՝ իր հպարտու-

թեամբ, տղնուականութեամբ ու անհասկնալի նայուածքներով...:

Կտրուեցաւ Սեւլայի մտածումներու թելը: Էտտի հեռացած էր անկողնէն:



Կէս ժամ ետք, Սեւլա, իր տան տոնջեւ՝ իջաւ Էտտիի ինքնաշարժէն.

- Վաղը դիչեր պիտի չկարենամ գալ, - ըսաւ, - ժամադրուած եմ սարիչի հետ: Երբ ազատ ըլլամ՝ կը հեռաձայնեմ քեզի:

Մտաւ շէնքի դռնէն ներս: Մտող դրաւ վերելակի կոճակին ու սպասեց: Նշմարեց չորս նամակներ, որոնք դրուած էին շէնքի պահակին սեղանին վրայ: Մօտեցաւ. անտարբեր երեւոյթով մը ցրուեց պահարանները: Յանկարծ ցընցըւեցաւ. կապոյտ պահարանի մը վրայ պարոն Ռոպէրի ձեռագրով կար իր անունը: Առաւ պահարանը, Ո՛հ, երկու տարի է ոչ մէկ լուր, ու ահա յանկարծ...: Պահարանը սեղմեց կուրծքին. չբացաւ: Նախընտրեց իր ննջասենեակի մտերմութեանը մէջ ըլլալ առանձին իր երազած մարդուն հետ...: Բացաւ յարկաբաժնին դուռը. հայրը կը ջնանար: Մտաւ իր ննջասենեակը. վանեց անկողնին մօտ դրուած լոյսը. նըստաւ անկողնին ու բացաւ նամակը.

«Սիրելի Սեւլա...»

Կարգաց, կարգաց մէկ շունչով: Իր երիտասարդ ուղեղը լեցուեցաւ ծանր դէպքերով: Նամակին տողերուն մէջէն տեսաւ Ռոպէրը, որ ամուսնացած կնոջ մը հետ, զաղտազոյի կը բարձրանայ պանդոկի մը աստիճաններէն: Պանդոկի փոքրիկ սենեակին մթութեանը մէջ, սիրոյ երդումներ իզո՛ւր կը ջանային ծածկել՝ մտահոգութեան մոխրագոյն ամպերու տակ՝ սեղմուած սրտերը: Մերկ մարմիններ՝ սաւանի մը ալիւտարով ծածկուած՝ կը զգային ներկայի փոքր երջանկութեան ծանր հակազդեցութիւնը վաղուան վրայ...: «Սիրեցի այդ կիներ, Սեւլա՛, սիրեցի, ու այդ ազգասիրկ պանդոկի գիշերուայ մեղքէն, ուրիշի

կնոջս մեծ ծնար դուն, ասկէ ձիշդ տասնը-  
ուֆ տարիներ առաջ...» :

*Սեյլա ճգնէջ նամակը ավերուն մէջ :  
Իր հաւատքի տոճարին աւերակներու  
ճիշդ մէջտեղ կանգուն մնացած վերջին  
սիւնը փշրուած էր : Ռոպէ'րը... պարոն  
Ռոպէ'րը, իր հա'յրը... Աստուած  
իմ... : Հիմա կը հասկնար նայուած ջնե-  
րուն իմաստը : Բացաւ ճմռթկուած նա-  
մակը, տարաւ շրթներուն, հեկեկաց մա-  
նուկի մը նման :*

«Չուզեցի քու մատաղ սրտիդ մէջ  
ապրիլ այնպէս, ինչպէս դուն կըրտած  
էիր գիտ : Բու սիրտդ պէտք ունէր իր  
արդար գարուններուն : «Ամբողջու-  
թեամբ գրաւած ես սիրտս», բսիր վեր-  
ջին օրը : Ձգեցի քաղաքը ու մեկնեցայ :  
Ահա, այս նամակով կու գամ պարսիլու  
սիրտդ : Տուր ինձի անկիւն մը հոն, ուր

ես՝ կծկուած անցեալի մեղքիս մէջ՝  
մնամ ու շխանգարեմ քու իրաւունքդ, որ  
«կեանք» կը կոչուի :

«Ես կը մեկնիմ այս երկրէն, դէպի  
անծանօթ ափեր, դէպի մտացույթեան  
գիրկը : Մնաք բարով. Սեյլա...» :

•

*Յաջորդ գիշեր, գեանայարկ դրօսա-  
սրահին ժողովին մէջ, Սեյլա՝ եղնիկի  
խոնար աչքերը խոշոր բացած՝ նայուած-  
քը կեղբոսանուցած դեղին լոյսին, կը  
պարէր : Տխուր ժպիտ մը քննած էր ան-  
հողութիւնը իր շրթներէն ու տանձ-  
նութիւնը կ'ուռնանար սրտին մէջ :*

*Յանկարծ դադրեցուց պարը, սեղ-  
մեց մօրուսաւոր նոր բարեկամին ձեռ-  
քը, ու բաւ :*

*- Ձիտ հետու տար այս լոյսերէն :  
Երթանք սենեակդ... :*

Ա. Ա.



### ԱՄԷՆ ԱՆԳԱՄ ԵՐԲ ՔԵԶ ՍԻՐԵՄ

Ամէն անգամ երբ քեզ սիրեմ քեզ անլի եւ կը սիրեմ  
 Երբ կը սիրեմ հոգիիս մէջ եւ կ'ազօթեմ պատկերիդ դէմ.  
 Երբ կ'ազօթեմ պատկերիդ դէմ եւ կը մտնամ թէ ի՞նչ կ'ըսեմ  
 Ինչպէ՞ս ըսեմ, ազօթիս մէջ ազօթք կ'ըսէ սէրըդ վսեմ:

Ամէն անգամ երբ քեզ սիրեմ եւ ազօթեմ պատկերիդ դէմ  
 Եւ կը յիշեմ հոգիիս մէջ պատկեր մ'ուրիշ Աստուածագէմ.  
 Երբ կ'ազօթեմ պատկերին դէմ եւ կը մտնամ թէ ի՞նչ կ'ըսեմ  
 Ինչպէ՞ս ըսեմ, պատկերին դէմ քա պատկերդ ալ եւ կը տեսնեմ:

Ամէն անգամ երբ քեզ սիրեմ ու քեզ տեսնեմ պատկերիդ դէմ  
 Եւ կը սպասեմ որ ինձի հետ դու ազօթես պատկերին դէմ.  
 Երբ կ'ազօթեմ պատկերին դէմ եւ կը մտնամ թէ ի՞նչ կ'ըսեմ  
 Ինչպէ՞ս ըսեմ, ազօթք մըն ալ միւս պատկերէն եւ կը լսեմ:

Ամէն անգամ երբ քեզ սիրեմ ու զինք սիրեմ պատկերի դէմ  
 Ազօթիս հետ եւ սէրնուս իմ պատկերս ալ եւ կը բերեմ.  
 Երբ կ'ազօթեմ պատկերի դէմ եւ կը մտնամ թէ ի՞նչ կ'ըսեմ  
 Ինչպէ՞ս ըսեմ, Երբ կը տեսնեմ իմ պատկերըս եւ կը սիրեմ...:

### ՀԱՐԿԱԻ ՕՐ ՄԸ Կ'ԸՍԵՍ ԻՆՑԻ

Հարկաւ օր մը կ'ըսես ինձի թէ զիս դուս ալ կը սիրէիր  
 Այն ատենէն երբ եւ քեզի սէրըս տուի ու դուս չատիր.  
 Տխուր էի եւ այն ատեն երբ սէրս չատիր, սէրս չատիր,  
 Ի՞նչ գիտնայի, բայց կը գրայի որ ինձի պէս տխուր էիր:


Հարկաւ օր մը կ'ըսես ինձի թէ դուս լացիր այն ատենէն  
 Երբ ինձի պէս դուս ալ չըսիր կը սիրէիր զիս փոխարէն.  
 Լացի եւ ալ ու գիտէի որ կու լայիր, բայց այն ատեն  
 Ինչո՞ւ չըսիր կը սիրէիր որ չլայի եւ ալ մարէն:

Հարկաւ օր մը կ'ըսես ինձի թէ սիրեցիր զիս անլի  
 Այն ատենէն երբ ինձի պէս սէրըդ չըսիր որ չեալի.  
 Ձէիր գիտեր որ այն ատեն երբ եւ քեզի սէրըս տուի  
 Ու դուս չատիր լացիր, յայնժամ քեզ անլի եւ սիրեցի:

Հարկաւ օր մը կ'ըսես ինձի թէ կը սիրես զիս ինձի պէս  
 Որ սիրեցի, դեռ կը սիրեմ, պիտի սիրեմ եթէ սիրես.  
 Բայց այն ատեն աստուան պէս կ'ուզեմ որ ես հարկաւ չըսես  
 Հարկաւ ըսես զիս չսիրես ու քեզի պէս զիս լացնես...:

ՇԱՀՊԱՆ





### ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՈՐ ՕՃԱԽ ՄԸ

Պատկան մարմիններու կողմէ տարուած երկարատեւ ու տճնաչան աշխատանքէ մը ետք, ընթացիկ տարուան երկրորդ ամսոյն աւարտեցաւ ու բացումը կատարուեցաւ «Յակոբ Տէր Մելիքեանի թատերասրահ»-ին, որուն պատմութիւնը սկսաւ 22 Փետրուարին, Համագայիւնի «Գասպար Խփէկեան» խումբին բեմադրած 270-րդ ներկայացումով:

Քառորդ դարէ ի վեր բեմի վրայ է այս խումբը ու տարեկան ամբողջացնումք մէկ փիէս, ու մէկ փիէսը ա՛ռնուազն տասը անգամ բեմադրելով հաստատեց իր գոյութիւնը, ստեղծեց իր աւանդութիւնը, տիրացաւ անհերքելի վարկի մը: «Գասպար Խփէկեան» խումբին ինչպէ՞ս ի վեր, վերջերս երապարակ եկան նաեւ նկատառելի ուժերով ուրիշ խումբեր, որոնց բեմ հանած հայ եւ օտար ենդինակներուն գիմնաց հասարակութիւնը անտարբեր չմնաց, լեցուց սրահը, խանդավառուեցաւ ու ծափահարեց, դժգոհեցաւ ատեն-ատեն ու քննադատեց, բայց ներկայացուած յարդր փիէսին չկրցաւ հեռու մնալ եւ նորէն լեցուց սրահը:

«Գասպար Խփէկեան» խումբին 270 ներկայացումներու ընդարձակ շարքը, որ ինքնին պերճախօս է, եւ միւս խումբերուն գտած ընդունելութիւնը ի միասին՝ կը վկայեն, թէ մեր հազարին մէջ քատերական կեանք մը գոյութիւն ունէր, բայց չկար իրական առումով քատրոն մը: Անշուշտ, կարելի չէ անգիտանալ «Գալուստ Կիւլպէնկեան» օրսիւր, նայնիսկ երախտագիտութեամբ պիտի յիշենք գայն, բայց «Գալուստ Կիւլպէնկեան» աւելի սրահ էր, քան քատերասրահի մը լայն ու բարդ համադրանքներէն թեղադրուած կառույց:

Հիմա ունենք նոր մարդուն պահանջներուն ու նոր քնտրագիրներուն կիրարկած հնարքներուն ամբողջովին համապատասխանող քատրոն մը, «Յակոբ Տէր Մելիքեանի» քատերասրահը, որ իր տարածութեամբ ու խորքով, արագութիւնը կարելի դարձնող սխալելի միջոցներով, լոյսերու այլազանութեամբ ու առատութեամբ կը գտնուայ ասպարէզին մէջ մեծ յաղթանակներ արձանագրելու հնարատրութիւններ ընծայող յուսատու օճախ մը:

Մեզի անձանօք չեն քատերական եռուն կեանք եւ մշակույթ ունեցող մեծ ժողովուրդներուն քատրոնները, Փարիզի վաթսունէ աւելի քատրոններուն կէտէն աւելին, Լոնտոնի Օլտ Վիքն ու մայրաքաղաքին մի քանի այլ:

Քատրասարահները, որոնք համեմատութեան եզրեր ընդունելով՝ կրնանք համարակազմութեամբ վկայել, թէ ճեմակար Տէր Մելիֆոնեան, Քատրասարահն՝ իր տարածութեամբ եւ կարելիութիւններով՝ վերոյիշեալներու միջինէն վեր մակարդակի մը վրայ կը գտնուի, կը համդիսանայ յարեւմտեան մէկը, որ սպասուի կը բերէ մեր ժողովուրդին ոչ կը վարձատրէ նման երազ մը ներշնչող նաւերեւելները, Քատրասարահներն ու Քատրանը կեանքի վերածած նահատակները, Քատրանը գնահատող բոլոր անճանարութիւնները:

Քատրոզ միլիոն արծեց մեզի այս Քատրասարահը, որուն շուրջ մէկ երրորդ ծախսը հոգաց ինք՝ Պր. Յակոբ Տէր Մելիֆոնեան, 82 հազար լիբ. ոսկիի իշխանական նուիրատուութեամբ մը:

82 հազար լիբ. ոսկի: Մարդիկ դիրութեամբ չեն շահիր ուժանակ հազարը: Հաւանաբար դիրին չէ նաեւ ուժանակ հազար նուիրաբերելը: Նման շինութիւններն կ'ընեն նիւթակամէն տարրեր արժեքափերով կեանքի գնահատելի գիտող պնտական խառնածոները, գաղափարական հարստութիւններու հաշակը ունեցող հարուստները միայն:


Գաղափարական հաստատութիւններ կառուցանող հայերուն հովմի վեր, մեր գրականութիւնը կը յիշէ Քատրան կառուցանող ուրիշ Յակոբ մը, նարտարապետ Յակոբ պէյ Պալեան, որ իր ամբողջական ծախքով կառուցանել տուաւ Պալտը Միլիֆոնեանի Քատրանը, Քատրանկան մեծագործութիւններու լայն ասպարէզ մը բանալով օժտուածներուն առջեւ:

Արեւմտահայ Քատրանի պատմութեան անգերագնացելի հմուտը՝ Ն. Պէշիկթաշլեան, խօսելով այդ մասին, ի միջի այլոց կ'ըսէ՝ «Կարծող, եկեղեցին ու Քատրանը՝ իստիկ երբորդութիւն մը կազմած էին Միլիֆոնեանի մէջ, որ մտաւորականներու եւ մեծատուններու բնակավայրն էր եւ ամէն ոք այնտեղ կը խօսէր մաքուր հայերէն:

Այո, դպրոց, անոր բակին մէջ Քատրան ու դիմացն ալ եկեղեցին»: Պարն Համաւորի մէջ կառուցուած ճեմակար Տէր Մելիֆոնեան, Քատրանը ունի համարեա՛ նոյն միջավայրը, եկեղեցիին մօտ է, Սոփիա Յակոբեան գուլեհի կողքին, ժողովրդային ճան կից, եկեղեցիներու եւ դպրոցներու մեծ ցանցի մը կեդրոնը, ուր, ճիշդ է, մեծատունները մեծամասնութիւն չեն կազմէր, բայց մտաւորականները հոն չեն ապրիր, բայց հոն է սփիւռահայութեան ամենահոծ գնդուածը, որուն ճիշդ յայտն չեն կապուած, որուն ծոցին խմորուող վաղուան հայերուն վրայ պզտիկ պիտի չըլլայ նորակառոյց այն Քատրանին դերը:

Քատրանը դպրոց է կ'ըսեն ու սիւսլ չեն ըսեր: Ներշնչման ազդիւր է մանաւանդ, յատկապէ՛ս խմոր ունեցող երիտասարդներուն համար: Ներկայացումի մը ի տես՝ քանի՛ հոգի ինքզինք վերջնականապէս բնութիւն նուիրելու որոշում կայացուցած է, քանի՛ հոգի Քատրանութեան ձեռնարկած ու քանի՛ հոգիներ ըրած են իրենց հոգիին գիւտը, յսած են իրենց արեան ձայնը, այլակերպած են, վարարած, մարդացած:

Առաջ՝ մեր պայմանները մեծ իրազարծումներու ձեռնուու չէին, Քատրանը ինքն ինքն ալ մարդիկ մէջ, ամէն ինչ տեղի կ'ունենար ընդհատ-ընդհատ ու սահմանափակ կարելիութիւններով, հետո՛ւ՝ հետակարային հրապարակներէն: Կատարուած հսկայ բարեփոխութենէն ետք, պիտի կարենա՞նք արդեօք քանի մը օժտուածներ մնայուն կերպով կապել բնութիւն ու միշտ բաց պահել Քատրանին դռները, պիտի կարենա՞նք անընդմեջ ներկայացնել մեր սրբութիւններն ու աշխարհի նորութիւնները: Էականը այդ է հիմա եւ մեր մազքամէք՝ ա՛յդ:



ՆՈՐԱՅՐ ՊԱՐԹԵՒԵԱՆ

# Հ Է Ր Պ Ը Ր Թ Մ Ա Ր Ք Ի Ի Զ

## ՅԱՆԱԶԱՑԱԾ ԿԱՐՏԱՐԱՐՈՒԵՍԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ ՄԵՐԺՈՂՆԵՐՈՒ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍԸ

Հէրպլըրթ Մարքիւզ ծնած է Պերլին, 1886-ին: Նախ կ'անգամակցի Սոցիալ-Դեմոկրատ կուսակցութեան: *Ռոզա Լիւքսեմպուրկի* սպանութենէն ետք կը հրաժարի եւ ճացիներու սկզբնական յաջողութիւններէն ազդուելով՝ կը գաղթէ Զուիցերիա, յետոյ Փարիզ, ուր Մարքիւզ *Հէրպլըրթ* եսկազութեան տակ թեյ մը կը պատրաստէ *Հէրպլըրթ* մասին: 1934-ին վերջնականապէս կը հաստատուի Միացեալ Նահանգներ: Կ'ուսուցանէ ընկերային ճիւղեր, գտնազան եամալարաններու մէջ (ներկայիս՝ Ման-Տիէզօ, Գալֆորնիա):

Հէրպլըրթ Մարքիւզի գործը եամալարում մըն է իւրայատուկ մարտիգրի եւ Փրէտոյտեան հագեղներումս: Բառն դատաւարտութիւն մըն է թէ՛ արեւմտեան եւ թէ՛ օսկետական *յառաջացած Եւրոպայի հետադարձութեան*: Կը շնչուէ ամենտի պատուարեան ամերստիւտալիսը, «*Բայց ազատութիւնը կարելի է՝ երբ չկան զանգուաններ, ալ չարազուրկներէ ձերբազատուած մարդեր*»:

**ԸՄԲՈՍ ՌԻՍԱՆՈՂՆԵՐ  
ԵՒ ԾԵՐՈՒՆԻ ՓԻԼԻՍՈՓԱՆ**

1968-ի Ֆրանսական ուսանողութեան «Մայիսեան Ըմբոսութիւնը» հանրութեան ծանօթացուց ամերիկացի ծերունազարդ փիլիսոփայ-ընկերարան՝ Հէրպլըրթ Մարքիւզի անունը:

Մէկ օրէն միւսը միջազգային մամուլը զայն դարձուց «կարմիր Աստղ» մը, ձախակողմեան ուսանողութեան մը գաղափարախօսը:

Ծօթանասուն տարեկան եւ ամերիկացի՝ Աւելի'ն: Ծաղումով գերմանացի, Միացեալ Նահանգներ գաղթած 1934-ին: Ի՞նչ կրնար ըլլալ կապը Հէրպլըրթ Մարքիւզի եւ Ֆրանսական Երիտասարդութեան մը միջեւ, որուն համար երեսուն տարիքը արդէն կը խորհրդանշէ փլուզումը (... les croulants): Որուն հա-

մար երեսունը անց ո'նէւ մէկը վստահութեան արժանի չէ: *Երիտասարդութիւն մը, որ հաւանաբար չէր ալ կարողացած Հէրպլըրթ Մարքիւզի չափազանց խրթին հրեք կարեւոր դործերը «Միատարած Մարդը», «Իրոս եւ Քաղաքակրթութիւն», եւ «Սովետական Մարքսիզմ»:*

Անշուշտ, միեւնոյն ձեւով կարելի է հարց տալ - քանի՞ հոգի ի՞րապէս կարողացած են Մարքիւզի «Իրաժապուտը», եւ այդ ընթերցանութեան հետեւանքով համայնաւոր դարձած: Գրիտատնեաներն ալ նոյն բանը չի՞ն ընէր - նախ մտնուելը կը կնքեն եւ յետոյ կրօնք կ'ուսուցանեն...

Բայց գերմանացի ուսանողները եւ մանաւանդ պարազուրկներէն Ռուտի Տուշէն կարողացած էին Մարքիւզի հրատարակութիւնները, իրենց նախկին

Հայրենակիցը չէր ընթանար ո՛չ սրբա-  
մբռնան նիւթուպաշտութեան, ո՛չ ալ սո-  
վետական ընկերակցութեան անել ճամ-  
բաներէն, այլ ընտրած էր նո՛ր ուղղու-  
թիւն մը, որ արդէն ամբողջական վե-  
րանայում էր, ամբողջական ժխտում  
էր, ամբողջական եւ կրթող զատապար-  
տութիւն էր սովետական եւ ամերիկեան  
յառաջացած նարտարարուեստի քաղա-  
քակրթութեամբ: Գերմանացի ուսանողնե-  
րուն շնորհիւ, Հէրպլըթ Մարքիւզի զա-  
ղափարները Պերլինէն անցան Փարիզ՝  
Ֆրանսացի ուսանողներուն՝ կարգախոս-  
ներու, յայտարարութիւններու եւ հաս-  
տատումներու ձեւին տակ:

Միտք պիտի ըլլար սակայն - ընկե-  
րային երկու յիշերը պարզացնելու եւ  
պատճառաբանելու համար - այս բոլո-  
րէն հետեցնել, որ Հէրպլըթ Մարքիւզի  
զաղափարները յառաջացուցին Մայիս-  
եան ուսանողական ըմբոստութիւնը: Կամ  
նո՛յնիսկ թէ՛ Հէրպլըթ Մարքիւզ անոր  
զաղափարախօսն էր: Իրականութիւնը  
շատ աւելի բազմաբան է: Կարելի է մի-  
այն հաստատել որոշ համանմանութիւն  
մը ձեռունի ընկերակցային եւ ըմբոստ  
ուսանողութեան մտածումներուն միջեւ:  
Այն տարբերութեամբ, որ եթէ ուսանող-  
ներուն մօտեցումը քիչ մը զգացական էր,  
Հէրպլըթ Մարքիւզի գործը գիտական  
շատ լուրջ վերլուծում է: Կարելի է ան-  
շուշտ տարակարծիք ըլլալ իրեն հետ,  
բայց անհրաժեշտ է նախ տեղեկանալ ա-  
նոր մտքերուն, գո՛նէ մասամբ հասկնա-  
լու համար ուսանողական շարժումնե-  
րուն խոր պատճառները:

Գիտակցօրէն կ'ընդհանրացնենք ե-  
րեւոյթը, որովհետեւ քիչ մը ամէ՛ն երկ-  
րի մէջ կարելի է նկատել երիտասարդա-  
կան խմորումներ, ցոյցեր, արինայի  
կռիւններ, պայքար՝ տիրող կարգերուն  
դէմ: Մեքսիքօ, Հնոս, Եգիպտոս, Փրա-  
կա, Փաքիստան, Լատին Ամերիկա,  
Մատրիտ, Ապիտան, Սան Ճրանսիքօ...

Ճի՛շդ է, երիտասարդութիւնը եւ  
մանաւանդ ուսանողութիւնը միշտ եղած  
է ըմբոստ: Մի՛շտ եղած է սերունդներու  
պայքար: Մի՛շտ գոյութիւն ունեցած են

երիտասարդութեան դայրոյթը շահա-  
գործող քաղաքական ուժեր: Անխիտանա-  
կան տարրեր, հասարակ բախտախնդի-  
րներ եւ ոճրագործներ մի՛շտ սպրդած են  
անոր շարքերուն մէջ: Կարելի է նաեւ  
ըմբոստութիւնը բացատրել Լօտիքեան  
բարդօյթով: Հայրերուն տիրապետու-  
թիւնը փոխանցուած ըլլալով ընկերային  
կարգերուն, երիտասարդը կը հակադրու-  
ի ո՛չ թէ հօրը՝ այլ իշխանութեան: Եւ  
կամ ըսել՝

- «Ուզածնին չին դիտեր»:
- «Համայնակարներու գործն է»:
- «Հաճոյասէր եւ անբարոյական ե-  
րիտասարդութեան մը ըմբոստացումը  
իշխանութեան դէմ»:
- «Սուր տարրեր գործի վրայ...»:
- «Միջազգային հիւանդութիւն», եւ  
այլն:

Այս եղաւ, գո՛նէ սկզբնական շրջա-  
նին, միջազգային մամուլին մեկնաբա-  
նութիւնը: Ծմբոստութիւններ կան ան-  
շուշտ այս հաստատումներուն մէջ:

Բայց կարելի է նաեւ հարց տալ -  
արդեօք այս շարժումները ընկերային  
ուելի լուրջ պատճառներ չունին: Արդ-  
եօք մեր քաղաքակրթութիւնը իրապէս  
համաշխարհային հիւանդութիւնէ մը չի  
տառապիր: Այդ պարագային, ողբերգա-  
կան սխալ մը պիտի ըլլար թէական բա-  
յտարութիւններու և հանդարտեցուցիչ  
ընդհանրացումներու մշուշին ետեւ ա-  
պաստանել:

Հէրպլըթ Մարքիւզ շատ վճռական  
պատասխան մը կուտայ այս հարցումնե-  
րուն:

- Այո՛, զբան մը ներած է՝ մեր քա-  
ղաքակրթութեան մէջ, յառաջացած  
նարտարարուեստի քաղաքակրթութեամբ  
մէջ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱՓԱՆՄԱՆ ԴՐՈՒԹՒՆԵԸ

Մարքիւզի տեսութեան համաձայն,  
քաղաքակրթութիւնը ծնունդ տուած է  
նիւթակամ նեղութեամբ (կամ անձկու-  
թեան) (pénurie) պայմաններու տակ:

Մանաւանդ սկզբնական շրջաններուն, ամէն մարդ անունդի եւ պատասպարումի մշտական հոգը ունէր եւ ստիպուած էր ամբողջ ուժն ու եռանդը վատնել ամէն-օրեայ դժնդակ պայքարի մը մէջ:

Նիւթական նեղութիւնը մարդուն համար պարտադրողական (répressif) է, կամ ճնշողական - եթէ այս թարգմանութիւնը կը նախընտրէք - : Բայց այդ պարտադրանքը, այդ ճնշողութիւնը բնական են, այսինքն կուզան բնութեան կողմէ եւ հաւասարապէս կու գան բալարին:

Նիւթական անձկութիւնը բառնալու համար ստեղծուեցաւ աշխատանքի քաժանան գրութիւնը: Մասնազիտանալով որո՛չ մարդի մը մէջ, մարդ աւելի պիտի արտադրէր, եւ ի՞րապէս աւելի արտադրեց անհրաժեշտ սպառողական նիւթները (սնունդ, հագուստ, որսորդական զէնք, երկրագործական առարկաներ, եւ այլն): Բայց աշխատանքի բաժանման շնորհիւ արտադրուած յաւելուածական բարեբեքը արդար կերպով չքաշխուեցան ընկերութեան անդամներուն: Ոմանք խլեցին ուրիշներու բաժինը, շահագործեցին ուրիշին աշխատանքը: Աւելին: Ծահագործումը կազմակերպեցին, գործածելով բիրտ ուժն ու սարսափը: Ատեղծուեցաւ ազատ մարդն ու ստրուկը, տէրն ու ծառան, իշխանն ու ճորտը: Փոքրուած մասնութիւն մը, որ գերծ ըլլալով նիւթական հողերէ - շնորհիւ ուրիշներու տղանջան աշխատանքին - կրնար նուիրելի դիտութեան եւ ուսման, կրնար վախելի արուեստի ստեղծագործման երջանկութիւնը: Եւ ամէնօրեայ տաժանուկիւր աշխատանքի բռնան ասի ճնշուող մեծամասնութիւն մը:

Աշխատանքի բաժանման դրութիւնը ստեղծեց ուրեմն նո՛ր բնշարքիւն մը (կամ գեր բնշարքիւն մը), որ այլեւս նիւթական անձկութեան պէս բնական չէր, այլ յառաջ կուգար ընկերային կազմակերպութեան որո՛չ ձեռք մը: Եւ կը յանդէր փոքրամասնութեան մը տիրապետութեան, մեծամասնութեան մը վրայ: Մեծամասնութեան մը շահագոր-

ծումին, փոքրամասնութեան մը կողմէ, երկար ժամանակ շահագործումը կարելի եղաւ շնորհիւ բիրտ ուժին, եւ յետոյ՝ իշխանութեան մասնաշատուկ կազմակերպութեան աւելի՛ ճարտար, աւելի՛ ձեռնտու միջոց մը:

Վերջ ի վերջոյ, քաղաքակրթութեան տմբողջ պատմութիւնը մարդուն ճնշողանքին պատմութիւնն է: Հազարաւոր տարիներէ ի վեր տիրապետութիւն (domination) եւ աշխատանքի շահագործում իրարու կապուած են: Բայց այդ երբե՛ք չի նշանակեր, որ ճակատագրականօրէն այդպէս պէտք էր ըլլար, կամ թէ միշտ այդպէս պիտի շարունակուի:

Մարքեւզ կը ճշդէ իշխանութեան եւ տիրապետութեան տարբերութիւնը:

Աշխատանքի բաժանման դրութիւնը ընդունող ամէն ընկերութիւն անորոշութեւիօրէն ստիպուած է ընդունիլ իշխանութեան (pouvoir, autorité) օրէնքը: Բայց ճոս իշխանութիւնը կապուած է գիտելիքի, հմտութեան, եւ յարմարութեան հետ: Անիկա սահմանուած է համայն ընկերութիւնը հետաքրքրող ձեռնարկներու եւ հաստատութիւններու բարուժ գործունէութեան: Ուրեմն՝ իշխանութիւնը չի կրնար ընդհանրական ըլլալ, անսահման ըլլալ: Ուրիշ խօսքով, ընկերութիւնը իշխանութիւն կրնայ տալ որո՛չ անձերու, կամ խմբակներու, մասնաւոր եւ ճշգուած մարդի մը մէջ, որովհետեւ անմէջ հմտութեան բաղադրանքը կապուած մը կառարելու: (\*)

Տարբեր է տիրապետութիւնը, որ կը կիրարկուի անձի մը կամ փոքրամասնութեան մը կողմէ, առանձնաշնորհալ զիրք մը ստեղծելու եւ այդ գերքը տեւաբար պահելու եւ ամբողջողելու մտադրութեամբ:

Իշխանութիւն եւ տիրապետութիւն

(\*) Այդպէս, նուազեղ կամ օգնականօրէն իշխանութիւն ունին - որովհետեւ հետոս են նալ կամ օգնական զեկալարելու, բարբ նաւորդներուն օգուտին համար:

խորապէս տարբեր են ուրեմն Մարգիւզի համար, եւ անհրաժեշտ է, որ տարբեր ըլլան: Եթէ մէկը ընկերային բնական երևոյթ է, միւսը արդէն չարիք է (կարեւոր է ճշդել այս կէտը, որպէսզի Մարգիւզ չըփոթուի անիշխանականներու հետ): Եւ եթէ զարեբու ընթացքին քաղաքակրթութեան արձանագրած յառաջդիմութիւնները միշտ կապուած են տիրապետութեան հետ՝ այդ երբեք չի նշանակեր, որ զուգորդութիւնը անխուսափելի էր, կամ թէ անխուսափելիօրէն այդպէս պիտի շարունակուի:

Ըստ Մարգիւզի, Մարքս առաջինն էր, որ հասկցաւ ճարտարաբանական յեղաշրջման կարեւորութիւնը, մարդուն համար: Վե՛րջապէս, շնորհիւ գիտութեան, ճարտարաբանութիւն եւ թեքնիքին՝ ստեղծուած էին նիւթական նեղութեան եւ պակասին դէմ վերջնական յաղթանակ մը տանելու միջոցները: Մեքեան մեծ չափով պիտի պակսեցնէր աշխատանքի մասերը, մարդուն տրամադրելով իրական ազատութեան պահեր, որոնք պիտի օգտագործուէին ճշուած մարդկութեան հսկայ զանգուածը բարձրացնելու համար, արուեստի եւ մշակութի ճամբով: Մեքեան մեծ չափով պիտի արտադրէր անհրաժեշտ իրողէններն ու սննդեղէնը, ա՛յնքան որ աւելորդ պիտի դառնար տիրապետութիւնը: Մեքեան պիտի ազատագրէր մարդը տիրապետութեան դալարուր ճնշումէն:

**ԲԱՅՑ, ԻՆՉ ՊԱՏԱՀՆՅԱԻ**

Այսօրուայ իրականութեան անդրադառնալով կարելի է թերեւս գոհ ըլլալ եւ լաւատես՝ ապագային նկատմամբ: Աշխատանքի մասերը կարեցած են: Վճարուած արձակուրդը ընդհանրացած է: Բնակութեան, երթևեկի, սնունդի, դպրոցի պայմանները բարելաւուած են: Խոհանոցի էլեգորական մեքենաները, սկսելով ստանարանէն, բրանզիպոքոսաիրոնները, հեռատեսիլը, ինքնաշարժը՝ հետզհետէ աւելի բազմաթիւ անձե-

րու - եւ ինչ որ յատկանշական է - աւելի՛ աշխատաւորներու սեփականութիւնը կը դառնան: Վճարման դիւրութիւնները հետըզհետէ կարելի եւ կարելու կը դարձնեն ունենալ բոլոր այն առարկաները, որոնք տակաւին քանի մը տասնեակ տարիներ առաջ պերճանք կը համարուէին: Ընկերային պահանջները, զործադուլները կամ զործառնելու հետ կնքուած համաձայնութիւնները շատ յաճախ կը յանդիս ամսականներու յաւելման եւ կեանքի մակարդակի իրական բարելաւման:

Պէտք է անմիջապէս ճշդել, որ նիւթական առատութիւնը ընդհանրական չէ: Կան աղքատ երկիրներ եւ հարուստ երկիրներ: Աղքատ երկիրներու կեանքի մակարդակը չի հետեւիր յառաջացած ճարտարաբանութեան ունեցող երկիրներուն մակարդակի վերելքին: Տեղ-գայլ կ'ընէ, յաճախ կ'իջնէ:

Նո՛յնիսկ հարուստ երկիրներուն մէջ կան մարդկային կեանքի մը տարբարական պայմաններէն զրկուած զանգուածներ: Պերճանք, շատութիւն, ապրանքի, սննդեղէնի անհաշիւ միւսում թաղի մը մէջ: Ցեխ, դպրոցէ զրկուած մանուկներ, անգործներու խումբեր, մէկ սենեակէ մէջ թիմուած ընտանիքներ, զրկանք եւ թշուառութիւն միեւնո՛յն քաղաքին մէկ ուրիշ թաղին մէջ:

Եւ գրեթէ ամէն երկրի մէջ ընկերային խլրտումներ եւ պահանջներ, որոնց էութիւնը միշտ ալ նիւթական չէ: Լատին Ամերիկան դարձած է անստոյգ վարչամեծներու եւ փարթիզամական կոխներու թառեքովայր: Ֆրանսայի մէջ ուսանողները կ'ըմբոստանան, կազմալուծելով երկրին տնտեսական դրութիւնը: Միացեալ Նահանգներու սեւերը «տաք սմառներ» եւ ձմեռներ կը խոտանան: Տակաւին Սպանիա, Փաքիստան...

Յետոյ, այդ նիւթական առատութիւնը - անկախ այն իրողութենէն, որ արդարօրէն եւ ընդհանրական կերպով չէ բաշխուած - պէտք է ստացուէր շատ աւելի նուազ աշխատանքով եւ պարտադրանքով, եթէ չըլլար շահագործողներու

փոքրաթիւ՝ բայց սպառողական մեծ մասում կատարող դասակարգը :

Քողովը առ այժմ, «Երբորդ Աշխարհի» սովահար բազմութիւնները եւ նկատի առնենք յառաջագած նարտարար-ւետի երկիրներում աշխատաւորը, այն՝ որ քիչ թէ շատ բարեկեցիկ է :

Մարքիզ կը հաստատէ, որ յառաջագած նարտարարուեստի քաղաքակրթութիւնը, փոխանակ ազատագրելու մարդը նեւթական կարիքներու պարտադրողական կապանքէն, զայն ամբողջապէս ենթարկէջ փոքրամասնութեան մը տիրապետութեան, ըլլա՛յ Արեւմուտքի մէջ, ըլլա՛յ Արեւելքի: Բայց նորութիւնը այն է, որ հիմա կը գործածուին թեքնիքն ու պիտութիւնը, փոխանակ զսպողական ըրբոտ ուժին եւ ուրսափին: Երկուքն ալ - այսինքն թէ՛ Արեւմուտքի նեւթապաշտ քաղաքակրթութեան եւ թէ՛ Արեւելքի սովետական կարգերուն հասարակաց թշնամին՝ ազատութեան ուրաւակոմն է: Եւ տակաւին արեւմտեան «ժողովրդապետութեան» որդեգրած թեքնիքը այնքան ազդեցիկ է, որ մարդիկ չեն անըքաղաւանար, թէ որքա՛ն պերի են դարձած տնտեսական եւ քաղաքական ուժերուն, որքա՛ն կորսնցուցած են մտածումի ազատութիւնը, որքա՛ն նեղցած է իրենց մտային աշխարհը: Կը կարծեն, թէ «ազատ» են, մինչդեռ հոս հպատակներն են հանրային կարծիքին, եւ անգիտակից հետեւողները «հանրային կարծիք» ստեղծող կազմակերպութիւններուն: Արդարեւ՝

- «Տնտեսական ազատութիւն ունենալ պէտք է նշանակէր ձերբազատուած ըլլալ նիւթական լեզերէն, ձերբազատուած ըլլալ տնտեսական ուժերու եւ ազգակներու բռնութենէն, ձերբազատուած ըլլալ օրապահիկը շահելու տնտեսական միջոցներէն»:

- «Քաղաքական ազատութիւն ունենալ պէտք է նշանակէր ձերբազատուած ըլլալ բաշտը այն քաղաքական ուղղութիւններէն, որոնց իրական հակադէմքը կը գտնուի ուրիշներու ձեռքը»:

- «Մտքի ազատութիւն ունենալ

պէտք է նշանակէր, որ վերականգնած է անձնական մտածողութիւնը - ցարդ խնդրած զանգուածային քարոզաւթեան բռնան տակ: Թէ «համըային կարծիք» ստեղծողներ չկան, ո՛չ ալ կայ՝ համըային կարծիք»:

- «Եթէ այս պահանջները անբնական շեշտ մը ունին, այդ չի նշանակէր, որ անիբրականալի են: Այդ կը նշանակէ որ անոնց իրականացման արգելիք հանդիսացող ազգակները չափազանց զօրաւոր են»:

Ուրիշ խօսքով՝ քիչ շատ բարեկեցիկ մարդը այսօր դարձած է արտադրող եւ սպառող մեքենայ, զուրկ անհատականութենէ, զուրկ անձնական մտածումէ, հաւատարիմ հետեւողը այս կամ այն տնտեսական կամ քաղաքական ուժին: Զուրկ մանուկն իր գոյակիցակը բարեփոխելու ձգտումէն, քանի կը կարծէ անկախ ըլլալ: Իրեն համար, «կեանքի օրէնքը», տիրող դրութիւնն է, եւ մտքն չ'անցնիր, թէ այդ «օրէնքը» կըրնար տարբեր ըլլալ:

Ըստ Մարքսի, եթէ ազատութեան աստիճանը կարելի է չափել ազատ աշխատանքի ժամերով, այլեւս ազատ մարդ գրեթէ չկայ: Արեւմտեան գործատէրերը եւ սովետական դիւանակալները (bureaucrate), ամերիկացի եւ համայնակար աշխատաւորները, բոլորն ալ դերի դարձած են արդիւնաբերութեան սկզբունքին: Պէտք է աշխատիլ եւ աբտադրել: Պէտք է անընդհատ աշխատիլ եւ անընդհատ արտադրել: Փոխանակ մարդը ազատագրելու, աշխատանքը մարդը վերի կը դարձնէ, փոխանակ միջոց ըլլալու, կ'ըլլայ կարծես պարզօրին նպատակ: Մեքենան եւ էլեկտրոնիքը փոխանակ զայն փոխարինելու, աշխատանքի մե՛լը կը փոխեն եւ մարդը կը մնայ շնչին փոքրամասնութեան մը ամբողջական տիրապետութեան տակ, «աշխատանքի-միոյթ» մը (unité-travail), այսինքն պարզ արտադրողական ազգակ:

Ճնշողական միջոցներէն ամենատարածուածը գործազրկութեան շանթածն է: Քիչ թէ շատ բարեկեցիկ բանուորը, պաշտօնեան կամ նո՛յնիսկ բարձր պաշ-



տունատարը, բոլորն ալ ծայրը ծայրին հասնող պիւտոնէ ունին: Քիչ շահողը քիչ կը ծախսէ, շատ շահողը աւելի կը ծախսէ, ամէն մարդ «հարկադրուած է» տնտեսականներուն հետ եւ կրբեմն անօնցմէ առաջ բարձրացող գիտնքի մակարդակին մը հետեւիլ: Դժուար է խնայողութիւն կատարել եւ պահեստի դրամ ունենալ «գէշ օրերու» համար: Որով՝ դործադրողութեան վախազդեցիկ հետեւկարը պատճառ կ'ըլլայ, որ մարդիկ ենթարկըլին տնտեսական եւ քաղաքական ուժերու ճնշումին, իրենց ունեցածն ալ չկորսնցնելու մտահոգութեամբ: Միւս կողմէն, անաշխարհներ ապահովելու կամ ալ իրենց ունեցած մենաշնորհները ամբարկողներու համար, տնտեսական եւ քաղաքական միեւնոյն ուժերը ճնշում կը յանդիմանն ժողովրդագիտական կառավարութիւններու վրայ, դործատուներ եւ պաշտօնեաները զանդուածային կերպով պարծիլ արձակելու եւ ընկերային խոտմութիւն ստեղծելու սպառնալիքով (առաւել կամ նուազ քողարկուած ձեւերով, եւ կատարուածութիւններու առաւել կամ նուազ մեղրակցութեամբ):

Աւելորդ է ազատ ընտրութիւններու մասին խօսիլ, երբ միխոններ կը ծախսուին ընտրողներուն վրայ ազդելու համար: Խորքին մէջ ընտրողը անձնական ընտրութիւն մը ընելու կարելիութիւնը չունի: Իրապէս ազատ ընտրութիւններ տեղի կ'ունենան, երբ չկան զանգուածներ՝ այլ քարոզչութիւններէ ձերբազատուած անձեր: Ժողովրդագիտական դրութիւնը, յառաջացած ճարտարարուեստի երկիրներուն մէջ, ա՛յնքան ամբողջատիրական դարձած է, որ «օրինաւոր» դիմադրութիւն մը բացարձակօրէն անպօր կը զառնայ: Տիրող կարգերը երկու միջոց ունին դիմադրութիւնը չէզոքացնելու համար՝

- Համոզել (persuasion) :
- Տարհամոզել (dissuasion) :
- Համոզել = քարոզչութիւն (մամուլ, դպրոց, համայնարան, ուստի, հեռատեսիլ, սիւնիս...):
- Տարհամոզել = շանթաւ, գանձաւ

յին կարծիքը, քաղաքական պարտագրանք, տնտեսական ճնշում: Երբեմն՝ ոստիկանութիւն, բանտ եւ բիրտ միջոցներ: Աւելի յաճախ՝ անուղղակի սպառնալիք, հետեւեալ ձեւով: Ահազանգ՝

- Համայնապայտակամ վտաճագ: Ծարքերը ամբողջենք, միանանք (եւ անշուշտ ... մոռնանք շարքերը բաժնող պատճառները): Կամ՝

- Պայտա՛ր Էմպիրիայիզմի դէմ: Ծարքերը ամբողջենք, միանանք (եւ անշուշտ ... մոռնանք համայնավար կուսակցութեան բռնատիրութիւնը):

Արդէն ամբողջ դրութիւնը նախ եւ առաջ զինուորական է, եւ իր հասարակարգութիւնը կը պահէ շնորհիւ զինուորական աւարիւ պիտոններու, իբրեւ թէ պաշտպանուելու համար, այդպէս կոչուած՝ անհատական կամ ազգային ազատութիւնները, կամ ալ ամբարկողներու համար աշխատատեղ դասակարգին նուաճումները...:

Տիրական պատերազմներն ալ օգտագործուին, թէ՛ ժողովուրդը համոզելու համար որ զլուտնը կը սպառնայ, եւ թէ՛ տնտեսական խելացիոր մտնումը շարունակելու համար (Մարքիզ նկատի ունի մասնատրապէս Վիեթնամը):

Որովհետեւ, չի բաւեր աշխատիլ եւ արտադրել: Պէտք է նախ սպասել, շատ եւ շուտ սպասել: Պէտք է մսխել: Պահանջներու յարձուն վերելքը սիւսքեմի վերածուած է: Ամէն միջոցներով եւ մանաւանդ դիտական տուեալներու վրայ հիմնուած քարոզչութեամբ, տնտեսական ուժերը ժողովուրդին մօտ կ'առաջացնեն արուեստական նոր պահանջներ եւ ճորտաձեւութիւնները - ազդանքի նոր տեսակներ եւ յաւելեալ քանակներ ծախելու համար: Մարդիկ պիտի սորվին դէմ, շուտ կերպով ծախսել, դրեթէ առանց գործածելու նետիլ՝ եւ նորը, ուրիշը դնել: Մինչ անդին, միխոնուորներ անթի կը մեռնին:

Բազմութիւնները կաղապարելու եւ անոնց դնելու մղումը աւելցնելու նպատակով լայնօրէն կը գործածուի սեռային բնազդը, ամենանախնական ձեւին տակ:

Իր բարձրագույն կերպարանքէն ամբողջովին պարպուած, սեռը դարձած է տիրապետութեան միջոց: Անոր կ'օգնէ ծախելու օճառ եւ սառնարան, սեռը կ'օգնէ ընտրելու քաղաքապետ եւ երեսփոխան, սեռը կ'օգնէ մանաւանդ հեռացնելու համար մեծ թշնամին, ազատութեան ուրակները:

Նոյնիսկ արուեստը, որ ինքնին հաստատուած իրականութեան գէժ քմբոստացում մըն է, ի հաշիւ արուեստագետին յատուկ ուրիշ իրականութեամբ մը, այլեւ կորսնցուցած է - Ո՞՞ջ - ըսելու կարողութիւնը: Արուեստագէտներն ալ, իրենց մեծամասնութեամբ, (այլաստաւորներուն եւ պաշտօնեաներուն պէս) չեն կրնար, ո՛չ ալ կ'ուզեն հակառակիլ: Յառաջացած ճարտարարուեստի քաղաքակրթութիւնը գինուորագրած է զանոնք իր սիւսքնմին մէջ եւ կը գործածէ իրեն ի նպաստ: Արեւմուտքի մէջ զլիսաւորուպէս վաճառականութեան համար, իրբեւ քարոզչական գործիք, Իսկ Արեւելքի մէջ տիրող կարգերուն գովքը կատարելու համար - ընկերվարական զգրական իրականութեան արուեստի պիտակին տակ:

Իրաւ արուեստագէտներուն կը մնայ իրենց գծաչափները արտայայտելու մէկ միջոց: Ընտրել տիրող կարգերէն զուրս, իրականութենէն ամբողջովին կարուած, ընդունուած պատշաճութիւններուն հակադրող նիւթեր եւ միջոցներ: Այսինքն՝ անմերդաշնակութիւն (disharmonie) եւ վերացականութիւն (abstraction): Անհնչակամութիւն (dissonance) եւ անմայնականութիւն (atonalité): Ոտրճրդային Միութիւնը կը հալածէ արուեստի նորագոյն արտայայտութիւնները, որովհետեւ հոն՝ զէկամար տարրը շատ լաւ կը հասկնայ, որ անոնք բազմ'ե ան տիրող կարգերուն դէմ:

ԳԻՏՈՒԹԻՒՆ: ՈՒՍՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՇԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵԴԱՍԱԿԻՑՆԵՐ...

Ոտրքին մէջ թէ՛ Արեւմուտքը եւ թէ՛

Արեւելքը կը ջանան հերքել (եւ կը յանդիմանան, այսինքն իրենց զանգուածներուն ընդունիլ կուտան), հաստատուած կարգերէն դուրս ո՛րիւէ գերակայանում (transandant) արժէքի մը գոյութիւնը:

Սովետական իրականութիւնն ու գաղափարախօսութիւնը, ամերիկեան կեանքի պայմաններն ու փիլիսոփայութիւնը այս ձեւով անվիճելի կը դառնան, քանի չկայ գերագոյն արժէքներու հետ բաղդատութեան մը կարելիութիւնը, քանի չկան գերագոյն արժէքներ:

Գիտութիւնը, արհեստագիտութիւնը (technique) եւ ուսողութիւնը մեծապէս կ'օգնեն յառաջացած ճարտարարուեստի քաղաքակրթութեան, իբ այս ձգտումին մէջ:

Անոնք մէկ տարածութիւն (dimension) ունին - զիմչ ար է: Կուսումնասիրեն ընտանի երեւոյթները, կը պնդեն իրականութիւնը, յարաբերութիւնները կը հաստատեն գոնագոն զէպզերու միջեւ, պատճառներ եւ բացատրութիւններ կը փնտռեն, բայց արժէքի գաղափարութիւն չեն ընեն: Այսինքն չեն քննարկ զիմչ ար պէտք է ըլլաք՞ը, հարց չեն տար, թէ այդպէս լա՞ւ է թէ՛ գէ՛շ, թէ՛ ուրիշ կերպ մը նախընտրելի չէ՞ր արդեօք:

Մինչ իրական փիլիսոփայութիւնը երկու տարածութիւն ունի

- այն ինչ որ է՛, եւ
- այն ինչ որ պէ՛տք էր ըլլար:

Երկու տարածութիւն, այսինքն երկու մօտեցում, որոնք կրնան իրարու հետ համեմատուիլ: Իրականութենէն անդին կան ուրեմն գերակայական արժէքներ, որոնց հետ բաղդատելով կարելի է իրականութիւնը դատել: Այսինքն՝ կարելիութիւնը ունենալ մերթելու իրականութեան պարտագրանքը եւ ձգտել ուրիշ իրականութեան մը:

Գիտութիւնը «անիրական» կը նկատէ բոլոր այն գաղափարները, որոնք չեն կրնար գիտական յիշուով սահմանուիլ: Այսպէս՝ Լաւը, Գեղեցիկը, Արարութիւնը, Ոսողութիւնը, եւ այլն, «անիրական» են:

Եւ մեր քաղաքակրթութեան ամէնէ՛ն

լուրջ նուաճումներ, դիտություններ, կը մղէ մարդիկ ընդունելու ամէնէն անլուրջ բաներ – քարոզչութիւնն ու ծանուցումները: Ճանաչու եւ կարգախօսներու աշխարհի մը մէջ, ուր բառերը կը յենուին հաստատուած կարգերուն վրայ, մարդիկ վերջ ի վերջոյ կ'ընդունին աթոճական քաղաքաշինութիւնը եւ կամ «պերճ ապաստանարան» մը աթոճական շրջապատակումներուն դէմ, շնորհիւ գիտական փրփակման:

Եւ որքան դիտություններ յառաջանայ, եւ որքան գիտական միտքը տարածուի ուրիշ ճիւղերու վրայ, ա՛յնքան կը նեղանայ մարդուն մտային աշխարհը, երկու տարածութիւնն է՝ կ'իջնէ մէկ տարածութիւն: Արդի «Միասարած Մարդուն» (\*) համար ամէն բան է՝ ինչ որ է:

**ԱՄԲՈՂՋԱՏԻՐԱԿԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԸ ԼԵՋՈՒՆ**

Յառաջացած ճարտարութեան քաղաքակրթութեան գործածած լեզուն յատկանշական է թէ՛ որպէս գործիք, թէ՛ որպէս հայելի:

Որպէս գործիք, ան կը ծառայէ այդ քաղաքակրթութեան հիմնական ձգտումներուն իրագործման:

Որպէս հայելի, անոր ուսումնասիրութիւնը յատկօրէն ցոյց կու տայ ամբողջատիրական ընկերութեան մը յատկանշիչները:

Այդ լեզուն անմիջապէս կ'ընթանայ դէպի դրական մտածումը եւ սխալմամբ ի՛նչ կերպով կը յարձակի ամէն ինչի դէմ, որ փնտրատութիւն է եւ դերակալութիւն: Կը ջնջէ երեւոյթի եւ իրականութեան, ազգային եւ պատահարին, ստորագիծի եւ նիւթին միջեւ գտնուող տարբերութիւնները, այսինքն՝ ճանաչողութեան պրոցեսին հասնող միջնորդ տարրերը: Ան կը ձգտի անմիջապէս նոյ-

(\*) «Միասարած մարդ» ամսագրէ Լ. Մարքիզի կտրուած գրքի հիմնադրամ:

նացնել իրականութիւնը եւ ընդունուած ճարտարութիւնը, էութիւնը եւ լինելիութիւնը, բան մը եւ իր պաշտօնը: Կօքը մեծ արժէք չունի, բա՛նն է, որ կը հրամայէ եւ կը կազմակերպէ, կը մղէ մարդիկ որ գործեն, գնեն եւ ընդունին: Կօքը կը դառնայ պարզ հաստատում մը, որուն պայտօնական իմաստը ո՛չ կարելի է հաստատել, ո՛չ ժխտել, ո՛չ ալ փոխել: Հաստատում մը՝ որ կարելի է միմիայն ընդունիլ:

Քաղաքական լեզուն մէջ մա՛նաւանդ, պատմութիւն, հաւատարմութիւն, ժողովրդավարութիւն, խաղաղութիւն բառերը կապուած են կարգ մը անմիջական եւ ստորագիծիներու հետ, որոնք անմիջապէս եւ «ինքնաբերաբար» կը յայտնուին բառին հետ: Այսպէս, Արիւժուտը մէջ զազատ բառը իր ետեւէն անպատճառ կը քաշէ անտեսութիւն, անձ կամ ընտրութիւն բառերը՝

- Ազատ տնտեսութիւն...
- Ազատ ամուսն...
- Ազատ ընտրութիւն...:
- Իսկ Արեւելքի մէջ՝
- Գործաւորներ եւ գիւղացիներ...
- Համայնավարութիւն եւ իրագործում (համայնավարութեան իրագործումները):
- Ընկերավարութիւն եւ կառուցում (ընկերավարութիւն կառուցանել):
- Թշնամի դասակարգ եւ բնազդներ...
- Էմպէրիալիզմ եւ դատարարութիւն...

Միեւնոյն անգամները բառին ընկերացնելու եւ անվերջ կրկնելու երեւոյթը խօսքին կու տայ հիքնատակամ տարազ մը եւ կ'արդիւնէ, որ տարբեր անգամներ (թերեւս տեղի ճիշդ) գործածուին: Լեզուն, դառնալով անմիջական իրականութեան շուրջ, մերժելով վերացական եւ խորհրդածական տիրմանը, չի կրնար մերկացնել անմիջական իրականութեան հարկ թաքցնուած ազգայնները եւ անոնց պարունակութիւնը: Գոց լեզու մըն է, որ չի բացատրեր, այլ կը հաղորդէ որոշումը, հրամանը, տիպա-

քը: Նո՛յնիսկ երբ բառ մը կը սահմանէ, պարզ գատորոշում մը կ'ընէ «լաւին» եւ «զէչին» միջեւ: Այսինքն՝ արժէք մը կը շարիէ ուրիշ արժէքով մը: Իբրեւ բանապետութեան մը լեզուն՝ անիկա չի փնտեր սխալին եւ ճշմարտին տարբերութիւնը, պարզապէս կը հաստատէ եւ կը պարտազրէ:

Գիտենք անշուշտ, որ լեզուն քաղաքական քարոզչութեան ծառայեցնելու փորձը միշտ գոյութիւն ունեցած է: Բայց նոր է այն իրողութիւնը, որ մարգիկ, նո՛յնիսկ երբ չեն հաստատար քաղաքական լեզուին ծիսական եւ կախարչական հաստատումներուն, կը գարծնն օակայնն այնպէս՝ թէ այդ հաստատումները միշտ ըլլային: Առեւտրական ծանուցումներուն պէս, մարգիկ միշտ չեն հաստատար բոլոր քարոզչական սուտերուն, բայց կը գնեն:

**ՆՈՐԱՐՈՂԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՅԱՏՈՒԿ**

Նախ Հ. Մարքիզ կը հաստատէ, որ Պորճրդային Միութեան ներկայ կարգուսարքը հասարակաց ոչինչ ունի ընկերվարութեան հետ: Հոն կիրարկուած դրութիւնը չեղած է մասնաւորապէս ընկերվարութեան մարքսեան ըմբռնումէն:

Գրամատիրական աշխարհի եւ Պորճրդային Միութեան դէմ ուղղած ընդհանուր քննադատութիւններէն անկախ, Հ. Մարքիզ այս վերջինին յատուկ երեք ժխտական երեւոյթներ կ'արձանագրէ:

Ա. Իրական ընկերվարական վարչակարգի մը տակ՝ իշխանութեան հակաշիտը պէտք է կատարուի ժողովուրդին վարի խաւերուն կողմէ: ԳեկաՎարները պարզապէս ներկայացուցիչներ են:

Սակայն, ինչպէս ըսինք արդէն, Լեւինի օրերէն սկսեալ՝ դասակարգային պիտակցութիւնը, Պորճրդային Միութեան մէջ, մենաշնորհն է, աշխատաւորներու մեծամասնութիւնէն անկախ՝ «յառաջամարտիկ» ուժի մը, որ համայնվար կուսակցութիւնն է: Ուրիշ խօսքով, իրական իշխանութիւնը կուսակցութեան

մեռքն է, եւ ի՛նքը, կուսակցութիւնը պատասխանատու չէ ժողովուրդին առջեւ, այլ պիւրոյի մը առջեւ՝ որում անդամներն ալ կուսակցութիւնը կ'ընտրէ: Աշխատաւորներու տիքաքառքան, խորքին մէջ, կուսակցութեան տիքաքառքանն է:

Բ. Ըստ Մարքսի երկու տեսակ աշխատանք կայ:

– Կապտուած (aliéné) աշխատանքը, որմէ կարելի չէ ամբողջովին խուսափիլ, քանի անոր շնորհիւ ընկերութիւնը պիտի արտադրէ սպառողական ներթեր:

– Ազատ ժամանակի աշխատանքը: Առաջինը պարտադիր է, մինչ երկրորդը համոյթի համար է:

Կապտուած աշխատանքը կրնայ գիրմնշողակամ ըլլալ, երբ աշխատանքին արդիւնքը, ընկերային անարդար բաժանումի մը դրութեամբ՝ փոխանակ ամբողջութեամբ աշխատաւորին երթալու, կը ծառայէ տիրող դասակարգին մենաշնորհներուն:

Պորճրդային Միութիւնը չի կատարեր երկու աշխատանքներու միջեւ ո՛րեւէ ճշդում: Ան աշխատանքը կը փոռարանէ յանուն արդիւնաբերութեան: Աշխատանքը դարձած է տեսակ մը կրօն, որուն պէտք է զոհարերուիլ: Անշուշտ սկզբնական շրջանին, յեղափոխութեան եւ հակա-յեղափոխութեան հսկայական քանդումներէն ետք, կարեւոր էր շարաշար աշխատիլ եւ արտադրել: Բայց ամէն բան կը ցուցնէ, թէ մինչեւ հիմա կացութիւնը նոյնն է: Ընդհակառակն, Պորճրդային Միութիւնը կապտուած աշխատանքը «սրբացնելով» կը նպաստէ դիւանակալութեան մը արեւակալութեան շարունակութեան եւ ամբապնդման:

Տեսական գետնի վրայ, ճիշդ է, նաեւ որ Պորճրդային Միութեան համար ո՛րեւէ աշխատանք արժէք մը չէ: Արժէք է միայն «ընկերվարութեան եւ համայնավարութեան» համար մղուած աշխատանքը: Բայց որովհետեւ Պորճրդային Միութիւնը, ի՛նք է որ կը սահմանէ, թէ ի՛նչ է ընկերվարութիւնը եւ համայնա-

վարութիւնը, եւ ո՛րեւէ կարելիութիւն չի տար աշխատաւորին ընտրութիւն մը կատարելու (այսինքն՝ այդ սահմանումը մերժելով՝ չաշխատելու), խորքին մէջ փառասանութիւնը կ'երթայ պարտադրուած, բռնատիրական, ուրիշ խօսքով կապտուած աշխատանքին:

Գ. — Խորհրդային գաղափարախօսութիւնը Հիմնուած է փոքրաթիւ քանի մը տարազնեցող վրայ, որոնք կրկնուելով ծիսական արժէք մը առած են: Երբ իրականութիւնը չի համապատասխաներ տարազնեցողին, իրականութիւնն է, որ կը սխալի եւ ո՛չ թէ տարազը, որ սկզբումէնով անսխալակամ է: Սովետական համայնավարին պարտականութիւնն է իրականութիւնը գարձարցնելը կուսակցութեան տեսակէտին: Եւ այս, ո՛չ միայն ներկային, այլ նաեւ անցեալին մէջ (պատմութեան «վերամշակումը»): Ո՛չ միայն խորհրդային իրականութիւնը, այլ նաեւ դրամատիրական աշխարհին իրականութիւնը: «Փրատա»-յի Նիւ Եորքի թղթակիցը կը գրէ, թէ քաղաքին ժողովրդային գրատան մէջ ո՛րեւէ յիշատակութիւն չէ գտած կարմիր բանակին մասին, մինչդեռ հինգ հարիւրէ աւելի հրատարակութիւններ կը գտնուին համ, «կարմիր բանակ» խորագրով: Մակայն քանի է միջբրիտան Միացեալ Նահանգները սխալմամբ ի՞նչ հակաուկրութիւն մը ունին Խորհրդային Միութեան հանդէպ (ընդունուած տարագ), այդ հրատարակութիւնները պէտք է որ չդունուէին Նիւ Եորքի մէջ: Ուրիմն չեն գտնուիր... Ատիկա պարզ սուտ մը չէ: Համայնավարութեան ծիսական տարազները արդարացնելու ձգտում մըն է: Աւելի ճիշդը հաւատքի հարց է, կրօնական խնդիր է, ուր բանականութիւնը գործ չունի:

Հ. ՄԱՐԻՒԻԻԻ ԵՋՐԱԿԱՑՈՒՄԸ

Ուրիմն յառաջացած ճարտարարւեստի քաղաքակրթութիւնը, ըլլա՛յ Արեւմտաքի, ըլլա՛յ Խորհրդային Միութեան մէջ — եթէ նիւթական որոշ բարո-

րութիւն մը ապահոված է մարդկութեան — անկէ խլած է թանկագին արժէք մը՝ — ազատութիւնը:

Անհրաժեշտ են ո՛չ թէ բարենորոգումներ եւ քանակական փոփոխութիւններ՝ այլ ամբողջական յեղափոխութիւն մը, ազատագրելու համար մարդը տիրապետող տնտեսական եւ քաղաքական ուժերու բռնատիրութենէն, անոր վերադարձնելու համար անձնական մտածողութիւնը, անհատականութիւնը եւ տնտեսական անկախութիւնը:

Բայց ո՛վ պիտի առաջացնէ յեղափոխութիւնը: Աշխատաւոր դասակարգը, ինչպէս կ'ըսէր Մարքս: Համայնավար կուսակցութիւնը:

Մարքիսը չի հաստատար որ անոնք այսօր յեղափոխական ազդակներ են: Ընդհակառակն:

Աշխատաւորները որ նախապէս ընկերային փոփոխութիւններուն թթիւմըն էին, հիմա նիւթական համեմատական բարօրութեան մը բերումով դարձած են ընկերային տիրող կարգերուն ամբարշտան ազդակները: Զուր է անոնցմէ յեղափոխութիւն յուսալ:

Բայց ժողովրդային պահպանողական խաւերէն աւելի վար կայ լքուածներու, շահագործուածներու բազմութիւն մը — անգործներ, սուեր, հալածուածներ... Բոլոր անոնք, որ յառաջացած ճարտարութեամբ քաղաքակրթութիւնը չի կըրնար գործածել, իր դրութեան կապիւլ այս կամ այն ձեւով, իր մէջ համադրել եւ չնգրգայնել:

Անյոյաներ, որոնց կեանքը զիբնք կը մղէ անմիջապէս վերջ դնելու անհանդուրժելի պայմաններուն: Որով՝ իրենց գիմադրութիւնը յեղափոխական է, հակառակ որ անոնք չունին այդ գիտակցութիւնը: Գոսակարգ մը, որ այլեւս կորսնցնելիք բան չունի:

Երբ անգէն, անպաշտպան, քաղաքին փողոցներուն մէջէն կը զարն ամեհատարական իրաւունքներ պահանջելու համար, գիտեն թէ իրենց պիտի հակադրուին ոտակական շուներ, բիրիբ, հեղձուցիչ ուսմբեր: Գիտեն թէ է-

րենց կը սպասեն բանալը, կեդրոնացման կայաններն ու մահը: Բայց չեն կենար, կը քալեն:

Եւ այս իրողութիւնը թերեւ չըջանի մը վերջն է եւ նոր չըջանի մը սկիզբը: Մակայն ո՛չ մէկ պատճառ ունինք յուսալու, որ անպատճառ բաւ վերջ մը պիտի ըլլայ:

Ամուք Հաստատուած ընկերային կարգերը տնտեսական եւ արհեստագիտական մեծ միջոցներ ունին: Կրնան թշուառներուն եւ Հալածուածներուն մասնաւոր գիշումներ ընել: Զինուորական ուժերով կրնան դիմապարտել ո՛րեւէ ահազանդային վիճակ:

Բայց եւ այնպէս, յառաջացած ճարտարութեան մեր քաղաքակրթութեան սպաննացող վտանգը կու գայ այդ անյայտ բազմութիւններէն:

Կացութիւնը կը նմանի Հոսթէլական կայսրութեան (վերջին դարուն) եւ բարբարոս Հորդաններուն: Ո՞վ կրնար երեւակայել որ բարբարոսները պիտի ճշգրտէին աշխարհազոր Հոսթէլական քաղաքակրթութիւնը միշտ ըլլալ որ մեր քաղաքակրթութիւնն ալ վերջանայ Հոսթէլական Հակառակն ալ կրնայ պատահի: Կարելի է միայն կրկնել Վալթեր Պէմ-ժառնգի հետ:

«Մեր միակ յոյսը, անյոյսներուն վրան է»:

Հ. Մարքիւզ չի հաւատար նաեւ, որ ուսանողութիւնը կրնայ յեղափոխական իրական ուժ մը դառնալ: Ուսանողները եւ ընդհանրապէս մտաւարականները պարտականութիւնը ունին արթնանելու Հարածուածներու դասակարգային գիտակցութիւնը, ուշադիր հսկելու յառաջացած ճարտարութեան քաղաքակրթութեան Հոլովոյթին, դտնելու համար տկար կէտերը եւ անդիմադրելի պայթարով յարձակելու համար այդ տկար կէտերէն:



Աշխատեցանք շատ պարզ ձեւով ներ-

կայացնել Հ. Մարքիւզի դաղափարները: Քստենբորգ դարու մեր սպառողական, արհեստագիտական եւ յառաջացած ճարտարութեան քաղաքակրթութեան դէմ էր ըրած կրքոտ դատապարտութիւնը անշուշտ ճշմարտութեան բաժին մը կը պարունակէ: Բայց չենք կրնար համաձայն ըլլալ իր հետ, երբ ընկերային յեղափոխութեան ճամբով կատարուելիք բարեփոխութիւնը անպատճառ կը կապէ սեւերու, թշուառներու, Հալածուածներու եւ անյոյս բազմութիւններու հետ: Ուսանողներն ալ չեն բաժնէր այդ եղբայրացութիւնը եւ կը հաւատան, թէ իրենց շարժումը կրնայ ընկերութիւնը յեղափոխել, քանի երիտասարդ են, մտային պատրաստութիւն ունին եւ ընկերութեան սխալներէն մէջ տակաւին չեն ազուցուած:

Իսկ թէ մարդկութեան Երջանկութիւնը մի՛միայն յեղափոխութեան ճամբով պիտի գայ, այդ ալ քննելի հարց է: Խորքին մէջ, Հ. Մարքիւզ յուսահատ փիլիսոփայ մըն է, կը քննադատէ, կը ձաղկէ, բայց դրական նոր ուղղութիւն ցոյց չի տար: Մեր քաղաքակրթութիւնը բանտ մըն է, կ'ըսէ, պէտք է այդ բանտը քանդել եւ անոր տեղ յարմար տուն մը կառուցանել: Բայց երբ կը հարցնեն, թէ ի՞նչ պիտի ըլլայ նոր տան յատակագիծը, կը պատասխանէ.

- Իր մանրամասնութեանց մէջ չեմ գիտեր, թէ ի՞նչ պիտի ըլլայ, բայց գիտեմ թէ ինչ պիտի է որ չըլլայ:

Այսի՞նքն: Գառաջացած ճարտարութեան քաղաքակրթութիւնը պէտք է փոխարինուի նոր քաղաքակրթութեամբ մը, ուր ինքնընտել պիտի ըլլան:

- Գաղութային պատերազմները,
  - Ֆաշիստ բռնատիրութիւնը,
  - Տիրապետութիւնը,
  - Պարականութիւնը քաղաքացիներու միջեւ, եւ այլն:
- Ուրիշ անգամ կ'անդրադառնանք ի՞նչ դաղափարներուն, ըստ էութեան:

Լ ՄԿՐՏՁԵԱՆ

**ՊԵՏԱԿԱՆ ԻՐԱԻԱԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ**

**ՁԵՒԱԻՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

1.

Որչորդահայ կեննքի ելիւնքները տեսագալտի մէջ պահելու եւ այս կամ այն նկատուումով հանրագումարի բերելու փորձ անելիս՝ անմիջապէս նկատուում է եւս մի յատկանշական երեւոյթ. դա զնայով աւելացող հետաքրքրութիւնն է իրականութեան իրաւագրական հարցերի ուղղութեամբ: Ինչպէս ի պաշտօնէ մասնագէտներին, այնպէս էլ հասարակութեան այլեւայլ՝ առաջատար ու շարքային խաւերի կողմից: Դրանում հաստատանալու համար հարկաւոր է այժի առջեւ բերել ժամանակ առ ժամանակ առաջարկուող զանազան օրինազօնների հասարակական զննարկումները, երբ անհամեմատ շատ մարդիկ են մասնակցում, ըստ հնարաւորին աւելի անկաշկանդ ու բանիմաց դիտողութիւններով: Հարկաւոր է մտաբերել նաեւ մամուլի էջերում երեւացող՝ իրական հարցերի շուրջ ժողովրդական լայն հետաքրքրութիւն յարուցելու նախնախնդրութիւն մատնող հիմնական կամ պարագայական յողումները: Դրաներուող հետաքրքրողութիւնը նորութիւն է ինչպէս յայն կեննքում, ուստի եւ արժանի յատուկ ուշադրութեան:

Ընդհանուր իրականութեան ու իրականութեան

տական հետաքրքրութեան շրջանակում մեզ համար մասնաւոր կարեւորութիւն է ներկայացնում այն՝ ինչ որ վերաբերում է պետական սկզբունքին, նրա դրսեւորման զանազան աստիճաններին ու առանձնաշատկութիւններին: Մի խօսքով՝ պետական իրաւունքի տեսական ու գործնական կողմերին, պետականագիտութեան ձեւաւորման ընթացքին: Այս տեսլով, նկատի ունենք ո՛չ միայն առհասարակ պետականագիտութեան ուղղութեամբ ցուցաբերուող ընդհանուր հետաքրքրութիւնը, այլեւ ու մասնաւոր հայկական պետականութեան ստորագրութիւնը ըմբռնելու եւ ըստ այնմ էլ սեփական վարքագիծ մշակելու փորձերը: Առայժմ, անշուշտ, խօսք չի կարող լինել լիովին դժհարցիչ ու վերջնական արդիւնքների մասին, բայց որոշակի մտադրութեան ծաւալման փաստը առօրեայ կեննքի մաս է կազմում:

Արդէն կենցաղ ու սովորութիւն է դարձել, որ այս կամ այն առիթով հրապարակօրէն արտասանուած զմեր պետութիւնը, զմեր կառավարութիւնը, զմեր մայրաքաղաքը խօսքերը առաջին հերթին ընկալինք որպէս այսօրուայ Հայաստանի պետութեանը, կառավարութեանն ու մայրաքաղաքին վերաբերող արտայայտութիւններ, դրանք համար

րենք սեփական հայրենիքի անձեռնմխելի ինքնութիւնն ու իրաւունքները ճանաչելու ուղղակի կամ լուրջան կողմը: Արդէն ինքնին հասկանալի է թւում, երբ հրապարակօրէն յանձնարարուեմ է յըջօրէն մտածել ու զնահատել «հայ պետականութեան» արժէքը եւ կշտամբանքի խօսք է ուղղուեմ այդ պետականութեանը թեթեօրէն նայողներէ հասցէին: Նաեւ պատահական չէ, որ խորիմաստ դատողութիւններ եւ արւում հայոց երբեմնի մայրաքաղաքների կատարած խթանիչ եւ ստեղծարար դերի մասին՝ հայրենի պետականութիւնն ձեւաւորելու, ամբացնելու եւ տեւականացնելու ասպարէզում, ընդամին զուգահեռներ անցկացնելով անցեալի ու ներկայի միջեւ: Այս կարգի սովորական նորութիւններ կարելի է թուարկել եթէ ոչ ուղածի շափ, զէթ մինչեւ որոշ աստիճան:

Բնականաբար, հարց կարող է ծագել, թէ ընդհանուր առմամբ 50 տարւայ ճանապարհ կարած խորհրդային պետութեան սահմաններից ներս արդեօք ներութիւն կարելի է համարել ժողովրդական հետաքրքրութիւնը իրաւական ու իրաւադիտական հարցերի հանդէպ եւ արդեօք նոր է, ասենք, հայերի ուշադիր վերաբերմունքը պետական սկզբունքի հանրային ճշգրտման ասպարէզում: Գիտե՞նալով հանդերձ, որ այսպիսի հարց ծագելու դէպքում կարճ պատասխանով գոհանալը համարօք է սչինչ շատելուն, այնուամենայնիւ, առանց վերապահութեան կարելի է յայտարարել, որ այո՝ այսօրուայ կացութիւնը ըստ էութեան աննախընթաց է եւ բաւական նշանակալից: Եթէ չհաշուենք 1920-27 թուականների առանձնայատուկ ժամանակաշրջանը, որի համար կային եւ առանձնայատուկ պատճառներ, յաջորդող ստալինեան սանձարձակ տիրապետութեան 25 տարիները յատկանշական են Հենց հանրային կարծիքի ընդլայտակ անցնելով, մանաւանդ իրաւական հարցերի կապակցութեամբ:

Միակուսակցական իշխանութեան ամէնօրեայ կամայականութիւններն ու,

մեղմ ասած, անիիղճ արարքները ուղղակի ճգմել էին մարդկանց կամքն ու դիտակցութիւնը, ահաբեկել ու բարոյալքել բնակչութեան լայն զանգուածներին: Այդ պայմաններում մարդիկ սովորաբար ակամայ ճակատագրապաշտ են դառնում, զանազան տեսութիւններ իրացնում մարդկային ճիգի «ունայնութեան» վերաբերեալ, մտովին անդամալուծուեմ բողոքի «սպարդիւնութեան» հեւանկարի աղիււ: Եւ մէ՞թէ պերճանք չէր լինի առհասարակ իրաւունքի զոյրութեան մասին մտածելն ու նրա անմիջական որոնման ճանապարհին քիչ թէ շատ հետաքրքրութիւն ցուցաբերելը: Այդ անչնչելի միջնուրաղ ստեղծել եւ դրա խորացմանը նպաստում էր, անշուշտ, ստալին հերթին տիրող իշխանութեան ծայրայեղ կենտրոնացուած կարգը: Ընդէ է, խորհրդային պետութեան մէջ եւս ձեւականօրէն գոյութիւն ունի իշխանութեան եւսամասնութեան, այսինքն օրէնսդիր, գործադիր եւ դատական մարմինների իրր անկախ եւ ինքնուրոյն գործունէութեան կարգը: Իայց չէ՞ որ այդ փաստօրէն խորտօխակային մարմիններից վեր բազմած է միակ ու միանական կոմկուսակցութիւնը, իր ռազմա-ոստիկանական կառուցուածքով, իր այսպէս ասած ամենատես ու ամենազօր առաջնորդներով: Եւ իրականում ստացուեմ էր այնպէս, որ միակուսակցական իշխանութեան կամքն արտայայտող մեծ ու փոքր վիշինակիները՝ միաժամանակ թէ՛ տեսարան էին եւ թէ՛ կազմակերպիչ, թէ՛ օրէնսդիր էին եւ թէ՛ գործադիր, դատաքննիչ ու դատաւոր, դատախազ ու դահիճ:

Ուրեմն, իրաւադիտութեան աշխուժացման այսօրուայ կացութիւնը նշանակալից է ո՛չ թէ իր բացարձակ իմաստով, այլ ստալինեան մուայլ տասնամեակների համեմատութեամբ, նրանցից յետոյ եւ նրանց «լոյսի տակ»: Իրաւագիտութեան աշխուժացումը իր հերթին ենթադրում է եւ քաղաքացիական խաւերի իրաւազգացման ու իրաւադիտակցութեան որոշակի առկայութիւն եւ մա-



կարգակ, դրվել է զործօնների որոշակի շրջանառություն: Այլ բոլոր նիւթական ու սպանական նախագրեանի շարքից մենք առանձնացնում ենք Հայկական պետական իրաւագիրտակցութեան հարցը եւ այժմ արդէն Հնարարութեան համարում համապատասխան խորհրդածութիւնների նիւթ դարձնել նրա ձեւաւորման ընթացքը խորհրդահայ կեանքի այլեւայլ դրսեւորումների դիտարկման ու մեր տրամադրութեան տակ դետառոջ պրակտիկայի մասնակցութիւնը համարում ենք, երկնալուծի, անշուշտ, մեր սեփական տեսանկիւնից:

Թէեւ պետական իրաւագիրտակցութեան ձեւաւորմանը նպաստող զործօնները նկատի ունենք իրենց մտնողութեամբ ու փոխադարձ ներգործութեան ոլորտում, այդուհանդերձ, բոլոր բազկացուցիչ տարրերն էլ շնք ներկայացնելու եւ քննութեան նիւթ լինք դարձնելու: Տըւեալ դէպքում մեզ հետաքրքրող բնագաւառի պարզարմանը հազիւ թէ նպատելու լինի ուշադրութեան ցրումը, եթէ ցանկանանք պէտք եղածից աւելի փառական նիւթ ընդգրկել: Ինքնին ուշադրութեւն էլ, անշուշտ, այն սովելը, ինչորարում է Հայաստանում՝ անցեալի պատմութեան իրաւական կողմերը եւ ուսումնասիրելու, «կանոնագրեր» ու «դատաստանագրեր» հրատարակելու եւ դրանք մանրակրկիտ բացատրութիւններով օժտելու, մասնագիրտական վերաբեւոճանումներ կատարելու եւ այլնի ասպարէզում: Ուշադրութեւն են նաեւ այն ընթացիկ հանրային միջնորդումները, որոնք արթնացուցիչ զործօնի դեր են կատարում եւ յարուցում համապատասխան խմորումներ: Այդ բոլորը, ուշադրութեան արժանի լինելով հանդերձ, այս անգամ դուրս պիտի մնան մեր տեսողալուսից: Մեր նպատակն է կենտրոնանալ իրաւագիրտական մակնիշով հրատարակ հանուոյ յատուկ ուսումնասիրութիւնների վրայ, հարցին մօտենալով, սկզբից եւնթ ճշգրնք, ոչ թէ նեղ-իրաւագիրտական, այլ ընդհանուր հասարակագիրտական դիրքերից:

Եւ սա հարցը սահմանափակելու ձգտման արդիւնք է: Հաւաքական իրաւագիրտական ու իրաւագիրտակցութեան մակարդակը, վերջի վերջոյ, արտացոլում է գտնում ձեւակերպուած բնութագրումների ու հզորակցութիւնների մէջ, որոնք մշակուած եւ հանրութեանը հրամարում են իրաւագիրտական ասպարէզի հետ անմիջապէս կապուած, նրա միջնորդային «բարոյնադրերի» լեզուին տիրացած, փորձ ու ձեւակերպման կարողութիւն ունեցող անձանց կողմից: Իսկ եթէ այդ ձեւակերպումները որեւէ պատճառով ըստ էութեան մեղանշում են հանրամատչելի տրամաբանութեան դէմ, թերի են, միակողմանի ու անբաւարար, դա էլ դերադանցապէս պայմանաւորուած է մտնող հասարակութեան տըւեալ պահի ընդհանուր կացութեամբ: Յամենայն դէպս, իրաւական հարցերին ծանօթանալու համար առաջին հերթին պէտք է դիմել բուն իրաւագիրտական, այսինքն այդ անուծով հրատարակուող ուսումնասիրութիւններին եւ ապա միայն ճանապարհը շարունակել, եթէ հարկաւոր է, դէպի ակունքները: Այլապէս, մենք դործ կ'ունենանք մշտնապատ, տե՛ս՝ եւ ու անտես խմորումների, մտքի սեւեռումից խուսափող կենսական իրողութիւնների բազմութեան հետ եւ անցեւելիք ուղին անհարկի կ'երկարացնենք:

Այս խաշմբուկում եւս մի անգամ ստիպուած ենք ընտրութեւն կատարել եւ շարժուել միայն նախասահմանուած ուղղութեամբ: Պետական իրաւունքի վերաբերեալ հետազօտութիւններով առաջին անգամը չէ որ իրենց ուժերը փորձում են հայ իրաւադէտները եւ ոչ էլ միայն Հայաստանում: Երեւանի թերթերից մէկում, օրինակ, «Մոսկուայի հայ անուանի իրաւագիրտներին» զործուծութիւնը «ճարտարակապակցութեամբ» (ապրիլի 27, 1968 թ.), յօդուածագրելը ընդգծում է, որ «հայ երիտասարդները, յատկապէս անցեալ դարի 90-ական թուականներից սկսած, մեծ հետաքրքրութիւն են դրսեւորում իրաւագիրտութեան նկատմամբ: Դա բա՞

ցատրում էր քաղաքական ուսմունքի նկատմամբ տածած աղաչյին շահախորհրդավեամբ: Դարեր առաջ պետականութիւնը կորցրած հայը ձգտում էր տիրանալ պետութեան եւ իրաւունքի ուսմունքին եւ այն է սպաս գնել իր ժողովրդի ազատագրման ու պետականութեան վերականգման սուրբ գործին: Այնուհետեւ յողումազիլը յիշատակում է թուական տուեալներ: Իսկ Մոսկոստում այժմ աչքի ընկնող միջազգային իրաւունքի հայ անուանի իրաւագէտների մասին իտակիս նա հաստատում է, թէ հայոց Սովետական Միութիւնում միջազգային իրաւունքի դոկտոր-պրոֆեսորների քան տոկոսը հայեր են: -Մենք զուրկ ենք այդ հաստատումը լիովին ստուգելու հնարաւորութիւնից, բայց եւ կասկածի տակ զննելու ոչ մի պատճառ չունենք: Աւելին. տեղեակ լինելով, թէ Խորհրդային Միութիւնում հայազգի մտաւորականների տեսակարար կշիռը որքան բարձր է, դրանից նոյնիսկ շենք պարմանում: Այդ պարագան մի անգամ եւս ապացուցում է այն՝ ինչ-որ դիտենք բոլոր եւ ինչ-որ դիտէին մեր պապերն ու ապուպուպերը: Այսինքն, որ հայ ժողովուրդը հասարականօրէն օժտուած է ստեղծագործական բարձունքներ նուաճելու ահնայաւ կարողութեամբ, բայց իրերի բերմամբ զուրկ է համապատասխան կենսական ասպարէզից, ուստի եւ այնքան բուռն կերպով է ձգտում հայրենական կայանի, ազատութեան ու խաղաղութեան:

Բայց որքան էլ շատ լինեն Խորհրդային Միութիւնում պետական ու միջազգային իրաւունքի հայազգի մասնագէտները, նրանք գործնականում ի վիճակի չեն անմիջապէս նպաստելու ազգային իրաւագիտութեան յուսալի առաջխաղացմանը Հայաստանում, ինչպէս եւ աղիւլիւ լայն զանդուածների իրաւագիտակցութեան ձեւաւորման ընթացքի վերայ: Ուրեմն մեզ համար դրանք մնում են պրիթէ մեկուսացած, որքան էլ որ ինքնին նշանակալից լինեն փաստերն ու արժէքները: Այլ բան է այն տեղական հետա-

դասութիւնների ու հրապարակումների պարագան, որոնք պարունակում են Հայաստանի ու հայութեան արդի կամ մօտիկ անցեալի կեանքին վերաբերող նիւթեր, եւ ուղղուած են առաջին հերթին հայ հասարակութեանը: Նոյնիսկ նրանք, որոնք դեռ, այս կամ այն պատճառով, շատ են հեռու բաղձալի մակարդակից: Գանգի միջոց էլ կան այլեւայլ առարկայական պատճառներ, որոնք կանգնում են հարցերը զննութեան առնելու ասպարէզում իրաւագիտութեան «համաշխարհային ստանդարտի» կողմը շարժուելու ճիգերը: Հետեւապէս, բոլոր խաբիափումներն ու թոթովանքները, ի չդոյն լաւագոյնի, պէտք է հաշուի առնել ու շատ այն էլ պատկերացում կազմել իրականութեան մասին:

Իրաւագիտութեան մասին դատելիս նրան շենք վերագրում հրաշազօր կարողութիւններ: Նկատի ենք առնում, որ նա միաժամանակ թէ՛ արդիւնք է եւ թէ՛ առաջնորդի գործուն: Իրաւունքի առկայութիւնը արդիւնք է մարդկային գոյութեան, հասարակական կեանքի, քաղաքակրթական ճանապարհի, ուժերի որոշակի դասաւորման: Առանց այս նախադրեալների հաշուուման, անըմտնելի է իրաւունքի գոյութիւնը եւ անգործածելի՝ նրա զգէնքերը: Այդ առումով էլ դիտում ենք հայ ազգային կեանքի ընթացքը: Կան իրաւագիտացման ու իրաւագիտակցութեան արտայայտութիւններ եւ իրաւաստեղծման ձգտումներ, որովհետեւ կայ հայ ազգը՝ իրաւատէր լինելու իր կամքով: Հիմքն ու հրաշխիքը դա է, որն այնպիսի սպառելի սեղմութեամբ ձեւակերպել է բանաստեղծը՝ «Կանք, պիտի լինենք ու դեռ... շատանաք...»: Այդ գոյութեան ու դրա ասպարէզման անհրաժեշտութեան գիտակցութիւնն էլ պայմանաւորում է ամէն մի անգամ ազգային ձգտում, շարժում, նպատակ եւ միտք բերմունք: Մնացածը՝ ուրիշների կողմից յօրինուած յողումանքն ու օրէնսդրեքերն, ժամանակագրութիւնն ու հաշուապահութիւնը, որոնց ցանցերի մէջ շփոթելու եւ ընդամին միաժամանակ իր տեղը չգի-

ընդու արուեստն է հիմնականում իրա-  
 ազդիտութիւնը, մի տապաքէզ, որը նոյն-  
 պէս պահանջում է կոչում, նուիրում,  
 յարատեւութիւն ու հնարամտութիւն,  
 այլ խօսքով՝ ծառայելու սէր: Այսպիսով  
 է, որ իրաւազիտութիւնը, ինքը կենսա-  
 կան գործօնների խաչածեւումների ան-  
 միջական արդիւնք լինելով հանդերձ, իր  
 հերթին դառնում է առաջնորդ գործօն,  
 իր հետ կապում հաւաքակազմութիւնը,  
 նրա կամքով ու թոյլտւութեամբ, ա-  
 նախորդելով կամ ուղեկցելով դէպի ա-  
 պահով մատոյցներ ու հոռաստաններ:

Մենք շէշտը դնում ենք պետական  
 իրաւազիտակցութեան ձեւաւորման, այլ  
 ոչ թէ բուն իրաւազիտութեան տուեալ-  
 ների վրայ: Որովհետեւ այսօր այնպիսի  
 կացութիւն է տիրում, որ խորհրդահայ  
 իրաւազիտութիւնը, խօսքը միայն պե-  
 տական իրաւունքի մասին է, հազիւ ա-  
 ռաղին ինքնուրոյն քայլերն է անում,  
 նրա «գերըջ» հորիզոնի տակ չի երեւում,  
 դեռ շատ պիտի սպասենք, որ հասարա-  
 կայնօրէն յատկացուած այսպէս ասած  
 «կապիտալներդրումները» շօշափելի  
 գործունէ ասն, որպէսզի ըստ այնմ էլ  
 դառնենք նրա կարողունակութեան մա-  
 սին: Առայժմ այդ իրաւազիտութեան  
 դերը կայանում է պարզապէս որոշելու  
 կէտային հարցեր առաջ քաշելու, սահ-  
 մանափակ վերլուծումների երկչոտ փոր-  
 ձեր անելու եւ իրաւազիտական ընդհա-  
 նուր շարքի մէջ մտնելու տրամադրու-  
 թիւն ցուցաբերելու մէջ, որով եւ հան-  
 րային մթնոլորտ է ստեղծում, աղբե-  
 լով զանգուածների իրաւազիտակցու-  
 թեան ձեւաւորման վրայ: Այդ դերը ինք-  
 նին փոքր դեր չէ, եթէ առհասարակ բա-  
 րեխցնութեամբ ու արնուութեամբ կա-  
 տարուի:

Մինչեւ հիմա ասուածներն ու հե-  
 տազայում ասուելիքները ճիշդ ամբանե-  
 լու եւ ճիշդ տեղադրելու համար՝ ան-  
 պայման պէտք է նկատի առնել հետեւ-  
 եալը: Սրբ ասում ենք, թէ Հայաստա-  
 նում դժայի է հետաքրքրութիւնը ընդհա-  
 նուր եւ մանաւանդ պետական իրաւուն-  
 քի հանդէպ, սա չի նշանակում, որ Հա-

յաստանը ինչ-որ ինքնուրոյն, առանձ-  
 նաշնորհալ ու անտվոր ուզի է մտել:  
 Այդ երեւոյթը նկատում է Յորհրդային  
 Միութեան նաեւ միւս հանրապետու-  
 թիւններում, այն էլ կենտրոնի թեւա-  
 դրանքով, մտաւորապէս ա՛յն իմաստով,  
 թէ՛ «յայտարարեցէք, որ սկզբից եւեթ  
 գերիշխան էք, ազատ եւ անկախ»: Թէ  
 ինչ դրդապատճառներով՝ դա տարբեր  
 հարց է: Բայց այդ, Հայաստանում  
 մշակուող իրաւազիտական ուսումնասի-  
 րութիւնների հեղինակները իրենց նիւթը  
 ընտրում, շարադրում եւ փաստարկում  
 են Յորհրդային Միութեան մէջ ընդուն-  
 ւած միակ թոյլտւութի ճիւղաճյուղա-  
 նութեանը սկզբունքներով: Սրբին զիչ  
 թէ շատ դրսեւորուող ինքնուրոյնութիւ-  
 նը տակաւին մանրուէներէ մէջ է կայա-  
 նում: Ապա, երբ ասում ենք պետական  
 իրաւունք՝ այդ էլ պայմանական է, ս-  
 րովհետեւ խորհրդային պետական իրա-  
 ւունքը յաճախ իսկական պետական իրա-  
 ւունքի ծաղրանկարն է հանդիսանում եւ  
 հայ հեղինակների դրչի տակ էլ նա երե-  
 ւում է իր յօշոտած կերպարանքով,  
 խեղաթիւրուած բառամթերքով: Բայց  
 այս ամէնով հանդերձ, պիտի ներկա-  
 յացնենք այն յատկանշական տպադիր  
 այխատութիւնները, որոնք հրատարակ-  
 ւել են Հայաստանում վերջին տասը  
 տարուայ մէջ՝ պետական իրաւունքի  
 ասպարէզում:

Նախ պէտք է ճշդել, որ Հայաստա-  
 նում պետական իրաւազիտութեան դժով  
 ըստ երեւոյթին շատ աւելի աշխատու-  
 թիւններ են պատրաստուել, քան տրա-  
 ւել: Այդ պարագան ուղղակի գփղոհու-  
 թիւններ է յարուցել հենց իրաւազէտնե-  
 րի մօտ: Նկատելի է նաեւ, որ իրաւագի-  
 տութեան մշակման տեսակէտից առաջին  
 գծի վրայ է դրնում Երեւանի Համա-  
 լսարանը: Եւ առհասարակ Համալսարա-  
 նը ուրիշ բնագաւառներում եւս, ինչպէս  
 եղի է միշտ, աւելի նախաձեռնութիւն  
 ու համարձակութիւն է ցուցաբերում,  
 քան Գիտութիւնների Ակադեմիան: Եթէ  
 այդ երեւոյթի բոլոր պատճառները  
 յայտնի չեն, նրանց մի մասը գէթ հնա-

րաւոր է կռահել: Ակադեմիան ունի իր կառուցուածքը, բնօրէն եւ յատուկ առաջադրանքները. նա այնքան է ծանրաբեռնուած զրուտ ակադեմիական գործերով ու պատուէրներով, որ շատ յաճախ նրա ուշադրութիւնից վրիպուած են մեր Երկրի համար հանդուցային նշանակութիւն ունեցող զանազան քնազաւառներ: Փաստօրէն պակասուած է աչքը եւ զգայունակութիւնը: Մինչդեռ Համալսարանը համեմատաբար զանհողք է, ուշադիր եւ արձագանգող, ներքին կարգով ինքն է ահօրինում իր մտաւոր ու հրատարակչական հնարաւորութիւնները: Բացի այդ, Համալսարանում դաստանդունքն են բազմաթեւակ դիտա-ուսումնական առարկաներ եւ դասախօսները գիտալսականամբարեւելիք եւ շատուկ զարմեթացներ կազմել ու ապա նրանց հիման վրայ էլ այլեւայլ աշխատութիւններ մշակել եւ բազմացնել: Իսկ երիտասարդները, աւարտական կամ թեկնածուական զննածառեր պատրաստելու առիթով, կոչուած են հիմնականում ինքնառիթմով եւ շարքուած նիւթեր ընտրել, դիմել կեանքին սերտօրէն առնչուող շարժական բնագաւառներին, դրանով իսկ լայնացնելով տրամադրելի ուսումնասիրական կենսազաւարի տարածութիւնը: Եթէ այս ամէնին աւելացնենք, որ դիւանագիտական էրբեմն ամուլ զգուշաւորութիւնը չի պատշաճում երիտասարդական ընդգրկումների չազարտուած տեսողաշատին, ապա սխալ չէ լինի ենթադրել, որ նոյնիսկ սեզմումների ենթարկուած կամ տպադրութեան շարժանցած երիտասարդական հետազոտութիւնները, ինչպէս եւ կենդանի շփումները, ապարդիւն չեն մնում մտքի հորիզոնները բացելու ասպարէզում:

Հայաստանի իրաւագիտական դրականութեան մեզ հետաքրքրող մասը ներկայացնելու առիթով, հարկաւոր է ասել նաեւ, որ խորհրդային տպագիր հրատարակութիւնները կարգացուելու եւ հասկացուելու համար որոշ նախապատրաստութիւն եւ վերաբերմունք են պահանջում, քանի որ նրանք, որպէս կանոն,

բուն հեղինակների մտքերն ու տեսակէտները արտայայտելուց առաջ՝ գերազանցապէս արտացոլում են շրջանառութեան մէջ գրուած կամ դրուող ընթացիկ պաշտօնական գրոյթները: Ուստի, որեւէ հրատարակութիւն ընթերցելուց առաջ, արդէն հոգեբանօրէն պէտք է հաշտուել այն անխուսափելի մտքի հետ, որ կարողալիքի առնուադն երեք քառորդը ըստ էութեան աւելորդ է, անտեղի, ժամամաճառութիւն: Բայց աշխատութեան միջուկին հասնելու եւ ներքին արամառնութեանը մտաւորապէս հետեւելու համար պէտք է համբերութեամբ սպասել նաեւ յաւելուածական բնուր Սյուր մէջը այժմ վերաբերում է հիմնականում վերջին հարիւրամեակի շրջանակում հասարակապետական նիւթեր արծարծող աշխատութիւններին: Միխիթարուելու համար պէտք է յիշել, որ կար ժամանակ, երբ անխտիր բոլոր խորհրդային հրատարակութիւններն էին ենթակայ այդ ամլացնող կանոնին: Այսօր, բարեբախտաբար, շատ ղէպերում պատկերով ժողովուրդ է եւ համարեա՛ թուրովին նոր նացել բնականոն վիճակի հետ, այն բոլոր ղէպերում, երբ հեղինակը իսկապէս հնարաւորութիւն ունի արտայայտելու իր մտքերը եւ իր սեփական վերաբերմունքը: Սակայն վերջին հարիւրամեակի զարգացական պատմութիւնը իր բոլոր բաղկացուցիչ բնագաւառներով՝ մընում է ամէնից ազարտուած ու ամէնից խոցելի ասպարէզը, քանի որ անմիջապէս կապուած է մարքս-լենինեան դադափաբախտութեան կարծեցեալ զարժանապատուութեան՝ եւ կոմունիստական շարժման վերուստ հաշուարկուած անդրումը «չահերի» հետ: Չի արդելում, անշուշտ, առհասարակ խօսել մարդկային ու հասարակական զանազան իրողութիւնների, արժանիքների եւ առաքինութիւնների, ճշմարտութեան, ազատութեան, ստեղծադրծութեան եւ այլնի մասին, միայն թէ՛ այն պայմանով, որ այդ ամէնը վերադրուի բացառապէս կոմունիստներին ու, մի քիչ էլ, նրանց բարեխուսութիւնը վայելողներին, իսկ մնացեալ բոլոր ու-

ժերը անխտիր պէտք է համարուեն շարութեան ու մոլութեան մարմնացումներ, արժանի անողոք նորմաների ու հարմարութիւններ: Եւ քանի որ իրականութիւնը այդ շահմայի՞ համաձայն չի բնթացել, իսկ շատ յանախ էլ դրա ճիշդ հակադասն է եղել, ստացուած է աղաղակող հակասութիւն, զաւելու ու մտքերի քառս, որը կարող է բերելն ու հանդիստ խղճով մի կերպ կորմնորոշուելը դիւրին չէ: Դիւրին չէ հենց առաջին հերթին այդ ցանցի մէջ կաշկանդուած խորհրդային հեղեմակներն համար:

Այս հանգամանքը պէտք է նկատի առնել նաեւ Հայաստանում լոյս տեսած իրաւագիտական աշխատութիւնները կարգալիս եւ դեահատելիս: Այլապէս, անակնկալն ու յուսախարութիւնը կարող է համակել առաջին իսկ քայլերից եւ կանեցնել օրեւէ զէթ նուազապէս օրինաչափութիւն յայտնաբերելու ձգտում:

2.

Հայաստանին վերաբերող պետականագիտական աշխատութիւնները հիմնականում ընդգրկում են վերջին 50-ամեակը, ինչոր միանգամայն ըմբռնելի է: Առաջին հերթին նոր պայմաններում ծնուած նոր պետականութիւնն է, որ պատմական նիւթ է տալիս այժմէական ընդհանրացումներն եւ եզրակացութիւնները հասնելու համար: Սովորաբար բուն շարադրանքն սկսւում է 1917 թուի ոռւսական փետրուարեան յեղափոխութեան ժամանակից, որպէսզի «բուրժուազիային» ու «անջատական դաւաճաններին» ըստ կամ դատափետելուց յետոյ ընդգծուած երեւայ կոմունիստական իշխանութեան նախախնամական ու «փրկարար» դերը: Բայց իւրաքանչիւր հեղինակ իր գործունէութիւնը սկսելիս պարտականութիւն է համարում ուսումնասիրութեան ծանրութեան կենտրոն պարծնել յատկապէս 1920-21 թուականները: Եւ դա կարելի է բացատրել:

Հայաստանի Հանրապետութեան կարճ ժամանակաշրջանը հարուստ է բուռն եւ նշանակալից իրադարձութիւններով, յատկապէս բոլորովին նոր պետութիւն կերտելու տեսակէտից: Իսկ երկրի խորհրդայնացումից յետոյ, սկզբնական ժամանակաշրջանն էլ նշանաւոր է Հանրապետութեան պետական նուաճումները զանհորէն կամ յիմարաբար ոտնակոխ անելու տեսակէտից: Այնպէս որ՝ բաւարար չափով նիւթ կայ թէ՛ հարստանալու եւ թէ՛ դժգոհելու համար, նայած թէ մարդ որ կողմից է դիտում իրականութիւնը: Խորհրդայնացումից յետոյ մի առ ժամանակ Հայաստանը մնում էր ձեւականորէն անկախ պետութիւն, բայց 22 թուին դրան էլ փաստորէն վերջ տրուեց: Այդ թուականի Փետրուարի և-ին, Հայաստանի Ռորհրդայնի առաջին համալումարը հաստատեց երկրի առաջին Սահմանադրութիւնը, Մարտի 12-ին ստեղծուեց Անդրկովկասեան Փեդբացիան, իսկ Դեկտեմբերի 30-ին էլ կազմուեց Խորհրդային Միութիւնը, ու մտնեանգամ Հայաստանից իւրեւց իրաւասութիւններն մի աւազին բաժին: Այնուհետեւ կատարեալ իրաւական ու փաստական ամայութիւն տրեց պետական շինարարութեան ասպարէզում:

Ճիշդ է, հետագայ տասնամեակների ընթացքում էլ եղան առանձին լիցքաւորուած պահեր, որոնք այս կամ այն նորութիւնը մտցրին Հայաստանի պետական կենտրոն: Բայց դրանք հանրապետութեան գերիշխան իրաւունքների օրինական զործադրման կամ տեղական յատուկ նպատակաւաց ճիգերի արգիւնք չէին, ալլ համախորհրդային կենտրոնացուած միջոցառումների հերթական ու մեքենայական կերպում: Այսպէս, 36 թուի Դեկտեմբերին ընդունուեց Խորհրդային Միութեան նոր Սահմանադրութիւնը, որի համաձայն Հայաստանը փաստորէն վերադարձաւ իր մինչեւ 22 թուականը ունեցած գոյափոխութիւն, հանելով նաեւ ճանապարհի կորուստները, համարուեց առանձին միութեանական հանրապետութիւն եւ 1937 թուի Մարտի

23-ին Հաստատուեց նրա նոր Մահմանադրութիւնը, որը իրականում նոյնքան դուռ Հայկական էր, որքան որ 22 թուի առաջին Մահմանադրութիւնը, չափած - մեկած բուսական կամ Համաժողովեանական սահմանադրութիւնների կաղապարի վրայ: Պատերազմի տարիներին թույլատրուեց ունենալ Արտաքին գործերի եւ Պաշտպանութեան Հանրապետական նախարարութիւններ, աղգային պարտիզի կազմաւորումներ» եւ պետական Հիմն: Նախարարութիւնները փաստորէն մնացին մեռած տառ, թէև Մահմանադրութեան մէջ գրանցուած են եւ նոյնիսկ կան որոշ նշանակումներ, զորային կազմաւորումների միայն դրօշները պահուեցին ինչ-որ շէնքերի նկուղներում, իսկ Հիմնը ստեղծուեց ու տեւեց, այն էլ ինչպիսի՜ Հիմն... Պրուլչովի իշխանութեան առաջին շրջանում՝ 56-57 թուերին, արշաւ ծառայուեց «միութեանական Հանրապետութիւնների գերիշխան իրաւասութիւնները ընդլայնելու» օգտին, բայց երկրում գտնուող միջոց ու արքայի եւ պատրաստ յետադիմական ուժերը այդ էլ խափանեցին ու Հակառակ արշաւ ծառայեցին, բացառաբարէն կամ զաղտնօրէն շարունակելով մինչեւ Հիմն: Ուրեմն, 22 թուականից յետոյ ընկած ժամանակաշրջանը պետականազիտութեան, քաղաքական ուսումնաբեր Համար փաստական շուտ քիչ ատաղձ է տալիս, քանի որ այդ ասպարէզում էական յառաջադիմութիւն չկայ: Եւ պատահական չէ, որ նոյնիսկ խորհրդային մեծաբերան քարոզիչները անընդհատ խօսում են սոսկ «տնտեսական ու մշակութային նուսնումների» մասին եւ խոհեմութեամբ յաճախ շրջանցում են քաղաքական ասպարէզը, գոհանալով ընդհանուր յայտարարութիւններով:

Առաջին աշխատութիւնը, որով Հայաստանում պետական իրաւապետութիւնը ասպարէզ մտաւ, Ծահէն Պետրոսեանի 58 թուին տպուած գիրքն է՝ «Սովետական պետականութեան Հաստատումը եւ ամբապնդումը Հայաստանում. 1920 թ. Նոյեմբեր - 1922 թ. Փետրուար»: Պետրոսեանի յաջորդ մենագրու-

թիւնը եղաւ 61 թուին տպուած «Խորհրդային պետականութեան կազմաւորումն ու զարգացումը Հայաստանում» ռուսերէն գիրքը, որն ընդգրկում է 1922-37 թուականների ժամանակաշրջանը: Առհասարակ, դատելով Պետրոսեանի ընթացիկ կամ յորիմական յօդուածներէր, նրա ուշադրութեան կենտրոնում է գլուխը տուած յատկապէս սահմանադրութիւնների ստեղծումն ու նրանց բովանդակութիւնը: Մենք այստեղ պիտի անդրադառնանք Պետրոսեանի միայն առաջին գրքին, որպէս Հիմնադիր սահմանադրի եւ ելակէտի:

Պետրոսեանն իր աշխատութեան գոյութիւնը արդարացնում է հետեւեալ երոզութեամբ. «ՄԱԿԳ 20-րդ Համադուարը, քննադատելով իդէոլոգիական աշխատանքի ընթացքում եղած լուրջ թերութիւններն ու սխալները, նշեց նաև սոցիալիստական սեւոլիցիայի եւ սովետական պետութեան փորձի հետադրօման անբաւարար վիճակը, ընդգծեց սովետական պետութեան եւ իրաւունքի զարգացման հարցերի դիտական ուսումնասիրման եւ լուսարանման գործի եւ մնալը: Այդ քննադատական դիտողութիւնները ամբողջապէս վերաբերում են նաև մեր անպարտիկային»: Ուշադրաւ է նաև Պետրոսեանի խոստովանութիւնները, թէ «Հայաստանում սովետական պետականութիւն Հաստատուելուց յետոյ անցել է աւելի քան 37 տարի, սակայն մինչև այժմ հրապարակի վրայ չկան այնպիսի մենագրութիւններ, որոնցում բազմակողմանիօրէն ուսումնասիրուած լինի Հայաստանում սովետական պետականութեան հաստատման, նրա ամբապնդման ու զարգացման պատմութիւնը: Սովետահայ իրաւաբանները իրենց ուսումնասիրութեան նիւթ են դարձրել սովետական պետութեանը եւ իրաւունքին վերաբերող առանձին հարցեր, որոնք ունեն ինչպէս տեսական, այնպէս էլ պրակտիկ նշանակութիւն: Սակայն այդ աշխատութիւնների մեծ մասը դեռևս չի հրապարակուած»: Այս անապատային պայմաններում է, որ Պետրոսեանն իր

աշխատութիւնը ստակ «մի փորձ» է համարում:

Պետրոսեանի գրքի բուն բովանդակութիւնից աւելի իմաստ են պարունակում նրա առաջաբանից մէջը բերուած այդ տողերը, որոնք ցայտուն պատկերացում են տալիս իրերի կացութեան մասին: Գրքի երեք գլուխներէից առաջինը յատկացուած է նախախորհրդային ժամանակաշրջանին: Այստեղ մէկ առ մէկ յիշել, թէ ինչի մասին ինչ է ասում Պետրոսեանը իր գրքում, ինչն ինչպէս է վերլուծում ու լուսարարում, — անտեղի աշխատանք կը լինի: Նրա յիշատակած բոլոր իրադարձութիւններն էլ ծանօթ են ժամանակաշրջանի պատմութիւնն իմացող մարդկանց: Նրա բացատրութիւնները, առաջ բաշտ գործիքները, ոճն ու բառամթերքն էլ ծանօթ են խորհրդային միւս այլեւայլ հրատարակութիւնների բովանդակութիւնից: Այդ գէպքում, ինչո՞ւմն է կայանում Պետրոսեանի աշխատութեան նշանակութիւնը:

Հեղինակն առաջին անգամ մէկ աշխատութեան մէջ ընդգրկել է 17-ից 32 թուականն ընկած ժամանակաշրջանի այն իրադարձութիւնները, որոնք անմիջապէս առնչուած են պետականադիտութեան հետ: Ամբողջական շարադրանքի ընթացքում յիշատակել է բազմաթիւ, խորհրդային ընթերցողի համար այն ժամանակ սակաւածանօթ ու անծանօթ փաստեր ու փաստաթղթեր, առեւ չեւտաղայ խորհրդածութիւնների նիւթ: Դա նրա հիմնական վաստակն է որոշակի ժամանակաշրջանում: Նա, բնականաբար, չէր կարող առաջ անցնել իր ժամանակից եւ չի էլ անցել, այլ այդ ժամանակի նախնական մակարդակով ընթերցողներին ներկայացրել է մի ինքնուրոյն նիւթ:

Բայց Պետրոսեանի աշխատութեան առանցքային նշանակութիւնը արտայայտւում է յատկապէս մի այլ բնագոյտում: Բոլորս էլ գիտենք, թէ Հայաստանի խորհրդայնացումից յետոյ, ինչպիսի խեղաթիւրման է ենթարկուել նախախորհրդային Հայաստանի Հանրապետու-

թեան պատմութիւնը եւ ուրացուել նրա վաստակը: Այդ խեղաթիւրումն ու ուրացումը ա՛յնքան արմատական է, որ սովորաբար Հայ հեղինակների ուշագրութիւնը բացառապէս սեւեւում է դրա վրայ եւ ակամայից աւթաթող է արւում մի ոչ պակաս ծանրակշիռ պարագայ, ո՛րն էր խորհրդահայ քաղաքական գրականութեան մէջ երկար ժամանակ կատարեալ մոռացութեան էք տրուել նաեւ հենց խորհրդային Հայաստանի առաջին տասնըհինգամեակի պատմութիւնը, այդ ժամանակի զեկավար սերնդի հանրային ծառայութիւնը: Ինչո՞ւ: Որովհետեւ 36-38 թուական այդ սերնդի հիմնական մասը հանրածանօթ ջարդերի գործարմաւ, «ժողովրդի թշնամի» պիտակը ստանալով: Տուեալ գէպքում մեզ հետաքրքրողն այն չէ, թէ ո՞ր ժամանակաշրջանն ինչով է նշանաւոր եւ որ սերունդը ինչ արել, այլ ա՛յն՝ որ խորհրդային պայմաններում առհասարակ բացակայում է առարկայական վերաբերմունքը գէպքերն ու դէմքերը ներկայացնելու ասպարէզում: Նշանակութիւն չունի, թէ այդ գէպքերն ու դէմքերը նախախորհրդային են, արտախորհրդային ու հակախորհրդային կամ հենց խորհրդային: Խեղաթիւրումը զերազոյն օրէնք է, ուրացումը՝ նոյնպէս: Արդ, այնպէս պատահեց, որ 36 թուականից մինչեւ 58 թուականը ընկած ժամանակաշրջանում փաստօրէն անտեսուեց նաեւ խորհրդային իշխանութեան գոյութեան սկզբի 10-15 տարիների իրական պատմութիւնը: Իսկ ոչ մի պատմութիւն իրական չի լինի, եթէ նրա ամբողջութիւնից կտրուած — հանում են առանձին հատուածներ, անկախ այդ հատուածների տեւողութիւնից ու բնոյթից:

Եւ ահա Պետրոսեանն իր գրքում վերականգնեց մի որոշակի ժամանակահատուածի պատկերը ա՛յնքան, որքան որ դա հնարաւոր է կոմունիստական իշխանութեան պայմաններում: Դէպքերի բովանդակութիւնն ու ժամանակագրութիւնը շարադրելով, նա զետեղեց եւ «վարկաւորուած» գործիչների լուսանկարնե-

րը, ինչպէս եւ 22 թուին ընդունուած Սահմանադրութեան բնագիրը: Վերջին հանգամանքը ուշադրութիւն է դրուում մասնաւոր նրա համար, որ խորհրդային պայմաններում սովորաբար խուսափում են պատմական փաստաթղթերը նոյնութեամբ ներկայացնելուց, որպէսզի ազատ ասպարէզ մնայ Հեղինակային կամայական մեկնարանութիւնների ու ընութագրումների համար, որպէսզի բոլոր ազգայնական զուրկ ընթերցողը, գրքերի ու յօդուածների հեղինակների «վկայութիւնները» ստուգելու հնարաւորութիւն չունենայ եւ այդպիսով հանրային մտքի հորիզոնը փակուի: Այդ տեսակէտից, ուրեմն, Պետրոսեանի աշխատութիւնը ակնյայտօրէն նոր մտեցում ցուցաբերեց:

Միւս հեղինակը, որը նկատելի մասնակցութիւն ունեցաւ Հայաստանում պետականագիտութիւնը աշխուժացնելու գործին, Արմենակ Բեգիջեանն է: Նրա

«Հայկական խորհրդային դերիչիան պետութեան կազմաւորումը եւ ամբապնդումը» վերնադրով ոտակերէն պէրքը լոյս տեսաւ 1962 թուին եւ նոյնպէս ընդգրկում է հիմնականում 20-21 թուականների պատմութիւնը: Բեգիջեանի միւս ոտակերէն գիրքը լոյս տեսաւ աւելի ուշ՝ «Խորհրդային պետականութեան զարգացումը Հայաստանում» վերնագրով եւ ըննութեան է առնում 22 թուից յետոյ ընկած ժամանակաշրջանը: Դատելով Բեգիջեանի ստորագրութեամբ դիտական մատուցում երբեմն երեւան էկոլոյ յօդուածներից, կարելի է ասել, որ նրա հետազոտութեան առարկայ են հանդիսանում խորհրդային պետական իրաւունքի ընդհանուր հարցերը, Հայաստանեան նիւթի հիման վրայ: Այստեղ պետի տնորադառնանք նրա 62 թուին տպուած գրքին, որով պետականագիտութիւնը որոշ ծաւալ է ձեռք բերում եւ օժտում որակական մի քանի նոր յատկութիւններով:

(Նար. 1)

1. Մ.





ԱՐՏԱՇԷՍ ՕՐԱԳԵԱՆ

**Ա Կ Ն Ա Ր Կ**

**ՀԱՅ ՀԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ**

«ԷՋՄԻԱՄԻՆ»

Կեդրոնազմբեթ եկեղեցիներու շարքը կարելի է շարունակել: Զօրավարը, կառուցուած իշխան Գրիգոր Մամիկոնեանի կողմէ 662-685 թուականին, վերջապէս իրենդը եւ Թալինը, Պաղնին, Արուսը, եւ այլն:

Ինչպէս նախապէս ըսած եմ, կեդրոնազմբեթ եկեղեցիներու շարքերը յառաջ կու գան երկրաշարժական որոշ տարազէ մը, որ իր սկզբնաղիծ ունի գմբեթին տրամազիծը, ինչ որ Չտանեւիչ շատ համոզելի կերպով ցոյց տուած է. (տես. «Կեանք եւ արուեստ» ամսագիր, 8-րդ տարի, թիւ 1, Յունուար 1938, Փարիզ): Սակայն այսպէսով ճարտարապետը անել կացութեան կը մատնուէր, որովհետեւ, գմբեթին տրամազիծը աւելի մեծ ընելու պարագային, ամբողջ տանարի ծաւալն ալ կը մեծնար, ինչ որ հաւանօրէն ճարտարապետին կամ բարերարին հաշտոյն չէր դար: Մնացականեան կը խորհի, որ օրինակի համար Բազարանի պարագան տարածը է, մինչդեռ ըստ Չտանեւիչին, սա ալ միեւնոյն տարազին կը հպատակի որոշ զարտուղութիւններով:

Մնացականեան այս գլուխին վերջը շատ հանդամօրէն կը խօսի մեր եկեղեցիներուն ներքին սրմանկարներու եւ հարթաքանդակներուն մասին, ցոյց տալով որ հակառակ մինչեւ վերջերս տիրող այն գաղափարին, թէ Հայ եկեղեցին, որպէս iconoclaste, զանց առած է գաղղարելի իր աստիճաններու ներքին մակերեսները, մինչդեռ «Յարապոյն ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ յատկապէս Հայաստանումն էր, որ Ե. եւ Ի. դարերու այնքան ճշմանկալից տեղ էր տրուում որմնակարչական արուեստին եւ պատասխան չէ, որ ամբողջ կովկասում այդ դարաշրջանից որմնակարմեր են պատկանում միայն հայկական տաճարներում»: Նոյնը կարելի է ըսել բանդակազորութեան մասին:

ԳԼՈՒԽ Ե.

«Թ. - ԺԱ. ԴԱՐԵՐՈՒ ԷԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԿԵՏՈՒԹՅՈՒՆԸ»

Ս. Խ. Մնացականյան

Օտար մասնագետներ, Հայկական ճարտարապետութեան մասին շատ անգամ սխալ կարծիք յայտնած են եւ տակաւին կը շարունակեն յայտնել, որովհետեւ Հայաստան այցելած չըլլալով, միայն արտասահմանեան դրահանութեան ծանօթ, հատուկոր յատակազծերը եւ պատկերները տեսնելով կը դատեն ամէն ինչ: Այժմ, առանց այլեայլի, կարելի է ըսել որ «Ակնարկ եայ ճարտարապետութեան պատմութեան» գործին Հրատարակումով արտասահմանի գիտական աշխարհի առջեւ կը փռուին մինչեւ այսօր գոյութիւն ունեցող բոլոր յուշարձաններու զանազան յատակազծերը՝ իրենց թուականներով: Միաժամանակ ցոյց տալով, թէ ինչպէս Հայկական ճարտարապետութիւնը դարերու ընթացքին, ինքնուրոյն ուղիով մը զարգացած է:

Օրինակի Համար, եւրոպացի ծանօթ հեղինակ մը Պարսկաստան կ'այցելէ եւ Հոն կը տեսնէ գեղջկական քնակարաններու հազարաչէն ծածքերը, եւ ամենայն հանդարտութեամբ կ'եզրակացնէ, որ հայերը իրենց սրահները գմբէթով ծածկելու արուեստը պարսիկներէն ներշնչուելով կազմաւորած են: Մինչդեռ իրականութիւնը բոլորովին տարբեր է:

Հայաստանի աւստատիրական շրջանի զանազան Լրիքամասերու մէջ, ինչպէս Սիւնիքը, Վասպուրականը, Ալքարառ-Շիրակը, եւայլն, կը ստեղծուին իւրապարտեւ ճարտարապետական դպրոցներ, այնպէս՝ ինչպէս միջնադարեան Իտալիոյ, Ֆրանսայի եւ Գերմանիոյ մէջ: Թուքանայի վերածունդը չի նմանիր վենետիկի, ինչպէս Միլանոյիը չի նմանիր Հոմբին: Միլանոյի մէջ ուսմանական ճարտարապետութիւնը կը կոչուի Լոմպարձո, իսկ Գերմանիոյ մէջ Սաքսոն: Ատեն մըն ալ, կոչուած են նաեւ բոլորակաձեւ ազնեղներու ոճ: Կարծես Զուարթնոցին (Է.), Մարմաշէնին (Ժ.) եւ կամ Անիի կաթողիկէին ակնարկէին:



Է, դարու կիրուն, Հայաստան մեծ մասամբ կը մտնէ արաբական տիրապետութեան տակ: Սակայն, հայ ժողովուրդը, ամբապէս կառչած իր պատմական հողերուն, շատ անգամ կ'ապստամբէ, անհամար զոհեր կուտայ, բայց վերջապէս կու գայ յարժար առիթը եւ Աշոտ Բագրատունի ինքզինք անկախ կը հռչակէ (884): Այսուհանդերձ, մտաւորապէս կէս դար եւս, Բագրատունեաց թագաւորութիւնը կը ստիպուի մաքառիլ արաբ էմիրութիւններու դէմ, մինչեւ վերջնական ազատագրումը: Ժ. դարու սիրիքներն է, որ շնորհիւ Աշոտ Բ. Երկաթի կամօրին, փոքրիկ Հայաստանը իր անկախութեան կը ափրանայ: Անշուշտ սա ամբողջական Հայաստանը ներկայացնելէ շատ հեռու էր, քանի զանազան աւստապետութիւններ կ'ապրէին կեդրոնական իշխանութենէն բոլորովին անկախ, ենթակայ արաբական եւ բիզանդական ազդեցութեանց:

Այսուամենայնիւ, երկիրը անուաղն մէկուկէս դար խողաղ շրջան մը ապրելով, գիւղատնտեսութիւնը, արհեստադործութիւնը եւ առեւտուրը մեծապէս զարգացան:

Թ. - ԺԱ. դարերու շրջանին է որ հին Նախիջևանը, Դուինը, Վանը, Կարինը մասնաւոր կերպով կը զարգանան: Կը հիմնուին նոր քաղաքներ՝ Ինչպէս Անին, Արծնին, Կարսը, Արճէլը, Խլաթը, Բերկըն, Ոստանը, եւայլն:

Անին է. դարէն իբր ամրոց զոյութիւն ունէր արդէն: Ժ. դարու կէսի վերջն է որ Բագրատունեաց Թագաւորութիւնը Կարսէն հոն կը փոխադրէ իր գահը: Նոր մայրաքաղաքը արագօրէն կ'անի եւ կը զարգանայ եւ ԺԱ. դարուն արդէն իսկ 10.000 տուն եւ 100.000 բնակիչ կը հաշուէ:

Անիի մէջ է որ Բագրատունիք կը կառուցանեն կրօնական ամենաշքեղ կոթողները: Բագրատունիք շին յաջողի սակայն պատմական Հայաստանը բոլորովին իրենց մականին տակ աննկ: Վասպուրականի, Վանադի, Սիւնիքի եւ Լոռիի մէջ կը կազմուին աւատակետական կիսանկախ իշխանութիւններ, որոնք շատ անգամ արարներու եւ բիւզանդացիներու մեքենայութիւններու զոհ կ'ըլլան, դաւելով կեղծական իշխանութեան դէմ. այսուհանդերձ, բագրատունիներու խիստ կարճ շրջանին է որ Հայաստան իր պատմութեան ամենահրաշայի շրջաններէն մին կ'ապրէ: Անիի մէջ է որ կը զարգանան արուեստի բոլոր ճիւղերը՝ Թատրոն, երաժշտութիւն, մանրանկարչութիւն, ի մասնաւորի ճարտարապետութիւն:

Բագրատունեաց Թագաւորութենէն զուրս՝ մասնաւոր կերպով կ'անի եւ կը զարգանայ Սիւնեաց աշխարհը: Սիւնեաց վարպետներն են որ առաջին անգամ կոթողային շինարարութեանց կը ձեռնարկեն: Սիւնեաց ճարտարապետներն են որ հայ ճարտարապետական արուեստի վերազարդման ուսովերաները կ'ըլլան:

Ամէն երկիր իր ճարտարապետական կառուցուածքը, մասնաւոր կերպով իր զսգը գտնուած ատաղձին կը պարտի, նոյնիսկ պիտի ըստի՝ իր անմիջական շրջանակին մէջ գտնուած շինանիւթերուն: Շատ հաւանօրէն, եթէ Ակրոպոլիսի ճիշդ ստորուր մարմարի հրաշալիօրէն մաքուր հանքը չզընուէր՝ հոն զոյութիւն ունեցող յուշարձաններէն եւ ոչ մէկը կը շինուէր: Իսկապէս անիմաստ է հեռաւոր երկիրներէ ատաղձ փոխադրել, որքեւէ շինութեան համար, նոյնիսկ եթէ անիկա ըլլայ Թագաւորական պալատ մը: Սիւնիքի մէջ տուֆը հարուստ է ըլլալով՝ զործածուած է պալալթը, որ առատօրէն կը գտնուէր երկրին մէջ, եթէ զերպուածով շինութեան մը մօտերը տուֆը գտնուէր, պալալթին հետ խառն կը գործածէին, ինչ որ տարբեր հմայք մը կու տար շինութեան:

Սիւնեաց ճարտարապետները, օգտուելով պալալթի բացառիկ տոկոսունութենէն, կը յղանան սլաքածու կամարը, իսկ եկեղեցիներու ասնիքը, փոխան կարմիր կղմինտրի, պալալթի սալերով կը ծածկեն:

Սիւնիքի մէջ է դարձեալ որ շոքս կեղծական օրհներէն կազմուած քառակուսիէն բոլորակ կամ բազմանկիւն դմբէթակիթ Թմբուկին փոխանցումով, պարսոյ մնացած շոքս անկիւնները լեցուած են շեփորներով (trompes), ինչ որ աւելի կայունութիւն կու տայ դմբէթին: Մինչդեռ անապատի (pendentif) - կորացած եռանկիւն - դործածութիւնը կրնար զանազան դժուարութիւններու տեղի տալ, մանաւանդ երբ տեղւոյն վրայ կը պահուէին մասնազիտացած արհեստաւորներ:

Սիւնեաց ճարտարապետները իրենց աստիճան քայլերը կ'անեն ընդօրինակելով Ե. եւ Ջ. դարերու շատ պարզ շինութիւնները, օրինակ՝ Հայրապետները:

ԱՂԹԱՄԱՐ

Ժ. դարու Արծրունեաց տոհմի մատենագիր Թովմա Արծրունի հետեւեալ կերպով կը նկարագրէ Աղթամարը. — «Հրաշակերտ, սեղանակերտ գորդարուած բարձրաբերձ լայնամիտ բուրգերով եւ վերամբարձ աշտարակներով, որոնք իրենց ներսը ունին խորանանձան գահոյկներ»: Պատմիչը, մանրամասն նկարագրելով պալատի ընդհանուր կազմուածքը, կ'ըսէ՝ թէ տաճարին եւ շրջակայ պալատներու շինութեան կը մասնակցէին բազմաթիւ անուանի վարպետներ, հրաւիրուած երկրին գանազան կողմերէն: Աշխատանքներու ընդհանուր ղեկավարը եղած է Մանուէլ ճարտարապետը՝ «Այր լի իմաստութեամբ եւ գորտր ի գործս»:

Թովմա Արծրունի, շարունակելով իր պատմութիւնը, հետեւեալ կերպով կը նկարագրէ Խնջոյցի տաճարը. — «40 կանգուն լայնութեամբ, 40 երկարութեամբ եւ 40 բարձրութեամբ: Պատերու հաստութիւնը եզած է երեք քայլաչափ առանց սիւնի: ... Կամարակից խորամներ, գեղապատոյց անկիւններ եւ լուսանախնայ, սկիզբառք եւ երկնայարկ գմբէթներ, որոնց եթէ որեւէ մէկը ուզէր մայիլ՝ մալս թագաւորը պատուելու համար, յայրը գլխէն վար պէտք է առնէր եւ ապա պարանոցը տանջելով, հազիւ թէ կը կարողանար նշտարիլ զմագամ գեղեցկութիւններու կերպարագրութիւնները»: Իսկ զալով որմնակարներուն, պատմիչը կ'ըսէ. — «Կերեւի նազելի մալսութեամբ բազմած արքան, իր շուրջն ունենալով լուսատեսակ պատանիներ, նրանց հետ գուսաններու խումբ կար, զարմանքի արժանի ազգական խաղը, սուտարարտիկներու խումբը եւ ըմբշամարտիկներու մեծամարտը, այնուհետեւ առիւծներու եւ այլ զագաններու խմբեր, պէս-պէս պանուսանքներով գորդարուած թռչուններու երամակներ», եւայլն, եւայլն:

Տաճարին երկրորդ զոնները, փայտէ, ծածկուած էին զարդաքանդակներով, որոնք երբ գոցուէին, պալատին ընդհանուր կազմին հետ կը ցուցաբերէին ամբողջական պատկեր մը:

Կղզիին բազմաթիւ շինութիւններու զարդը պալատական եկեղեցին՝ Ս. Խաչն էր, գործ՝ Մանուէլ ճարտարապետի, կառուցուած՝ 915-925 թվերու ընթացքին: Ըստ անոր յատակագծային կազմուածքին, անիկա ներքենապէս շատ կը մօտենայ Հռիփսիմէի, իսկ արտաքինապէս Արթիկի: Ընդհանուր կառուցուածքը պսակուած է, ներսէն շրջանակաձեւ, իսկ արտաքինէն 16 կողմ ունեցող լայնամիտ թմբուկով:

Աղթամարի Ս. Խաչի ամենաուշագրաւ մասը արտաքին շատ հարուստ հարթաքանդակներն են: Երեք դռներ կը շրջափակեն բոլոր ճակատները: Առաջին դռին կը ներկայացնէ Գազիկ թագաւորը, տաճարին մօտեւը ձեռքին, գէճը ունենալով Քրիստոս եւ Նոր կտակարանէն գանազան պատկերներ: Այս դռիէն վեր տեղաւորուած են բազմաթիւ գլուխներ: Աւելի վերը բերքաւառքի դռին է, ուր միաժամանակ կը տեսնէք որսի եւ խաղի տեսարաններ, եւայլն: Աղթամարի քանդակները, որոշակիօրէն կը մօտենան հին Հայկական եւ Սասանեան շրջանի քանդակներուն: Ներքինապէս ալ ծածկուած է խիստ հարուստ որմնակարներով, որոնց հետքերը մինչեւ այսօր բաւական յստակ կերպով տակաւին կ'երեւան:

Սիւնիքի մէջ կը գտնուի ուրիշ յուշարձան մը եւս՝ Բղենոյ նորավանքը (1058) որ, Աղթամարի նման, եւ ոչ պակաս վարպետութեամբ, զարդարուած է բազմաթիւ քանդակներով:

Երկար կեանք չունեցաւ Վասպուրականի Թագաւորութիւնը, ԺԱ. դարու քսանական թուականներուն, անիկա դարձաւ բիւզանդական կայսրութեան մէկ շահբ եւ շատ չանցած հոն հաստատուեցան ուրիշները:



Ժ. դարէն սկսեալ, աւատապետական իշխանութիւնները հետզհետէ զարգանալով, կը բաղմապատկեն համապատասխան ամրոցներ: Ամէն ամրոց իր թեքնիք դժուարութիւնները ունէր: Ամէն տեղ, ամենակարեւորը ջուրի հարցն էր, ոչ միայն խաղաղ ժամանակներուն, այլ մասնաւորապէս պատերազմներու ժամանակ: Հետեւաբար, ամէն ամրոց, ժայռերու մէջ փոռուած բազմաթիւ ջրամբարներով կ'օժտէին. բայց որովհետեւ ջրամբարներու ջուրը կրնար շուտով սպառիլ, զազտիւ ճամբաներով հեռաւոր դէտերէ դէպի այդ ջրամբարները ջուր կը հասցնէին:

Շատ Ֆետաքըրբական է տեսնել, թէ ինչպէս ամէն ամրոց իր բազնիքը ունէր, օտտուած տաք եւ սպաղ ջուրով եւ տաք օդով:

Դարձեալ Ժ. դարուն է որ հայ կղերականներ, բիւզանդիոնէն հարածուելով, հայրենի անտիկ կէտերու վրայ կը շինեն զանազան վանքեր: Այդ շինանին է որ կառուցուած են Սանահինը, Հոռոմոսը, Կեջառիսը, Մակարականքը, Հաղարծինը, եւայլն: Ուշագրաւ կէս մըն է այն պարագան, որ բոլոր այս ճարտարապետական կառոյցները, առաւել կամ պակաս, է. դարու յուշարձաններու վերածափումներու արդիւնք են:

Ա Ն Ի

Անին Ե. դարուն Կամսարականներու մէկ ամրոցն էր: Թ. եւ Ժ. դարերուն է որ աստիճանաբար այնքան կը զարգանայ որ՝ Աշոտ Գ. Բագրատունի, իր արքունիքը Կարսէն Անի կը փոխադրէ: Անիի ուսումնասիրութեան գործը կապուած է Ն. Մառի եւ Թորամանեանի: Մասնաւոր կերպով Թորամանեանն է, որ տաք տարի շարունակ, ի գին ահագին զրկանքներու, բոլոր կանգուն մնացած յուշարձանները չափազերելով, ներկայացուցած է գիտական աշխարհին: Փրոֆ. Ստրշիկովսկի իր «Die Baukunst der Armenier und Europa» երկհատոր պատկառելի հրատարակութիւնը (1918) Թորամանեանին կը պարտի:

Յատակազոծային կառուցուածքով Անին միջնադարեան յատկանիշներով օժտուած քաղաք մըն է: Մասի պեղումներուն շնորհիւ է որ այսօր մենք ունինք Անիի յասակ մէկ յատակագիծը, իր պլաններով, բերդերով, եկեղեցիներով, փողոցներով եւ իր համաբաւար ջրաղիներով, որոնց կաէ խողովակները դրուած էին քարէ առուակներուն մէջ: Քաղաքի պարիսպներուն երկարութիւնը մօտաւորապէս 2500 մետր է, չըջապատուած՝ ջուրով լեցուն իրամօլ: Կար նաեւ Թագաւորական պալատը, որ ըստ պատմիչներու «Ոսկեզօծ սրճանկարներով զարդարուած էր»: Այս բոլորէն մեզի հասած են միայն շատ ընչին մնացորդներ: Պալատին հիւսիսային մու-

սին մէջ տեղաւորուած էր բաղնիքը, օժտուած՝ ջուրի երկաթէ խողովակներով:

Ժ. Բ. դարու վերջերը, երբ սելևուքեան հորդանները երկրէն դուրս կը շարժուին, աշխատանքի եւ ստեղծագործութեան ծարաւի ժողովուրդը կ'անցնի այնպիսի եռանդուն աշխատանքի, որ քիչ ժամանակուայ մէջ Անին կը վերագտնէ իր նախկին փառքը: Անոր փողոցները կը լիցուին մէկը միւսէն տելի փառաւոր պլաստներով եւ եկեղեցիներով:

Պարոնի պարտ կոչուած կառուցուածքը եռայարկ լինութիւն մըն է, որ իր հարուստ, զարդամոթիֆներով եւ սքրիշ ալյուրան նորութիւններով կարեւոր տեղ մը կը զբաւէ հայ ճարտարապետութեան մէջ: Մասնաւոր կերպով աչքի կը դարնեն քարաւան-սերայները, կամ ինչպէս հեղինակը կը կոչէ՝ հիւրատունները. իրաւ է, ներքնապէս շատ պարզ եղած են, բայց արտաքնապէս անոնց շքամուտքերը այնքա՛ն հիանալիօրէն մշակուած էին, որ ոչ մէկ կերպով վար կը մնային մեծատուններու պլաստներէն: Բնակելի բազմամարդ թաղամաս մըն էր նաեւ Անիի ժայռափոր մասը, մասնաւորապէս բնակուած՝ ժողովուրդի պահաս բախտաւոր դասակարգէն:

Վաճառականութեան անընդհատ զարգացումը խթան մը կ'ըլլայ նորանոր կամուրջներու եւ ճամբաներու շինութեան: Ջրափի կամուրջը, որ մէկ հասիւ թէ մէկ քանի խլիտկանք կը մնան, 30 մ. թր թոփէք ունեցող կեդրոնական կամար ունեցած է:

Առանձնապէս շատ հետաքրքրական է Անիի ստորերկրեայ մասը: Ի՞նչ քաղաքի տակը գտնուած են, հարիւրաւոր մեթր երկարութեամբ, արուեստական քարայրներ, ուր մեծ բաղնիքներ կրնային տեղաւորուիլ: Կ'երեւի, ընդհանրապէս պարսկապէս կը շարժուէր զուրս բնակող ժողովուրդը, վասնզի պահուած, հոն կը պատսպարուէր: Մտաւայ գիւղերը բնակող գիւղացիները այս ստորերկրեայ անցքերը «կիտէն կիլմէզ» կ'անուանէին: Ըստ այդ գիւղացիներուն՝ իբրեւ թէ ստորերկրեայ ուղի մը կայ, որ Ախուրեան գետի տակէն միւս փոքր անցնելով եւ աստիճանաբար ձգուելով դէպի վեր՝ դուրս կու գայ Անիի դիմացը գտնուող փոքրիկ լեռան վազաթը, որ շրջակայ բլուրներէն վեր տերապետող գիւղք մը ունի:

Անիի պարսկապէսը հայկական ամրոցաշինութեան գլուխ-գործոցներ են, զորս կարելի է գասել միջնադարեան ռազմական ճարտարապետութեան լաւագոյն օրինակներու շարքին:

Հայկական ճարտարապետութեան պատմութեան մէջ՝ Անին յայտնի է իբրեւ կրօնական կառուցներու նշանաւոր կեդրոն:

Երբ Մմբատ Թաւաւոր իր զահը Անի կը փոխազրէ, կաթողիկոսը եւս հոն կը փոխադրուի, եւ, 989-ին, Անիէն ոչ շատ հեռու, Արգիշայի մէջ Տրդատ ճարտարապետը կը կանգնէ հոյակապ կաթողիկոսարանը, յարակից տաճարով:

ԱՆԻԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԸ

Հայկական եկեղեցիներու վիճաւոր յատկանիշներէն մին, եթէ ոչ ամենազինաւորը, թմբուկը եւ դժբէթը շրս անջատ սիւններու վրայ բարձ-

բանալով ներդաշնակ տմբողջութիւն մը կը կազմէին: Այնուհետեւ դմբէթին սրամաղիծն ալ իբրեւ «ճօտիւլ» անելով, մնացեալ մասերու ճշգրիտ շափերը կը ստացուէին, սակայն, նոյնիսկ է՝ դարուն հայ ճարտարապետները կ'անդրադառնան, որ կառուցողական այս մեթոտը իրենց առջեւ դժուար հարց մը կը դնէր, որ է՝ անբաղձալի շատ խոշոր արահ մը, որուն աշխատն ալ պէտք չկար: Ուրիշ կէտ մը եւս — շորս կեդրոնակով սիւները արդեւ կ'ըլլային, որովպէս ներքայ բոլոր հաստացեալները անարգել եւ անխափր իրենց աչքերով արարողութեանց հետեւէին, որով՝ կեդրոնական սիւները հիւսիսային եւ հարաւային պատերուն ծօտեցնելը անհրաժեշտութիւն մըն էր:

Ահա ոճական այս նոր ուղղութիւնն է, որ Անիի մայր եկեղեցիին մէջ, իբ լիակատար արտայայտութիւնը կը դտնէ, եւ որքան որ անիկա իբ արտաքին կառուցումաճաղ շատ կը ծօտեհայ է. դարու զանազան կառուցումաճանրու, ինչպէս Բագաւան, Մրէն, Եւայն, եւ սակայն ներքնապէս բոլորովին կը փոխուի:

Տրդատ ճարտարապետ Անիի մայր եկեղեցիով հայկական ճարտարապետութեան պատմութեան մէջ նոր դարադրուխ մը կը բանայ:

Մօտաւորապէս երկու հարիւր տարի վերջն է որ Եւրոպայի մէջ նորնանման շինութիւններ կը սկսին երեւիլ: Ռօմանականը եւ վերջապէս կոթականը:

**ԳԱԳԱՄԵՆ Ս. ԳՐԻԳՈՐ**

